This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

معارف نظارت جلیله‌سنك فی ۱۳ مایس سنه ۳۱۱
تاریخلو ویکرمی نومرولی امرنامه موجبنجه طبع اولنمشدر

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍԻ Ս. ՇԱՆՇԵԱՆՑ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1879

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՊԻՍԿՊԷՍԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

« Հաւատոյի վերայ եւ խոստեցայ ».

Բ. Կրն. Դ. 13.

Եթէ ոք կամի զինի՛ իմ գալ՝ ուրացցի զանձն։ եւ առցէ զխաչ իւր՝ եւ եկեսցէ զինի իմ։ Մտ։ ԺԶ։ 24։

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԿՐՕՆԻ ՎԵՐԱՅ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ

Կրօնն է Ճանաչել, սիրել զԱստուած եւ ծառայել նմա. վասն զի մարդ, առանց Ճանաչելու, սիրելու եւ պաշտելու զԱստուած, կարող չէ հանգիստ եւ երջանիկ լինիլ (1)։

Կրօնն է գործնական գիտութիւն, որ Աստուծմէ հեռացած մարդը կրկին կը մօտեցնէ, կը կապէ և նորա հետ կը միաց՝ ընէ (2)։

---

(1) Կրօն բառը՝ ԼԻՒ բառէն կը ծագի. այն նշանակութեամբ որ զԱստուած Ճանաչելն մի հզօր ցանկութիւն և անգուլ փափաք է մարդոյ մէջ. որ կրնտիպէ որոնել զԱստուած, Ճանաչել. սիրել և ծառայել նմա։

(2) Եւրոպայի ազգաց լեզուաւ ԼԻՐՕՆ բառը ՐԵԼԻԳԻԱ կ՚ասուի. չէ՝ է մասնիկ մինչ. որ կրկնումն կը նշանակէ. ԼԻՊԷԼ՝ կը նշանակէ կապել, իսկ կապել՝ կը նշանակէ երկու հեռաւորը միացնել։

Կրօնը կ'ուսուցանէ թէ մեղքը սրբութեան հեռացուցած է զմեզ Աստուծմէ, եւ թէ միայն հնարքով կամ ճանապարհով կարող ենք մօտենալ Աստուծոյ եւ հաշտուիլ նորա հետ։ Բայց կրօնի լոկ ուսումն կամ իմացումն անպտուղ կը լինի եւ աւելի դատապարտութիւն կը բերէ մեր գլխոյն, եթէ գործով եւս յոյց չը տանք մեր իմացածն ու սովորածը։ Միայն կրօնն իմանալով՝ մեք չենք միանար Աստուծոյ հետ, այլ երբ կը սիրենք եւ միանգամայն կը հնազանդիմք նմա, «Եթէ զայս գիտէք, երանելի եւս էք՝ եթէ առնիցէք զայս»։ Յովհ. ԺԳ. 17։

Ուրեմն՝ անշուշտ պէտք է գործ դընեմք թէ՛ կրօնի տուած եւ ուսուցած հնարքներն, եւ թէ՛ այն օգնութիւններն, զոր միշտ Աստուած կը տայ մեզ, մեղքէ եւ դատապարտութենէ ազատուելու համար։ Պէտք է հնազանդիմք Աստուծոյ մեր Հոգւոյ ամէն զօրութեամբ — սիրեմք զԱստուած սրտով, հաւատանք նորա ճշմարտութեանց՝ մտքով, եւ հնազանդիմք նորա պատուիրանաց՝ կամքով, եւ կատարեմք յօժարութեամբ։

Կրօնն է մարդոյ համար ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ

ԳԻՏՈՒԹԻՒՆ. Վասն զի՝ կայ Աստուած ամենակարող, ամենակատար, արարիչ, Տէր երկնից և մարդոյ առանց նորա մօտենալու կարող չէ երջանիկ լինիլ։ Վասն զի՝ միայն Աստուծոյ մէջ կարող եմք գտնել հոգւոյ հանգստութիւն, սրտի խաղաղութիւն, լուսաւորութիւն, զօրութիւն, միխթարութիւն, օգնութիւն եւ յոյս, որոց մեք միշտ կարօտ եմք մեր բովանդակ կենաց մէջ. առաւելապէս մեր նեղութեանց մէջ եւ մանաւանդ մեր մահուան մերձենալու ժամանակ։ Ուստի՝ կրօնի ուսումն ամենէն գլխաւոր և ամենէն կարեւոր գիտութիւնն ու պարտաւորութիւնը պէտք է լինի մարդոյ համար։

Կրօնի ուսումն մանկութենէ պէտք է սկսուի, վասն զի՝ մարդ ամեն հասակի մէջ եւս կատարելու պարտաւորութիւն ներ ունի։ Մարդոյ բոլոր կեանքը պէտք է ընծայ լինի Աստուծոյ։ "Եւ յիշեա զարարիչն քո յաւուրս մանկութեան քոյ։ Ժող. ԺԲ. 1։ Մարդ օր ըստ օրէ պէտք է աճի և զօրանայ սրբութեան մէջ։ Օր ըստ օրէ պէտք է աւելի մօտենայ Աստուծոյ։ "Աճեցէք շնորհօք և գիտութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոս

սին »։ Բ. Պետ. Գ. 18։

Գլխաւոր ՀԻՄՆ ԿՐՕՆԻ է Աստուած, այսինքն գոյութիւնն Աստուծոյ, որ գոյ Աստուած, հոգի յաւիտենական և պատճառ ամենայնի, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի։ Ուրեմն՝ ով որ կը մտածեսցայ Աստուծոյ, պէտք է հաւատայ, որ Նա՝ է։ «Հաւատալ արժան է այնմ՝, որ մերձենայ առ Աստուած՝ թէ է Աստուած »։

Աստուած իւր գոյութիւնը տպաւորած է մարդոյ Մտքի մէջ, Խղճմտանքի մէջ եւ իւր Խօսքի մէջ։

Մտքը կը հաստատէ, որ կայ մի Ընկերնապատճառ բոլոր արարածոց. վասն զի ոչ ոք կարող չէ ինքն իրեն՝ կեանք տալ։ Կը հաստատէ միտքն, որ այս Ակզբնապատճառն Հոգի է, վասն զի կան հոգեւոր արարածներ։ Որովհետեւ ոչ ոք չ'է կարող տալ ուրիշին այն կատարելութիւնը, ինչ որ ինքն չունի։ Ուրեմն կայ մի հոգեւոր Ակզբնապատճառ ամեն արարածոց և ինքն է անակիզբն և անվախճան, այսինքն յաւիտենական։

Միտքը՝ տեսնելով աշխարհի կատարեալ կարգը, որ նշան է ամենիմաստութեան, ամենակարողութեան և ամենա-

բարութեան՝ կը խոստովանի, որ կայ մի պատճառ հոգեւոր եւ ամենակարող, որ ստեղծած է ամենքը։ Այս դատողութիւնն այնչափ պարզ է և յայտնի ամենայն մարդկան, որ բնաւ մեկնութեան կարօտ չէ։ Աւրբ Գիրքն եւս կը հաստատէ մտքի այս խոստովանութիւնն Աստուծոյ գոյութեան վերայ։ «Գիտութիւնն Աստուծոյ յայտնի է 'ի նոսա, այսինքն 'ի հեթանոսս։ Քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա։ Զի աներեւոյթք նորա 'ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ ստեղծանին, այսինքն է մշտնջենաւորութիւն և զօրութիւն եւ աստուածութիւն նորա, զի ոչ գտանիցեն ամենեւին տալ պատասխանի»։ Հռոմ. Ա. 19—20։ «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն։ Օր աւուր բղխէ զբան և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն։ Ոչ են բանք և ոչ են խօսք որոց ոչ լսին ձայնք նոցա։ Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա եւ մինչեւ 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա»։ Սաղ. ԺԹ. 1—6։

Այսպէս ահա մեր միտքն կ'իմացնէ թէ աշխարհի պատճառն է Հոգի յաւի

ունական եւ ամենակարող։

ԽՂՃՄՏԱՆԹՆ է հոգւոյ մի այնպիսի զօրութիւն, որ մեզ կը հասկացնէ մեր պարտաւորութիւնը և նոյնպէս կը զնուշ զանեմք բարին՝ չարէն։ Նա կը տայ մեզ հաստատութիւն եւ նեղութիւն, կը լցուցանէ մեր սիրտը երկիւղով և յուսով, ղջմամբ և քաջալերութեամբ։ Հոգւոյ այս ներքին զօրութիւնը, զոր կ'անուանեմք խղճմտանք, կարող է բացուիլ և լուսաւորուիլ հոգեւոր սնունդով։ Բայց սնունդը երբէք չէ կարող ստեղծել զայն։ Ինչպէս որ մարդոյ միտքն ընդունակ է կատարելագործուելու և լուսաւորուելու, բայց ինքն պտուղ չէ աննդեան, նոյնպէս և խղճմտանքը։ Աղաթէ ոչ, զուր կը խօսէին մարդոյ հետ ճշմարտութեան վերայ, եթէ խղճմտանքը ծնուած չը լինէր մարդոյ հետ։ Սորա ապացոյցն մեք կը տեսնեմք, որ ամենայն հասակի, ամեն աստիճանի, թէ՛ լուսաւորեալ և թէ՛ կոյր մարդիկ, ամեն աշխարհի և ամեն վիճակի մէջ, միշտ կը լսեն խղճմտանքի ձայնն եւ ոչ մի կերպով չէն կարող լռեցնել և կտրել այս ձայնը։

Խղճմտանքը ծնունդ չէ նոյնպէս ոչ երկիւղի եւ ոչ հաստատութեան մարդկան։

Վասն դի, եթէ խղճմտանքը լինէր նոցա ծնունդ, այն ժամանակ միշտ կը համաձայնէր մարդկանց ամէն դատողութեանց հետ. բայց մեք կը տեսնենք, որ նա կ'ընդդիմանայ այն հաւանութեանն եւ դատողութեանը, որ համաձայն չէ իւր օրէնքին։ Մեք կը տեսնենք, որ նա կը տայ մարդոյն հանգիստ եւ քաղցր զգայողութիւն այն ժամանակ, երբ իւր պարտաւորութիւնը կատարելոյ համար կ'ընկնի մարդկանց ատելութեան և հալածանաց մէջ։ Նա (խիղճը) ցոյց կը տայ իւր ներգործութիւնը պտի և մտքի այն ծածուկ շարժողութեան վերայ եւս, զոր մարդիկ չ'են կարող ոչ տեսնել և ոչ դատել։ Նա ցոյց կը տայ իւր ներգործութիւնը նաեւ այն ժամանակ, երբ մեք մեր ամենամեծ իշխանութեամբ անվնասանգ ենք մարդկանց երկիւղէն և չ'ենք կարօտ նոցա հաւանութեան։ Նա ցոյց կը տայ իւր ներգործութիւնն այն ժամանակ եւս, երբ մահը կը մօտենայ մեզ աւուրին եւ նա այն դիտութեան մէջն է, որ ոչ աշխարհի վերայ յոյս ունի եւ ոչ մարդիկներէն երկիւղ։ Այսպէս կը հաստատուի ահա որ խղճմտանքը արտաքին իրողութեանց ծնունդ

է՛է, այլ յայն է Աստուծոյ, յայն Արարչէ։

Այս խղճմտանքը Աստուած տուաւ մարդոյն՝ ինչպէս մի ներքին վկայ իւր գոյութեան համար։ Սա կը յայտնէ մեզ, որ կախումն ունինք Աստուծմէ։ Սա կ'ուսուցանէ մեզ, որ Աստուած է տուիչ օրէնացս և մի օր պիտի դատի զմեզ այն օրէնքովք 'ի դատաստանի։ Սա կը յայտնէ, որ կը դատի Աստուած հեթանոսներն եւս, որոնք՝ թէպէտ անծանօթ են Աստուծոյ Խօսքին, բայց ունին խղճմտանքի օրէնքն իրենց սրտին մէջ գրուած։ «Հեթանոսք՝ որք զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրէնսայն գործեն. նոքա՝ որք զօրէնս ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք. որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց եւ յանդիմանել զմիմեանս 'ի խորհրդոց իւրեանց, կամ պատասխանի իսկ տալ յաւուրն, յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդկան, ըստ աւետարանիս իմոյ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի»։ Հռովմ. Բ. 14—16։

Ամենայն մարդիկ, որոնք իւրեանց միտքը և խղճմտանքը գործ են դրած բարութեամբ, խմացած են միշտ, որ կայ մի

գլխաւոր պատճառ ամենայն արարածոց, և ինչքան որ միտքը և իմաստնութիւնը կը լուսաւորին, այնքան եւս նոցա վկայութիւնը Աստուծոյ գոյութեան վերայ՝ աւելի և աւելի կը կենդանանայ և կը հաստատուի։ Ուստի՝ պարզ կ'երեւի որ Աստուած է տպաւորած այս վկայութիւնը ամեն մարդոյ մէջ, և ԱՄԵՆ ԱԶԳԵՐ, ամեն ժամանակ, ամեն տեղ ԽՈՍՏՈՎԱՆԱԾ ԵՆ և ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻՆ, որ կայ իրենցմէն Գեբրոգոն Դի Էսէ։ Այս աւանդութիւնն ուրնին նոքա առաջին մարդէն, որ ինքն ըստացաւ Աստուծմէն եւ աւանդեց իւր բոլոր որդւոց և սերնդոց։

Այսպէս վերեւ, որ Աստուած իւր գոյութիւնն յայտնած է մտքին և խղճմտանքին, բայց ամենապարզ և հաստատ վկայութիւնն իւր գոյութեան վերայ յայտնած է Աստուած իւր Խօսքով—Աստուածաշունչ Գրքով։

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔԸ կը տայ մեզ ծանօթութիւն աստուածային կատարելութեանց վերայ, նորա գործոց և խորհրդոց վերայ, և այնպիսի ծանօթութիւններ, որ միտքն ինքնին չէր կարող իմանալ և զարմացած է նոցա վերայ։ Սիրտն եւս

կը գտնէ Աստուծոյ Յայտնութեան մէջ բաւականութիւն իւր ամենայն կարօտութեանց. վասն զի՝ Աստուածաշունչ Գիրքը գրուած է Աստուծոյ հոգւով։ Նա այնքան հրաշալի է, ինչքան արարչագործութիւնը։ Արարչագործութեամբ յայտնեց Աստուած արարածին իւր յաւիտենականութիւնն, ամենակարողութիւնն և աստուածութիւնն, իսկ Սուրբ Գրքով՝ աւելի սարդ յայտնեց իւր կատարելութիւններն եւ մանաւանդ ամենագերագոյնն — Ապրած Սէր է։ Եւ որովհետեւ դիպչը, խղճմտանքը և համոյքն խոսքովանութիւնն ամենայն ապիտոյ կը հաստատեն Աստուծոյ գոյութիւնն, ուրեմն անզգայ և անմիտ պէտք է լինի այն մարդը, որ չը խոստովանիր Աստուծոյ գոյութիւնը. ինչպէս կ'ասէ Դաւիթ մարգարէն. «Ասաց անզգամն 'ի սրտի իւրում, թէ չ'կայ Աստուած»։ Սաղ. ԺԳ. 1։

Մարդ այն ժամանակ աւելի հաստատ վկայութիւն կ'ունենայ Աստուծոյ գոյութեան վերայ, երբ անդադար կ'որոնէ զԱստուած եւ կը մտածէ նորա օրինաց վերայ, ինչպէս կ'ասէ Դաւիթ մարգարէն. «Այլ յօրէնս Տեառն են կամք նորա՝ յա

ընկնս նորա խարհեցի նա 'ի տուէ և 'ի գիշերի »։ Սաղ. Ա. 2։ Այն ժամանակ մարդ կը մնտենայ Աստուծոյ և Աստուած կը մնտենայ մարդոյն, երբ սրտով կ'որոնէ զԱստուած իւր սրտի մէջ, ինչպէս կ'ասէ Յակոբոս Առաքեալն. « Մերձեցարուք առ Աստուած և մերձեսցի առ ձեզ »։ Յակ. Դ. 8։

Ուրեմն՝ ամենէն ճշմարիտ եւ հաստատ ճանապարհն ճշմարիտ կրօնի ճանաչողութեան համար՝ է Աստուծոյ Յայտնութիւն կամ Սուրբ Գիրքն։

Ապուածային Յայտնութիւնն է այնպիսի ճանաչողութիւն, որ Աստուած տուած է մեզ իւր ընտրած մարդիկներով։ Նովաւ կը լուսաւորին և կը հաստատուին այն ճշմարտութիւններն, ինչ որ կ'ուսուցանեն մեզ մեր միտքը և խղճմտանքը։ Նովաւ (Յայտնութեամբ) կը հաստատուին այնպիսի բաներ, որ մեր միտքն ինքնին չէր կարող գտնել, չէր կարող իմանալ՝ թէ ինչ է հարկաւոր մարդոյն՝ Աստուծոյ մօտենալու համար և ինչպէս կարող է հաշտուիլ Նորա հետ։ Պօղոս Առաքեալն կ'ասէ. « Բազում մասամբ և բազում օրինակաւք կանխաւ խօսեցաւ Աստ-

ուած ընդ հարան մեր մարգարէիւք, իսկ
'ի վախճան աւուրցս այսոցիկ՝ խօսեցաւ
ընդ մեզ որդւովն իւրով». Եբր. Ա. 1—2։
Եթէ մարդ պահէր առաջուան սէրն՝ կա-
րող էր ճանաչել այս երկու մեծ ճշմար-
տութիւնն, այն է Գոյութիւն Աստուծոյ և
Անմահութիւն հոգւոյ. թէպէտ և նորա ճա-
նաչողութիւնն այնքան կատարեալ չ'էր
լինիլ այս մեծ ճշմարտութեանց վերայ։
Վասն զի՝ միայնը հեռանալով Աստուծմէ
խաւարեցաւ եւ դարձաւ անընդունակ
դաստիարակ լինելու։ Այս պատճառաւ
էր որ հեթանոսները չար և խաւար դը-
րութեան մէջ էին, որովհետեւ չ'ունէին
աստուածային ցայտնութիւն, այսինքն
Սուրբ Գիրք, ինչպէս և կ'ասէ Պողոս Ա-
ռաքեալն. «Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր,
ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ, ո՛չ ապա-
քէն յիմարեցոյց Աստուած զիմաստու-
թիւն աշխարհիս այսորիկ»։ Ա. Կոր. Ա. 20։
Միայնը չ'էր կարող իմանալ երբեք, թէ՝
ինչպէս կարող է մարդ ազատուիլ մեղ-
քէ եւ դատապարտութենէ, որոց մէջ
ինքը կը գտնուի, եւ կամ ինչ հնարքով
կարող է ազատուիլ։ Ուրեմն՝ մեր մտքի
պարտաւորութիւնը կը մնայ միայն հաւ-

տատել թէ՝ աստուածային ճշմարտութիւններն ու յայտնութիւնները ճշմարիտ են, որուած են Աստուծմէ, և պէտք է քննել և պահել ինչ որ կ'ուսուցանէ Աստուածաշունչ Գիրքն, և քննելէն յետոյ խոնարհեցնել իւր զօրութիւնն Աստուծոյ զօրութեան, հաւատոյ ամէն բանի, ինչ որ կ'ուսուցանէ Սուրբ Գիրքը, գործ դնել և կատարել Աստուծոյ ամէն հրամաններն և չ'աշխատի լուծանել այն խորհուրդներն, զորս Աստուած աւանդեց մեզ խորհուրդ պահելու, ինչպէս ասած է. «Ծածուկքն Տեառն Աստուծոյ մերում՝ եւ յայտնիքն մեզ և որդւոց մերոյ»։ Բ. Օրէն. ԻԹ. 20։

Ուրեմն՝ մարդոյ միտքն պէտք է կենդանի հաւատով ընդունի այն ամենայն խորհուրդներն, զորս Ս. Գիրքը կը յայտնէ մեզ։ Վասն զի՝ այս աստուածային խորհուրդները կը գերազանցեն մարդոյ մտքէն և Աստուած ինքն պատրաստեց ասել մարդոյն այնպիսի բաներ, որ ուշ աչքով էր տեսած, ուշ մտքէն անցած և ուշ ականջովն լսած, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Զոր ակն ոչ ետես, եւ ունկն մարդոյ ոչ լուաւ, և'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց Աստուած սիրելեաց

իւրոց. Ա. Կոր. Բ. 9։ Մարդ պէտք չէ զարմանայ, որ Ս. Գրքի մէջ կան խորհուրդներ։ Արարչի եւ արարածոյ մէջ պէտք է լինի խորհուրդ։ Խորհրդով է, որ մարդ կը զանազանուի Աստուծմէ, այսինքն Աստուծոյ յայտնի է այն բանն եւ ունի այն զօրութիւնն, որ մարդոյ համար խորհուրդ է։ Ո՛չ թէ միայն աստուածային ուսումն, այլ եւ բոլոր մարդկանց ուսմունքներն լի են գաղտնիքներով։

Աստուածային յայտնութիւնները կը բովանդակին Աստուածաշունչ Գրոց մէջ, որ կը բաժնուի երկու — ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱՌԱՆ։ Առաջին յայտնութեան Մովսիսով եւ միւս մարգարէներով, որոնք դասաբերակ են Նոր Կտակարանի. իսկ Երկրորդն քարոզութեան առաքեալներով։ Երկուսն միասին կը բովանդակեն իրենց մէջ Պատմական, Բարոյական եւ Մարգարէական գրքերը, որոց անունն կ'ասուի Կանոնական. սխան զի՝ նորս մէջ կը յայտնէ Աստուած իւր կամքն եւ նոքա կը բաժանէ ամենուն իւր բարութիւնն ու ողորմութիւնը։

Հին Կանոնաբանն կը խօսի Աստուծոյ գործոց վերայ, Կրօնի զանազան դրութեան

վերայ՝ աշխարհի սկզբէն մինչեւ Փրկչի գալուստն, որ խոստացած էր 'ի սկզբանէ եւ յայտնած Եբրայեցւոց ազգին։ Այս փրկութեան ակնկալութիւնն և մասնակցութեան յոյսն, այս մեծ երանաւէտ Բանն՝ էր հաւատոյ նիւթ, մարգարէից մխիթարութիւն եւ ճշմարիտ աստուածապաշտից յոյս, ինչպէս կ'ասէ Ղուկաս աւետարանիչն. «Եւ էր այր մի յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սիմէոն և էր այրն այն արդար և երկիւղած և ակն ունէր մխիթարութեանն Իսրայելի եւ Հոգին Սուրբ էր 'ի նմա»։ Ղուկ. Բ. 25։

Նոր Կտակարանն կը խօսի և կը հաստատէ այն ամենայն, ինչ որ Աստուած Հին Կտակարանի մէջ խօսած է իւր գործոց և իւր կամաց վերայ, որ կատարուեցաւ խոստացեալ Բանով, այսինքն փրկութիւն մեր 'ի ձեռն Քրիստոսի։ Նոր Կտակարանն կ'անուանի Աւետարան, այսինքն աւետիք բարութեան։

Հին և Նոր Կտակարանը կը շինեն մի հաւատ, ինչպէս կ'ասէ Օգոստինոս. «Նորը Հնոյն մէջ ծածկուած է, Հինը Նորոյն մէջ բացուած»։ Հին Կտակարանը դասախօսակ էր Նորոյն, ինչպէս կ'ասէ Պօղոս.

«Այս օրէնքն դաստիարակ եղեն մեզ 'ի Յիսուս Քրիստոս, զի 'ի հաւատոյն արդարացուք»։ Գաղ. Գ. 24։ Նոր Կտակարանը լրիւ տուաւ մեզ այն ամենայն, ինչ որ Հինը թողուց մեզ ցանկալու։ Հին Կտակարանը միայն կը կոչէր մի ազգ, իսկ Նորն ամեն ազգեր դէպ 'ի փրկութիւն։ Նոր Կտակարանը չը դատեր զմեզ միայն մեր գործքով և չ'ասէր միայն—Արա՛ այս ե՞ ինչպէս», այլ Քրիստոսի խաչով կը խոստանայ ողորմութիւն և շնորհք Քրիստոսին հաւատացողներուն եւ մեղքէ զերծ ջացողներուն։ Նոր Կտակարանը չը մատնէր զմեզ մեր տկարութեան, այլ կը խոստանայ Հոգւոյն Սրբոյ օգնութիւնը մեր սիրտը նորոգելու և աստուածային օրինաց սէրը նորա վերայ թագաւորեցնելու, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքելոյն բերանով. «Այս է ուխտն, զոր եդից տանն Իսրայելի յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր, տաց զօրէնս իմ 'ի միտս նոցա, և 'ի սիրտս նոցա գրեսցից զնոսա և եղէց նոցա Աստուած և նոքա եղիցին իմ ժողովուրդ։ Եւ ոչ ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր, և իւրաքանչիւր զեղբայր իւր և ասիցեն ծանիր զՏէր. զի ամենեքեան

ծանիցեն զկս 'ի փոքրկանց մինչեւ 'ի մեծամեծս »։ Եբր. Ը. 10—12։ Նոր Կտակարանը չը բաւականանար խոստանալով երկրաւոր պատիժներ, այլ ունի յաւիտենական կենաց խօսք. « Պատասխանի ետ նմա Սիմոն Պետրոս, Տէր, առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս »։ Յով. Զ. 69։

Ուրեմն մեք եւս կարող եմք ասել Յովհաննէս Աւետարանչի հետ միասին, որ օրէնքը տրուեցաւ Մովսիսի ձեռամբ, իսկ շնորհքն և ճշմարտութիւնը (որոնք են նիւթ օրինաց) 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։ « Զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուաւն, շնորհք և ճշմարտութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն »։

Մինչեւ Ս. Գրքի գրուիլն աստուածպաշտութիւնը կը պահպանուէր ԱՒԱՆԴՈՒԹԵԱՄԲ։ Աստուած խօսած էր առաջին մարդոյ հետ և նորա խօսքն աւանդութիւն դարձաւ յետագայ սերնդոց համար։ Առաջին մարդն աւանդեց Աստուծոյ խօսքը նոցա, որոնք չէին լսած եւ այս պատճառաւ Ս. Գրքը ստացաւ պատմական յատկութիւն, որ մարդիկ միմեանց աւանդելով՝ կարողանային պահպանել

աշխարհիս մէջ աստուածպաշտութիւնը։ Աստուած հաստատեց նոյնպէս Զոհ, որոյ մէջ կը պարունակուէին աստուածպաշտութեան գլխաւոր ճշմարտութիւններըն, այսինքն Աստուծոյ գոյութիւնը, մարդոյ մեղաց տակ ընկնիլը եւ փրկութեան յոյսն։ Զոհ մատուցանելով կը խոստովանէին, որ կայ Գերագոյն Էակ, որուն կը նուիրէին զոհն. կայ յանցանք, որոյ քաւութեան համար կը նուիրէին. կայ յոյս, որ զոհով պէտք էր փրկութիւն լինի, և այլն։ Այսպէս կը պահպանուէր Աստուծոյ խոստացած փրկութեան աւանդութիւնը։ Այս աւանդութիւնը տուաւ Աստուած 'ի սկզբան Եբրայեցւոց ազգին, որոնք ընտրուած էին Աստուծմէ, և ապա նոյնպէս աւանդեց և Քրիստոնէից փրկութեան խորհրդաւոր աւանդութիւններ, զոր օրինակ Մկրտութիւնն, Հաղորդութիւնն և այլն։

Աստուածպաշտութիւնը կը պահպանուէր աւանդութեամբ մինչեւ զՄովսէս, և այս պատճառաւ մինչեւ 'ի Մովսէս ամեն մարդկանց կեանքն երկար էր, որ շատ ապրելով աւանդէին միւեանց Աստուծոյ խօսքը անփոփոխ։ Իսկ երբ Մովսէս գրեց

ոյն խօսքերն, այսինքն աւանդութիւն-
ներն, հաստատելով եւ լուսաւորելով
Հոգւոյն Սրբոյ ազդեցութեամբ, մարդոյ
կեանքը կարձացաւ և այնուհետեւ գրով
տարածուեցաւ Աստուծոյ խօսքը հեռա-
ւոր մարդկանց։

Աշխարհիս բոլոր գրքերը կարելի է
բաժանել երկու՝ Ապոստոլական և մարդկային։
Առաջին Աստուծոյ կամաց և մտաց յայտ-
նութիւնն է, որոյ վերայ տպաւորուած
է Աստուծոյ զօրութիւնը. իսկ երկրորդն է
մարդոց մտաց յայտնութիւնն, որոյ վե-
րայ տպաւորուած է մարդոյ տգիտութիւնը։

Մեր հաւատոյն եւ կրօնի Աստուա-
ծային Գրոց հիմունքը եւ էութիւնն է
Աստուածաշունչը կամ Ս. Գիրքը որ կը
պարունակէ իւր մէջ աստուածային ճշգ-
մարտութիւններ եւ որ գրուած է ներ-
գործութեամբ Սուրբ Հոգւոյն. ասկից
պարզ կ'երեւի որ Աստուծոյ Գիրքը
մարդկային հանճարի գործ չ'է։

Սուրբ Գիրքը պէտք է ունենայ երեք
գլխաւոր նշան — Ճիշդական, Պատմական եւ
Մարգարէական։ Նախ՝ պէտք է լինի Ճիշ-

ղական, այսինքն կանգնեցնող եւ պայծառացնող երկրի, ինչպէս կը տեսնենք, որ Աստուածաշունչն՝ ուր եւ ասրածուեցաւ, այն երկիրը լուսաւորուեցաւ։ Իսկ ընդհակառակն անքրիստոնէութիւնն անլոյս կ'առնէ զազգն և անպտուղ երկիրն, ինչպէս կը տեսնենք հեթանոսական երկիրները։ Երկրորդ՝ պէտք է լինի Պապական, այսինքն պատմութիւնը կամ աւանդութիւնն է մայր կրօնի, և այս պատմական անընդհատ կապը պարզ կ'երեւի Աստուածաշունչ Գրոց մէջ։ "Եղեւ լոյս ասաքէն մինչեւ Յովհաննու Յայտնութեան այս խօսքերը "Եւ տեսի երկին նոր և երկիր նոր ի մի մեծ շղթայ է, որով կը կապուի աշխարհիս սկիզբը միւս նոր աշխարհի սկզբան հետ։ Երրորդ՝ պէտք է լինի Մարգարէական.— Աստուածաշունչ Գիրքը Մարգարէութիւն է, որ այսօր եւս մեր աչքի առջեւ կը կատարուի։ Աստուած ընտրեց հնուց մի ազգ, որ պահպանէր աշխարհիս պատմութիւնն, այսինքն Աստուծոյ Ճանաչողութիւն. Նորա արարչագործութիւնն, մարդոյ մեղայ մեղ ընկնիլն և յոյսը, որով պէտք է հասնէր փրկութիւն մարդ-

կային ազգի։ Ահա սոքա են աշխարհիս պատմութեան նիւթը։

Աստուածաշունչ Գրոց Մարգարէութեան կենդանի նշանն է Եբրայեցւոց ազգը, որ մինչեւ ցայսօր եւս կը սպասեն փրկութեան։ Ի՞նչ բանի կ'ըսպասեն, քանի որ Աստուածաշնչի առաջին խօսքէն մինչեւ վերջինն կատարուեցաւ Յիսուսի Քրիստոսի վերայ։ Մինչեւ ցայսօր Եբրայեցիք ունին տակաւին իրենց ձեռքը բռնած այն Գիրքը, որ լի է մարգկային ազգի փրկութեան յուսով։ Այս Եբրայեցի ազգը քրիստոնէութեան համար նշան է անցած ժամանակի մարգարէութեան, եւ քրիստոնեայք նշան են ներկայ և սպառնի ժամանակաց մարգարէութեան, որոյ կատարումն կը տեսնեմք մեր աչքով Քրիստոսի այն խօսքէն, որ կ'ասէ. «Գնացէք, ես ընդ ձեզ եմ». և թէ «Քաջալերացարուք, զի ես յաղթեցի աշխարհի»։ Յով. ԺԶ. 33։ Այս երկու կենդանի նշաններն, այսինքն Եբրայեցիք և Քրիստոնեայք, որոնցմէ մինն անցած ժամանակի մարգարէութեան նշան է եւ միւսն սպառնի,

կը ճեռան մինչեւ աշխարհիս վերջն, եւ երբ անցեալ եւ ապառնի միասնան, այս երկուսն ի միասին կը վկայեն մարգկային վերջին ցեղին եւ սարգարէութեան կատարումն, և ինչպէս հին ազգն, նոյնպէս և նոր ազգը միասին կը սեսնեն աշխարհիս խառնակութեան քակտումն, այսինքն մարգկութեան վերջը։

Սուրբ Գիրքը գրուած է աստուածային հոգւով՝ բովանդակելով իւր մէջ աստուածային ճշմարտութիւններ և նորա հաստատութիւնն ապագային է եւ ոչ մարգկային։ Կը սեսնենք արդարեւ՝ որ Քրիստոնէութիւնը սարածուելուս աստուածային զարութեամբ և ոչ մարգկային հնարքներով։ Այս աստուածային զարութիւնն ի՛նքեւի ոյժու, որ Քրիստոնէութիւնն ունի Ա. Գերեզանցութիւն, Բ. Հրաշք, Գ. Մարգարէութիւն, և Դ. Միջոց փրկութիւն։

Սակայն՝ Գերեզանցութիւն. — Քրիստոնէական ուսման գերազանցութիւնն կ'երեւի այն գործոց մէջ, զոր մեզ կը պատմէ Ս. Գիրքը, այն է Աստուծոյ արարչագործ-

ծութիւնը, նորա հրաշալի նախախնամութիւնը, որով կը կառավարէ զաշխարհ, իւր ընտրած ազգն, Քրիստոնեաներն, իւր Եկեղեցին։ Կ'երեւի նոյնպէս այն ճշմարտութեանց մէջ, որոնք կ'ուսուցանեն մեզ Աստուծոյ կատարելութիւնները, մարդոյ պատուիրազանցութիւնն, փրկութեան խորհուրդը, մեռելոց յարութիւնը և այլն։ Կ'երեւի դարձեալ այս մեծ պատուիրանի մէջ. «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո»։ Մաթ. ԺԹ. 19։ Կ'երեւի վերջապէս Աստուծոյ ամենակարող օգնութեան մէջ, որ կը տայ մեզ, որպէս զի կարողանամք ազատուիլ փորձութենէ, տանիլ չարչարանաց և ցոյց տալ այնպիսի առաքինութիւն, որ մարդոյ կարողութենէն վեր է։ Սուրբ Գիրքն կ'ուսուցանէ մեզ այնպիսի կրօն, որ ոչ թէ միայն գերազանց է ամեն վարդապետութիւններէն, ինչ որ ուսուցած են աշխարհիս իմաստուններն, այլ բոլորովին նոր և շատ անգամ հակառակ մարդկային ուսման։ Ուրեմն պէտք է ասել, որ այսպիսի ուսումն չէ կարող լինիլ մարդոյ գործ, եւս առաւել՝ սահմանեալ ուսումն մարդկանց։

Երկրորդ՝ Հրաշք. — Որպէս զի հրաշքը

կարողանայ դառնալ հաստատութիւն կրօնի՝ պէտք է ունենայ նախ՝ այնպիսի գործքեր, որ յայտնապէս մեծ լինին քան մարդոյ զօրութիւնը. զոր օրինակ յարութիւն մեռելոց և այլն։ Երկրորդ՝ պէտք է լինի հաստատող այնպիսի ուսման, որ արժան է Աստուծոյ։ Եւ երրորդ՝ պէտք է լինի ժողովքի կամ բազմութեան մէջ, որ կարելանայ ունենալ վկայներ։ Այս ամեն նշանները մեք կը տեսնենք Քրիստոսի հրաշից մէջ։

Երրորդ՝ Մարգարէութիւն. — Մարգարէութիւնը կրօնի հաստատութիւն դառնալու համար պէտք է լինի նախ՝ մարգարէութիւն այնպիսի ապառնի բաներու վերայ, որ չ'է կարելի իմանալ ոչ ժամանակի հեռաւորութեամբ և ոչ այլ հանգամանքով, ինչպէս է գալուստն Քրիստոսի, հաստատութիւն Քրիստոնէութեան այս խօսքով. "Ես յաղթեցի աշխարհի։" և այլն։ Երկրորդ՝ պէտք է լինի սասա պարզ խօսքերով, որ չ'ունենայ երկու միտք և կամ մթութիւն։ Երրորդ՝ պէտք է լինի սուրբ կրօնի հաստատութեան համար. և Չորրորդ՝ պէտք է ունենայ իւր կատարումն։ Այս ամեն նշաններն, թէ՛ մարգ

գարէից գուշակածն Քրիստոսի վերայ և թէ Քրիստոսի ասածն Քրիստոնէութեան վերայ բոլորն ևս անթերի կատարուեցան։

Զորրորդ՝ Միջոց կամ Հնարք պարածուն. — Քրիստոնէութեան գործ դրած միջոցները բոլորն աստուածային են։ Քրիստոնէութիւնը պէտք է յաղթէր հեթանոսաց և Եբրայեցւոց մտաց կուրութեանը, նոցա խստասրտութեանն և անթիւ հալածանաց։ Եւ ահա Առաքեալները, որ պէտք է քարոզէին Քրիստոնէութիւնը, չունէին ոչ մարմնաւոր զօրութիւն, ոչ երեւելի ազգութիւն կամ տոհմականութիւն, ոչ վարկ, ոչ հարստութիւն, ոչ ճարտարութիւն, և ոչ հոգի կառավարութեան աշխարհի, բայց նոցա ձեռքով հաստատուեցաւ Քրիստոնէութիւնը։ Այս գործը անկարելի էր, եթէ Աստուած նոցա հետ չը լինէր։

Զ. Նայելով՝ որ Հին և Նոր Կտակարանը քարոզուած են զանազան ժամանակ և զանազան մարդիկներով, այնու ամենայնիւ նոցա վարդապետութեան հոգին մի է, և ուրեմն աստուածային։ Ինչ մարդիկ հաւատով ընդունած են Ս. Գիրքը, միշտ զգացած են նորա աստուածային զօ-

թութիւնը և գտած են նորա մէջ կեանք, հոգւոյ կերակուր, խղճի խաղաղութիւն, նեղութեանց համբերելոյ զօրութիւն, կենդանի յոյս յաւիտենական կենաց եւ ճաշակ, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Զի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զԱւետարանն, քանզի զօրութիւն Աստուծոյ է 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոց»։ Հռով. Ա. 16։ Մարդ, մարդկային գիրք կարդալով, երբէք չ'է կարող ստանալ այսպիսի հոգեկան վայելչութիւն և զմայլումն։

Որովհետեւ Սուրբ Գիրքն Աստուծոյ խօսք է, որով Արարիչն յայտնած է իւր կամքն, ուրեմն՝ ինչ այնպիսի մի լաւ բան կարող է լինիլ արարածի համար, ինչպէս ճանաչելն Աստուծոյ կամքը։ Ուստի ՀԱՐԿԱՒՈՐ է ամեն մարդոյ անպատճառ ուսանիլ Ս. Գիրքը, որոյ ուսումն ոչ թէ միայն մի իրաւունք է մարդոյ համար, այլ անհրաժեշտ պարտաւորութիւն, ինչպէս կ'ասէ Քրիստոս. «Քննեցէք զգիրս, զի նոքօք համարիք դուք ունիլ զկեանս յաւիտենականս»։ Յով. Ե. 39։ Այլ յորմէն Տեառն են կամք նորա, յորմէն նորա խորհեսցի նա 'ի տուէ և 'ի գիշերի»։ Սաղ. Ա. 2. Առաքեալները կը գրէին իրենց

թղթերն կամ ժողովքի և կամ անհատ մարդկանց, և կը պատուիրէին որ կարդան և այլոց եւս տան կարդալու։ Պարտաւոր է ուրեմն Քրիստոնեայն թէ՛ իւր գործքով և թէ՛ իւր խօսքով տարածել Աւետարանի ուսումն։

Ով որ կամի ուսանիլ Աստուծոյ կամքը՝ նորա համար Աստուածաշունչ Գիրքը շատ պարզ է։ Նա այնքան պարզ է, որ ամենքը կարող են ուսանիլ և գործ դնել, ուղեցոյց ունենալով Եկեղեցւոյ նախնի Սուրբ Հարքը իւրենց ջերմեռանդն խորհրդածութիւններով։ Քաւ լիցի ասել, որ Աստուած տուած է այնպիսի յայտնութիւն, յորմէ կախուած է մարդկային փրկութիւնը, և պարզ չ'է ամենի համար։ "Ամենայն Գիրք Աստուածաշունչք և օգտակարք, 'ի վարդապետութիւն են՝ 'ի յանդիմանութիւն, յուղղութիւն և 'ի խրատ արդարութեան"։ Բ. Տիմ. Գ. 16։ "Ճշդագ են բանք քո ոսկոց իմոց և լոյս տան շաւղաց իմոց"։ Սաղ. ՃԺԸ. 105։ "Ապա եթէ իցէ ծածկեալ աւետարանն մեր՝ 'ի մէջ կորուսելոցն է ծածկեալ"։ Բ. Կորն. Դ. 3։

Որովհետեւ Աստուածաշունչ Գիրքն

Աստուծոյ խօսքէ, ուրեմն պէտք է կարդամք նախ՝ Հեղութեամբ, զգամ՛ հարիւրոտրութեան ուսման, նորոգութեան եւ օգնութեան Աստուծոյ։ Երկրորդ՝ պէտք է կարդամք ուշ ուշով, պարտութեամբ հնազանդութեամբ յամենայն հոգւոյ, պատճառն որ կը լսեմք Աստուծոյ խօսքը, ինչպէս կ'ասէ. «Խօսեաց, Տէր, զի լուիցէ ծառայ քո»։ Ա. Թագ. Գ. 8. Երրորդ՝ պէտք է կարդամք սիրով, շնորհակալութեամբ, սրբութեամբ սրտի և Ջերմեռանդութեամբ։ Եթէ կը ցանկամք լուսաւորուիլ՝ պէտք է սրբեմք մեր միտքը և սիրտը ճանաչելով աստուածային ճշմարտութիւնները և ուսանելով այն ամենայն, ինչ որ խոստացած է Աստուած եւ ինչ որ արած է մեզ համար, և այս ամենը միայնելով կատարեալ հաւատքի հետ, պէտք է կատարեմք ամենայն սրտուէր, ինչ որ կը պահանջէ մեզմէն մեր հաւատն։ Չորրորդ՝ պէտք է կարդամք աղօթքով, որ Աստուած բանայ մեր սիրտն իւր հոգւոյ և ճշմարտութեանց համար, ինչպէս արած է իւր ընտրած մարդկանց։ Այսպիսի աղօթքով կը խնդրէր Դաւիթ մարգարէն, որ կարողանայ Աստուծոյ արդարութիւնը ճանաչել, ասելով. «Խոս-

տոված Եղէց քեզ, Տէր, յուզմութիւն սրտի իմոյ, որպէս ուստայց զկրաւունս արդարութեան քոյոյ։ Սաղ. ՃԺԸ. 7։ Եւ վերջապէս՝ պէտք է դառնամք մեր անձն և իմանամք թէ գործ դրուած եմք պղծեալք Աստուծոյ խօսքը, որով պէտք է մեզ դատի, թէ ոչ։

ՀԱՒԱՏՈՑ ՎԵՐԱՑ

ԱՌ ՀԱՅԱՐԱԿ

Աստուածաշունչ Գրոց մէջ կը տեսնեմք աստուածային գործքեր, ճշմարտութիւններ եւ մարդկային պարտաւորութիւններ։ Այս ճշմարտութիւններն, որոնք պէտք է դառնան հիմն Հաւատոյ և որով մարդ կարող է մտանել Աստուծոյ եւ փրկուիլ, հաւաքուած են միասին Հաւատոյ Հանգանակի մէջ։

ՀԱՒԱՏԱԼ ԱՌ ՀԱՅԱՐԱԿ՝ կը նշանակէ ընդունիլ մի քանի գործքեր կամ ճշմարտութիւններ արժանաւոր անձանց վկայութեամբ, երբ մեք ինքնին անձամբ չեմք կարող իմանալ և հաստատել։ Իսկ

կրօնի մէջ՝ հաւատքն կը նշանակէ ընդունել մեր տրտով այն աստուածային ճշմարտութիւններն, զորս Աստուած ինքն յայտնած է իւր Խօսքով — Աստուածաշունչ Գրքով։

Քրիստոնէական Հաւատոյ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՄՆ է Յիսուս Քրիստոս, որոյ վերայ կը խօսի բոլոր Աստուածաշունչ Գիրքը և կը կոչէ բոլոր մարդկութիւնն դէպ 'ի Նա, որոյ մէջ միայն կը գտնուի մարդոյ փրկութիւնը։

Որովհետեւ Աստուած խօսած է մարդոյ հետ և այն խօսքով բացած է նորա համար ճանապարհ փրկութեան, ուստի մարդ պէտք է բոլոր պտիւ և հնազանդութեամբ հաւատայ Աստուծոյ յայտնած ողորմութեանց, ապա թէ ոչ՝ անհաւատութեամբ կը զրկուի Աստուծոյ ողորմութենէն, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Առանց հաւատոյ անհնար է հաճոյ լինիլ Աստուծոյ»։ Եբր. ԺԱ. 6։ «Որ հաւատայ Որդւոյ՝ ընդունի զկեանս յաւիտենականս. եւ որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս»։ Յովհ. Գ. 36։ «Բայց մեք՝ ոչ եթէ երկմտութեամբ եմք 'ի կորուստ. այլ հաւատովք 'ի փրկութիւն

հոգւոց »։ Եբր. ժ. 39։

Ճշմարիտ հաւատը պէտք է ունենայ այս նշանները. — Ա. Պէտք է լինի Լուսաւոր, Բ. Հէզ, Գ. Հաստատ, Դ. Կենդանի, և Ե. Գործնական։

Մարդ պարտաւոր է իմանալ հաւատոյ ճշմարտութիւններն, և այն հաստատութիւններն, որոց վերայ հիմնուած են. վասն զի՝ առանց ճանաչողութեան՝ չը կայ հաւատ, չը կայ դատողութիւն։ Քրիստոնեայն պէտք է պատրաստ լինի, ինչպէս կ'ասէ Պետրոս Առաքեալն. «Տալ պատասխանի ամենայնի, որ խնդրիցէ զքեզ, որ է վասն յուսոյն ձերոյ». Ա. Պետ. Գ. 15։ Բայց այս եւս պէտք է ասեմք, որ մարդ կարող չ'է ունենալ հաւատոյ կատարեալ ճանաչողութիւն, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Քանզի փոքր 'ի շատէ գիտեմք և փոքր 'ի շատէ մարգարէանամք, այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր 'ի շատէս խափանեսցի». Ա. Կորն. ԺԳ. 9—10։ «Զի հաւատովք գնամք եւ ոչ կարծեօք»։ Բ. Կորն. Ե. 7։ Աստուածային յայտնութիւնները չեն կարող չը լինիլ մեզ համար փոքր 'ի շատէ սուրերով ծածկուած, որով իսկ կը պերազանցի այս

յայտնութիւնը մեր ոկար մնքէն, որ սովաւ պահէ զմեզ Աստուած Աշմարիա հեզութեան մէջ և փորձէ մեր հաւատարմութիւնը և մեր սէրը Աշմարտութեան համար։ Այս պատճառաւ ուրեմն՝ Աշմարիտ Հաւատը պէտք է լինի ինչպէս Լուսաւոր, նոյնպէս և Հեզ։

Լուսաւոր հաւատն, այսինքն հաստատուած անշարժ հիման վերայ, երբէք չը շարժուիր. ոչ ամբարիշտ մարդկանց թիւր և ծուռ դատողութիւններէն, ոչ նոցա չար գործքերէն և ոչ նոցա վատ օրինակներէն։ Հաւատալ հաստատ, կը նշանակէ ամենեւին չունենալ երկբայութիւն, որով լի է աշխարհ։ Հաստատ հաւատը կարող է հանդիպիլ դժուարութեանց և փորձանաց, բայց միշտ հաստատ է եւ յաղթող, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Ամրանացեալք և շինեալք 'ի նա և հաստատեալք 'ի հաւատս, որպէս ուսարուքն առաւելեալք 'ի նմին գոհութեամբ»։ Կող. Բ. 7։

Հաւատը Կենդանի կ'ասուի, երբ կը ներգործէ նա և կը շարժէ մեր միտքը և կ'ըմբռնէ մեր սիրտը։ «Զի՞նչ են հաւատք՝ եթէ ոչ յուսացելոց իրաց հաս-

սատուԹիւն և յանդիմանուԹիւն որոյ ոչն երեւին »։ ԵԲՐ. ԺԱ. 1։

Հաւատքը Գործնական կ'ասուի, երբ ունի այն ամենայն գործքերը, ինչ որ կը պահանջէ մեզմէն հաւատը։ Այս գործքերը կարելի է բաժանել երկու — նախ՝ Խոստովանութիւն հրապարակաւ, ինչպէս կ'ասէ Քրիստոս. « Ամենայն որ խոստովանիցի յիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինս է »։ Մատ. Ա. 32։ Այս հրապարակաւ խոստովանութեան հետ պէտք է և համարձակ տարածել Քրիստոնէութիւնը, եւ աշխատիլ ցոյց տալ ամէն պատահմանց մէջ, որ մեք կը պատկանիմք Քրիստոսի եւ նա է մեր կենաց պարծանքը։ Երկրորդ՝ Կենաց արքունիւն կամ դպրիչ Հանդերձիւն Աստուծոյ պատուիրանաց, ինչպէս կ'ասէ Դաւիթ մարգարէն. « Հաւատացի զոր և խօսեցայ և ես խոնարհ եղէ յոյժ »։ Սաղ. ՃԺԵ. 10։ « Զի հիթէ խոստովանեացիս բերանով քով տէր զՁիւսուս եւ հաւատացես 'ի սրտի քում, թէ Աստուած յարոյց զնա 'ի մեռելոց՝ կեցցես »։ Հռոմ. Ժ. 9։

Որովհետեւ Հաւատն կը պարունակէ

իւր մէջ բոլոր Քրիստոնէութիւնը և է աղբիւր ամենայն առաքինութեանց, աղբիւր սիրոյ առ Աստուած և առ մարդ, որ է լրումն օրինաց. այս պատճառաւ՝ Քրիստոս հաւատս կը պահանջէր իւր աշակերտներէն։

Հաւատով մեք կ'ընդունիմք Աստուծոյ ողորմութիւններն եւ կը մօտենամք նորան. ուրեմն՝ հաւատն է արդարութիւն և խաղաղութիւն առ Աստուած. "Այսուհետեւ արդարացեալք 'ի հաւատոց անտի խաղաղութիւն կալցուք առ Աստուած 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի"։ Հռով. Ե. 1։

Հաւատով Աստուծոյ որդի կը լինիմք. "Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք 'ի Յիսուս Քրիստոս"։ Գաղ. Գ. 26։

Հաւատով իրաւունք կը ստանամք մօտենալ Աստուծոյ համարձակութիւնամբ. "Ունելով ունիմք զհամարձակութիւն և զնուաճումն յուսով 'ի ձեռն հաւատոց անտի նորա"։ Եփես. Գ. 12։ "Մատիցուք այսուհետեւ համարձակութիւնամբ առաջի ամենայն շնորհաց նորա, զի ընկալցուք զողորմութիւն եւ գտցուք շնորհս 'ի դէպ ժամանակի օգ-

նականութիւն »։ Եբր. Գ. 16։

Հաւատով կ'արժանանամք յաւիտենական կենաց. « Զի ամենայն որ հաւատայ 'ի նա, մի կորիցէ, այլ ունիցի զկեանս յաւիտենական »։ Յով. Գ. 16։

Հաւատով կը զօրանամք եւ յաղթող կը գտնուիմք աշխարհիս պատերազմին մէջ. « Ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի։ Եւ այս է յաղթութիւնն մեր, որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր »։ Ա. Յով. Ե. 4։

Մթով բանիւ՝ հաւատով կը բնակիցընեմք մեր մէջ զՅիսուս Քրիստոս եւ կը միանամք Աստուծոյ հետ, որ է Կեանք եւ կապարեալ երկնիցս։ « Բնակիլ Քրիստոսի հաւատովք 'ի սիրտս ձեր, սիրով արմատացեալք և հաստատեալք »։ Եփես. Գ. 17։

Հաւատն է մի աստուածային ներգործութիւն մարդոյ հոգւոյ վերայ եւ կարելի չէ, որ ծագած լինի նա մեր մտքէն, այլ Հոգին Սուրբն է, որ կը ծնանի մեր մէջ Ճշմարիտ հաւատ։ Եւ արդարեւ՝ եթէ քննեմք կատարեալ առարկան կը տեսնեմք պարզապէս, որ հաւատը չէ կարող ծագիլ մարդէն. վասն զի Ա-

տուծոյ յայտնած ճշմարտութիւններքը մարդոյ մտքով գտնուելու ճշմարտութիւններ չ'են։ Բայց յայտնեմ, մեք ընդունակ չ'եմք առանց Հոգւոյն Սրբոյ զօրութեան ընդունիլ մեր մտքով հաւատոյ ճշմարտութիւններն և նոքա փրկուիլ. վասն զի՝ մեզքը հեռացնելով ըզմեզ Աստուծմէ՝ խաւարեցուցած է մեր միտքը, ինչպէս կ'ասէ Առաքեալն Պօղոս. «Քանզի ճշաւոր մարդ ոչ ընդունի ըզ-Հոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա, և ոչ կարէ գիտել եթէ հոգեպէս քննիցի»։ Ա. Կորնթ. Բ. 14։

Մեր արտով եւս չեմք կարող մեք ընդունիլ հաւատոյ ճշմարտութիւններն, որպէսզի կախուած է արդէն մեր փրկութիւնը, եթէ Հոգին Սուրբ չ'օգնէ. վասն զի մարդ շատ ջոր է և նոքա սիրոն շատ ապականուած է չարութեամբ. ուրեմն՝ չ'է կարող ինքնին սիրել և հնազանդիլ յայտնուած ճշմարտութեանց. «Քորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱստուած, զի օրէնսայն Աստուծոյ ոչ հնազանդի. նա և կարէ իսկ ոչ»։ Հռովմ. Ը. 7։ «Զի շնորհօք նոքա էք փրկեալ 'ի ձեռն հաւատոյն։ Եւ այս՝ ոչ 'ի ձէնջ, այլ Աստու-

ծոյ պարգեւ է »։ Եփես. Բ. 8։ Այս պատ-
ճառաւ ահա Հոգին Սուրբ կ՚անուանի
Աստուածաշնչի մէջ Հոգի հաւատոյ։ « Արդ՝
ունելով զնոյն Հոգի հաւատոյ »։ Բ. Կորն. Դ. 13։
Եւ ամենայն ճշմարիտ հաւատացեալներըն
կը խոստովանին, որ նոյա հաւատն է
Ներգործութիւն Հոգւոյն Սրբոյ։

Հոգին Սուրբ կը ներգործէ մարդոյ վե-
րայ, որ մարդոյ մէջ ծնանի հաւատ՝ արտա-
քին միջոցներով, Աստուածաշունչ Գրքի
ընթերցանութեամբ, աղօթքով եւ եկե-
ղեցական խորհուրդներով։ Այս արտա-
քին ներգործութիւնը միշտ և հանապազ
կապուած պէտք է լինի ներքին ներգոր-
ծութեան հետ։ Մարդն եւս պէտք է աշ-
խատի իւր կողմէն, որ արժանանայ աստ-
ուածային ողորմութեան։ Ուստի՝ պէտք
է ունենայ հեռուողութիւն գործ դնել
այն արտաքին օգնութիւններն, զոր Հոգին
Սուրբ կը տայ և ամէն ժամանակ պէտք
է մտաց մէջ պահէ՝ ոչ թէ իբրեւ լոկ ճա-
նաչողութիւն կամ գիտութիւն, այլ ունե-
նայ հեզ, ճշմարիտ և խանարհ սիրտ, որ
երբէք չընդդիմանայ Հոգւոյն Սրբոյ, այլ
միշտ արտնէ ճշմարտութիւն, որոյ համար
կ՚ասէ Քրիստոս. « Եթէ ոք կամի զկամն

նորա առնել, գիտացէ զսան վարդապետութեան, յԱստուծոյ իսկ արդեօք եթէ ես ինչ յանձնէ իմովք խօսիմ։ Յովհ. Է. 17։ Բայց այս գիտութիւնք պէտք չէ հպարտացնէ մարդոյ սիրտը, որպէս զի հպարտութեամբ չը կորուսանէ իւր վերայ եղած Աստուծոյ ներգործութիւնն։ Գիտութիւն հպարտացուցանէ, այլ ոչ էր շինէ։ Ա. Կորն. Ը. 1։

Մարդ ջերմեռանդն աղօթքով պէտք է խնդրէ Աստուծմէ հաւատ, որ Աստուծոյ ամենէն գերազանց հնարքն է. զսան զի հաւատը միայն կը տայ Ճաշակումն ամենայն ճշմարտութեանց և զօրութիւն պատրաստ լինելու Աստուծոյ պատուիրանաց համար եւ ամէն ժամանակ Աստուծոյ սիրոյ համար ընծայել իւր ամէն սիրած բաներն։

Թէպէտ Հոգին Սուրբ տակաւին միշտ գործ կը դնէ արտաքին միջոցներ, որ ծնանի մեր մէջ հաւատ, բայց նորա ներքին ներգործութիւնն այնպէս չէ կապուած արտաքին միջոցներու հետ, որ աստանց նոցա եւս երբեմն չը ներգործէ մարդոյ հոգւոյ վերայ, մանաւանդ այն ժամանակ, երբ մարդ չէ կարող ունենալ

ապուաքին միջոցներ, ինչպէս կը տեսնենք Քրիստոսի մօտ խաչուած աւազակի եւ այլոց վերայ։

ՀԱՆԴԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՑ

ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Այն ճշմարտութիւններն, որոնք պէտք է լինին Քրիստոնէական հաւատոյ հիմն, հաւաքուած են միասին եւ կ'անուանին ՀԱՆԴԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՑ (1), *այսինքն ծողովածոյ հաւատոյ ճշմարտութեանց, որ է այս.—*

"Հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայրն ամենակալ՝ յԱրարիչն երկնի եւ երկրի՝ երեւելեաց և աներեւութից։

---

(1) Հանդանակ բառն՝ ուրիշ լեզուաց մէջ կ'ասուի Սիմբոլամ, որ է մի նշան, որ հին ժամանակները կը տային հաստիր հաստատուած մարդկանց, կամ այնպիսի նշան, որ հնոյ եղած բարեկամները կարողանային այս նշանով զիրար ճանաչել։ Այս անունը տուին Քրիստոնէից հաւատոյ ճշմարտութեանց, որ սովոր կարողանան զիրար Քրիստոնեայ ճանաչել, որոնք ճշմարտութեամբ և ջերմեռանդութեամբ կը հաւատային նորա մէջ եղած ճշմարտութեանց։

Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիս-
տոս, Որդին Աստուծոյ, ծը-
նեալն յԱստուծոյ Հօրէ՝ Միա-
ծին, այսինքն յէութենէ Հօր.
Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի
լուսոյ, Աստուած ճշմարիտ,
յԱստուծոյ ճշմարտէ. ծնունդ
և ոչ արարած. նոյն ինքն 'ի բը-
նութենէ Հօր, որով ամենայն
ինչ եղեւ յերկինս եւ 'ի վերայ
երկրի, երեւելիք եւ անտես-
ութիք։ Որ յաղագս մեր մարդ-
կան և վասն մերոյ փրկութեան
իջեալ 'ի յերկնից՝ մարմնացաւ,
մարդացաւ, ծնաւ կատարելա-
պէս 'ի Մարիամայ սրբոյ կու-
սէն Հոգւովն Սրբով, որով է-
առ զմարմին՝ զհոգի եւ զմիտ,
և զամենայն որ ինչ է 'ի մարդ,
ճշմարտապէս և ոչ կարծեօք.
չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝

յերրորդ աւուր յարուցեալ
ելեալ 'ի յերկինս նովին մարմ
նովն նստաւ ընդ աջմէ Հօր.
գալոց է նովին մարմնովն եւ
փառաւք Հօր 'ի դատել զկենդա
նիս և զմեռեալս, որոյ թագաւ
որութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և 'ի Սուրբ Հո
գին յանեղն և 'ի կատարեալն,
որ խօսեցաւ յօրէնս և 'ի մար
գարէս եւ յԱւետարանս. որ
էջն 'ի Յորդանան, քարոզեաց
զԱռաքեալն՝ եւ բնակեցաւ 'ի
Սուրբսն։

Հաւատամք եւ 'ի մի միայն
ընդհանրական եւ յառաքեալ
կան Եկեղեցի, 'ի մի մկրտու
թիւն, յապաշխարութիւն, 'ի
քաւութիւն և 'ի թողութիւն
մեղաց, 'ի յարութիւնն մեռե
լոց, 'ի դատաստանն յաւիտե

նիյ Հոգւոյ և մարմնոյ, յայլ քայուքթիւնն երկնիյ և՝ իկեղեցին յաւիտենականս »։

Ի սկզբան Քրիստոնէութեան այս Հանգանակը կարճ էր այս խօսքերով. « Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ »։ զոր Առաքեալք կ՚ասէին Քրիստոսի հրամանաւ։ Բայց երբ քրիստոնէութեան դէմ ելան զանազան մոլքեր, այն ժամանակ ըստ կրսան աւելանալ Հանգանակի մասունքներն և այս Հանգանակը գրուեցաւ Նիկիայի ժողովոյն մէջ, Քրիստոսի 325 թուականին, 318 Հայրապետաց հանձնաժողովութեամբ, Մեծն Աթանասի ձեռքովն, որ մինչեւ ցայսօր եւս Հայաստանեայց Եկեղեցին ունի անփոփոխ, բայց աւելացնելով մեր Գրիգոր Լուսաւորչի պարզ եւ ճշմարիտ խոստովանութիւնը։

« Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ միոյ աստ-

ուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն »։

Հաւատոյ Հանգանակի գլխաւոր մասունքներն են չորս. Ա. Հաւատալ ի Հայր Ապուած. Բ. յՈրդին նորա ի Յիսուս Քրիստոս. Գ. ի Սուրբ Հոգին, և Դ. յեկեղեցի և ի խոստացեալ ողորմութիւնն հաւատացելոց։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

«Հաւատամ ի մի Ապուած, ի Հայրն ամենակալ յԱրարիչն երկնի և երկրի՝ երեւելեաց և աներեւելիոց »։

Հաւատալ ի մի Ապուած՝ ոչ թէ միայն կը նշանակէ, որ Աստուած կայ և յայտնուած է մարդոյն. այս հաւատը դեւերն ալ ունին. «Դուն հաւատաս զի մի է Աստուած, բարւոք առնես, և դեւք հաւատան և սարսին »։ Յակ. Բ. 19։ Վասն զի հաւատալ որ կայ Աստուած եւ

այս ճանաչողութիւնը գործ չը դնել՝ ա-
ւելի վատ է, քան թէ չը հաւատալ խոտ-
քով նորա գոյութեանը։ Այս ճշմարիտ
հաւատը պէտք է զԱստուած երեւցնէ
մեզ, ինչպէս կ'ասէ Հանգանակը թէ՝
կայ մի Աստուած, որ ունի ամէն կատա-
րելութիւններ եւ որ ստեղծած է աշ-
խարհքը, կը կառավարէ և կը նախախ-
նամէ, նմա պէտք է ընծայուիք մեր ամէն
գործքերը և պատրաստ լինիմք նորա ա-
մէն հրամանները կատարելու։

Ասելով՝ Հա՛ պապ՝ 'ի մի Աստուած, պէտք
է Աստուծոյ գոյութեան հետ իմանամք
միանգամայն և նորա բնութիւնն ու կա-
տարելութիւններն, իմանամք թէ ինչ է
ըրած մարդոյ համար և ինչ է յայտնած
իւր վերայ, որ կարողանամք ճանաչել զնա,
հաճոյ լինիլ նմա և գտանել ողորմութիւն
'ի նմանէ։ Բայց մեք չ'եմք կարող կատա-
րելապէս ճանաչել Աստուծոյ կատարե-
լութիւնները, վասն զի ըստ մեծի մասին
խորհուրդ են մեզ համար և այնքան կը
ճանաչեմք, որքան Աւետարանը մեզ յայտ-
նած է. "Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հա-
ւրէ իմմէ և ոչ ոք գիտէ՝ թէ ո՞վ է Որդի,
եթէ ոչ Հայր, եւ ո՞վ է Հայր՝ եթէ ոչ

Որդի, և ում կամիցի Որդին յայտնել»։ Ղուկ. Ժ. 22։ Եւ սորա պատճառն այն է, որ Աստուած Հոգի է անտեսանելի և մեք սահմանաւոր. ուրեմն՝ միայն նորա ճանապարհի ափերը կարող ենք տեսնել. «Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ և մեծութեան նորա ոչ գոյ չափ»։ Սաղ. ճԽԸ. 3։

Աստուածային բնութեան վերայ Ս. Գիրքը կ'ուսուցանէ մեզ երկու բան. Առաջին՝ Որ չը կայ ուրիշ Աստուած բացի նմանէ. «Լուր, Իսրայէլ, Տէր Աստուած մեր Տէր մի է»։ Բ. Օրէն. Զ. 4։ «Մի է Աստուած և Հայր ամենեցուն, որ 'ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին 'ի մեզ»։ Եփես. Դ. 6։ Երկրորդ՝ աստուածային բնութիւնը հաստատակ է հօր, Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ եւ այս երեք անձինքն ունին մի Աստուածութիւն։ Այս է Քրիստոնէից հաւատը, այսպէս կը խօսի Սուրբ Գիրքը աստուածային երեք անձանց վերայ։ «Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և սէրն Աստուծոյ և հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ, ընդ ձեզ ընդ ամենեսին»։ Բ. Կորն. ԺԳ. 13։ «Ըստ կանուխ գիտութեանն Աստուծոյ Հօր, սրբութեամբ

Հոգւոյն Ի հնազանդութիւն և Ի հեզութիւն սրտին Յիսուսի Քրիստոսի։ Շնորհք քեզ և խաղաղութիւն բազմացին »։ Ա. Պետ. Ա. 2։ « Զի երեք են որք վկայեն յերկին՝ Հայր, Բանն և Հոգին Սուրբ. Եւ երեքքին մի են »։ Ա. Յովհ. Ե. 7։ « Մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ »։ Մատ. ԻԸ. 19։

Առաքեալներդ կը մկրտէին անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, պատճառն որ՝ Մկրտութիւնն ընծայ է Աստուծոյ, և Յիսուս Քրիստոս հրամայեց մեզ կրկին անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Այս Երրորդութիւնն է հիմն Քրիստոնէական Հաւատոյ և երբեք անձինքն առնէին մի ներդործութիւն մեր փրկութեան համար, բայց զանազան կերպով։— Հայրը կը կոչէ զմեզ և կը մատեցնէ իւր Որդւոյն. « Ո՛չ ոք կարէ գալ առ ի՝ եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա »։ Յովհ. Զ. 44։ Կը կոչէ և կը մատեցնէ Որդւոյն, զոր Ի յաւիտենից ծնաւ և սպասարաւեց նորա գալուստն։ Որդին եկաւ երկնքէն, միացաւ մարդկային բնութեան հետ, որ զմեզ փրկէ մեր մեղքէն և մեր հոգւոյն տայ կեանք յաւիտենական։ « Ո՛չ ոք գայ

առ Հայր՝ եթէ ոչ ինեւ »։ Յով. ԺԳ. 6։ Եւ Հոգին Սուրբ մեր նորոգիչն է, որ կրկին հաստատեց մեր մէջ Աստուծոյ նմանութիւնը եւ ընդունակ կ'առնէ զմեզ Աստուծոյ տուած փրկութեանը։ « Յորժամ եկեսցէ նա՝ Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ »։ Յով. ԺԶ. 13։ « Եւ ոչ ոք կարէ ասել Տէր՝ զՅիսուս. եթէ ոչ Հոգւովն Սրբով »։ Ա. Կորն. ԺԲ. 3։

Հայր ունի երկու նշանակութիւն—հաստատակ և յոգեւոր։ Հանգանակի մէջ ասելով Հայր՝ պէտք չէ հասկանանք Հօր Աստուծոյ հաստատակ նշանակութեամբ, որ ամենուս համար Հայր է առհասարակ, այլ յոգեւոր նշանակութեամբ Հօր Աստուծոյ, որ նա է մի անձն Երրորդութեան։

Աստուած ունի ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ առ ինքն եւ առ մարդ։ Առ ինքն ունեցած կատարելութիւնները սոքա են. — Յաւիտենական, Անմահ, Հոգեւոր, Ամենակարող, Անփոփոխ, Ամենագէտ, Ամենուրեք, և այլն։ Իսկ առ մարդ ունեցած կատարելութիւններն են. — Բարի, Իմաստուն, Սուրբ, Արդար, Ճշմարիտ, Հաւատարիմ, և այլն։

Թէպէտ Հանգանակի առաջին մասին

մէջ Աստուծոյ կատարելութիւններէն միայն մին կը յիշուի, այսինքն Ամենակալողութիւնն. բայց այս կատարելութիւնը կը բովանդակէ իւր մէջ միւս բոլոր կատարելութիւններն և այս ամենակալող կատարելութիւնը փառաւորապէս յայտնուեցաւ Արարչագործութեամբ։

Յաւիտենական և անմահ ասելով՝ մեք կը խոստովանիմք, որ Աստուած չ'ունի ոչ սկիզբն և ոչ վախճան։ Մեր միտքը խոստովանելով Աստուծոյ գոյութիւնը Յաւիտենական՝ կարող կը լինի մեկնել աշխարհս սկիզբն եւ Աստուած Յաւիտենական կ'անուանէ զինքն — Եհովայ, այսինքն Ես եմ, որ էն։

Ասելով Հոգեւոր՝ կը խոստովանիմք, որ Աստուած չ'ունի ոչ ինչ նիւթական մասն, այլ Հոգի է նա։ "Հոգի է Աստուած և երկրպագուացն նորա՝ հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել"։ Յով. Դ. 24։ Թէպէտ և Աստուածաշունչ Գրոց մէջ կ'ընծայուի Աստուծոյ ականջ, աչք, քիթ, յոյն, ոտ եւ այլն. "Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօթիցս իմոց"։ Սաղ. ՃԺԹ. 2։ "Աչք Տեառն 'ի վերայ արդարոց"։ Սաղ. ԼԳ. 16։

«Զի՞չ քո արարին եւ ստեղծին զիս»։ Սաղ. ՃԺԸ. 73։ «Զայն Տեառն 'ի վերայ Ջուրց»։ Սաղ. ԺԸ. 3։ «Երկիր պատուանդան ոտից նորա»։ Մատ. Ե. 35։ Բայց այս խօսքերը գործ կ'ածուին յարաբերելով առ մարդն։ Սուրբ Գիրքը խօսելով Աստուծոյ վերայ՝ մարդկեղէն կերպարանքով կը ձեւացնէ եւ այսուկը յայտնէ մեզ Աստուծոյ ներգործութիւնը։

Ասելով Ամենագէտ՝ կը խոստովանիմք, որ անցեալն, ներկայն և ապառնին յայտնի է Աստուծոյ. վասն զի՝ նա է ստեղծող ամենայնի և Հոգի յաւիտենական, ամենայն ինչ ներկայ է նորա համար։ «Այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա»։ Եբր. Դ. 13։ «Ո՞վ է իբրեւ զիս յառաջ գայցէ, ձայն տացէ, պատմեսցէ և պատրաստեսցէ ինձ՝ յորմէ հետէ արարի զմարդն յաւիտեան և որ ինչ գալոցն է, միշտեւ եկեալ իցէ պատմեսցեն ձեզ»։ Եսայ. ԽԴ. 7։

Ասելով Ամենակարող՝ կը խոստովանիմք, որ չը կայ ոչ ինչ՝ որ կարողանայ Աստուծոյ արգելք լինիլ, վասն զի՝ ինչ որ կամենայ՝ կարող է առնել և արարածն

այնքան միայն զօրութիւն ունի, որքան ստուած է Արարիչն։ «Ես եմ Աստուած քո, հաճոյ լիր առաջի իմ և անարատ»։ Ծնն. ԺԷ. 1։ «Հայեցաւ 'ի նոսա Յիսուս և ասէ. առ 'ի մարդկանէ այդ անկար է, այլ առ Աստուծոյ ամենայն ինչ զօրաւոր»։ Մատ. ԺԹ. 26։ «Որ ես, Տէր, Տէր, դու արարեր զերկինս և զերկիր զօրութեամբ քով մեծաւ և բազկաւ քո բարձու»։ Երէմ. ԼԲ. 17։

Ասելով Ամենա-բեր՝ կը խոստովանիմք, որ չը կայ ոչ մի տեղ, ուր Աստուած չը կարողանայ ներգործել իւր հոգւով։ Այս կատարելութիւնն կը պարունակէ իւր մէջ Աստուծոյ ամենագիտութիւնն եւ ամենակարողութիւնը։ «Եթէ թագիցէ մարդ 'ի թագաւորեան և ես ոչ տեսից զնա, ասէ Տէր. միթէ զերկինս եւ զերկիր ես ոչ լնում»։ Երէմ. ԻԳ. 24։ «Յո՞ երթայց ես 'ի հոգւոյ քումմէ եւ կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։ Եթէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես. եւ եթէ լիջանեմ 'ի դժոխս և անդ մնս ես»։ Սաղ. ՃԼԸ. 7—8։

Ասելով Անփոփոխ՝ կը խոստովանիմք, որ հեռի է Աստուած ամենայն փոփոխու-

թենէ, վասն զի ամենայաւիտեանն պէտք է լինի անփոփոխ, ոչ որ չէ կարող ոչ տալ և ոչ իսկ կամ յաւիշտակել յԱստուծոյ և ոչ ինչ։ Վասն զի նա է Տուիչն ամենայնի. նա է միշտ անփոփոխ եւ թէ պէտ նորա ներգործութիւնը մարդոյ վերայ կը փոփոխի մարդոյ հոգւոյ դիւութեան համեմատ, բայց նա ինքն կը մնայ անփոփոխ. ինչպէս աչքալ հիւանդը կը կարծէ թէ արեգակի լոյսը փոխուած է, բայց նորա կարծած փոփոխութիւնն իւր աչաց տկարութիւնն է, այսպէս եւս շատ սեղ է՝ սուրբ Գրոց մէջ. Ապուած ողորմեցաւ, Ապուած բարկացաւ։ Բայց՝ Ապուած ողորմեցաւ՝ կը նշանակէ թէ մարդ թիւրեց իւր նպաստակը, զոր Աստուած նշանակած էր նորա համար։ Ապուած բարկացաւ, այսինքն մարդս գործած է այնպիսի բան, որ արժանի է պատժոյ։ "Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգեւք կատարեալք՝ ի վերուստ են իջեալք առ՝ ի Հօրէն լուսոյ, յորում՝ չինք փոփոխումն և կամ շրջելոյ ստուերք։" Յակ. Ա. 17։ "Նորա անցանեն և դու կաս և մնաս յաւիտեան։ Ամենեքեան որպէս զհագուստ մաշեսցին և որպէս զվերարկու փոխեսցես զնոսա և փոխեսցին

ցին, բայց դու նոյն իսկ ես եւ ամէն քո ոչ անցանեն »։ Սաղմ. ՃԱ. 27—28։

Ասելով Բարի՝ կը խոստովանիմք Աստուծոյ անփոփոխ կամքը, որ պատրաստ է ամէն ժամանակ բարութիւն անել ապրածոց։ Աստուած իւր բարութեամբ կը ներգործէ մեր վերայ զանազան կերպով մեր հոգւոյ դրութեան համեմատ եւ ամէն ժամանակ այնպէս կը ներգործէ. ինչպէս յարմար է մեր վիճակին։ Աստուած իւր բարութիւնը կը տայ միշտ իւր սիրելեաց. իսկ ինչ ժամանակ նա իւր բարութիւնք կը ուխտէ մեղաւորներու վերայ՝ կ'ասուի ողորմութիւն։ Երբ Աստուծոյ բարութիւնը կրպասէ մեղաւորաց դարձին՝ այն ժամանակ կ'ասուի համբերութիւն։ Երբ Աստուծոյ բարութիւնը կը նուազեցնէ պատժոյ սաստկութիւնը՝ կ'ասուի դիւրահոգութիւն։ Երբ Աստուծոյ բարութիւնը կը ներէ մեղաւորաց եւ կը մոռնայնէ առ ինքն՝ կ'ասուի ողորմածութիւն։ Աստուծոյ այս մեծ կատարելութիւնն, այն է ամենաբարութիւնն, կը ծագի անսի, որ Աստուած ունի այն ամենայն, ինչ որ հարկաւոր է բարութիւն անելու համար, այսինքն ամենազիտութիւն, ամենակարգ

զութիւն, ամենութեքութիւն, և ոչ ինչ բան կարող չ'է արգելք դառնալ նորա բարութեանը։ Այս կատարելութիւնն կը հաստատուի անթիւ բարութեամբ, զոր Աստուած կը սփռէ մեր վերայ և իւր մօտ տեղ կը պահէ մեզ համար։ Աստուծոյ բարութիւնն երեւեցաւ մանաւանդ նոր բա անհուն սիրոյ մէջ, որով փրկեց զմեզ՝ չը խնայելով իւր Որդւոյ անձն մեզ համար։ "Այսուիկ գիտացաք զսէրն, զի նա զանձն իւր եդ 'ի վերայ մեր և մեք վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինսդ։ Ա. Յովհ. Գ. 16։ "Եւ զի յայսմ երեւեցաւ սէրն Աստուծոյ 'ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիդ. Ա. Յովհ. Դ. 9։

Ասելով Իմաստուն՝ կը խոստովանիմք, որ Աստուած ունի ամենաբարի նպատակ և այն բարի նպատակի համար գործ կը դնէ բարի միջոցք կամ հնարքք։ Այս կատարելութիւնն կը պարունակէ իւր մէջ ամենագիտութիւն, որով Աստուած ունի ամենապատ ճանաչողութիւն։ Կը պարունակէ ամենաքարութիւն, որով միշտ կը ցանկայ բարի առնել։ Կը պարունակէ ամենակարողութիւն, որուն ոչ ոք կարող է արգելք

դատնալ։ Այս ամենիմաստութիւնն Աստուծոյ կը տեսանենք ոյսու, որ Աստուած միշտ կը նախախնամէ եւ կ'ողորմի արարածոց և Սուրբ Գիրքը կ'սնուանէ զԱստուած դիպն իմաստուն։ «Մեծ են գործք քո Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, և լցաւ երկիր ստեղծուածովք քովք»։ Սաղ. ՃԳ. 24։ «Աստուած իմաստութեամբ հիմնեաց զարկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով։ Եւ հանճարով իւրով զանդունդս պատատեաց»։ Առակ. Գ. 19—20։ «Մեծդ խորհրդովք և զօրաւոր գործովք։ Ամենակալ մեծանուանդ Տէր, աչք քո բացեալ են յամենայն ճանապարհս որդւոց մարդկան, տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհի իւրում, ըստ պտղոց գնացից իւրեանց»։ Երեմ. ԼԲ. 19։

Սուրբ բառը Ս. Գրոց մէջ մի քանի տեղ կը նշանակէ դեռ-ևին Աստուծոյ. բայց ստհաստարակ Սուրբ ասելով՝ մեք կը հասկանանք, որ Աստուած կ'ասէ ամենայն մեղք և կը սիրէ ամենայն առաքինութիւն։ Գեղեցիկ վկայ է Աստուծոյ արքութեան մեր խղճմտանքը, որոյ վերայ Աստուած 'ի սկզբանէ գրեց արքութեան գրէնքը, ինչպէս Մովսիսի քարեղէն տախ-

տակի վերայ իւր սիրոյ օրէնքն։ Սուրբ Գիրքը շատ տեղ կը վարաւորէ Աստուծոյ այս կատարելութիւնը. «Երգեցէք զերգս Մովսիսի առաջի Աստուծոյ, և զերգս Գառնոյն՝ ասելով՝ սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց»։ Յայտ. ԺԵ. 3։ Աստուծոյ աչքը սուրբ է, որ չը տեսանէ չարութիւն։ Սրբութիւնը տուած է մեզ՝ ինչպէս մէկ հնարք կամ պայման Աստուծոյ մօտենալու։ «Այլ քստ Սրբոյն, որ կոչեաց զձեզ և դուք սուրբք յամենայն գնացս ձեր լիջիք»։ Ա. Պետ. Ա. 15։ «Զխաղաղութեան զհետ երթայք ընդ միմեանս՝ եւ զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր»։ Եբր. ԺԲ. 14։

Ասելով Արդար՝ կը խոստովանիմք Աստուծոյ անփոփոխ կամքը, որ նա կը տայ վարձ սիրելեաց և պատիժ մեղաւորաց։ Այս կատարելութիւնը կը պարունակէ իւր մէջ ամենիմաստութիւն եւ ամենաբարութիւն։ «Քանզի հաստատեաց օր՝ յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ 'ի ձեռն առնն, որում սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա 'ի մեռելոց»։ Գործ. ԺԷ. 31։

Ասելով Ճշմարիտ և Հաստատուն՝ կը խոս-

սովանիմք, որ Աստուծոյ ամեն մի խօսքըն կամ պատուիրանքը համաձայն է քրիստոնէութեան իրաց, և ոչ ինչ չը խոստանար Աստուած, որ իսկապէս չը կատարուի։ Այս պատճառաւ Սուրբ Գիրքն կ'անուանէ զնա Ապրուած Ճշմարտութիւն, Ապրուած ՅԻՆԴԱՆԻ և Ճշմարիտ։ "Եւ որպէս դարձայք առ Աստուած՝ 'ի կռոց անտի՝ ծառայել Ապրուծոյ ՅԻՆԴԱՆՈՅ և Ճշմարտի"։ Ա. Թեսաղ. Ա. 9։ "Հաւատարիմ եղեալ յաշխարհի և վերացաւ փառաւք"։ Ա. Տիմ. Գ. 16։ "Հաւատարիմ եղեն պատգամքն Աստուծոյ"։ Հռով. Դ. 2։

Աստուծոյ այս ամեն կատարելութիւններն իրարու հետ համաձայն են, ուստի և մարդս պէտք է զգայշ լինի, երբ կը խօսի աստուածային կատարելութեանց վերայ, որ մի գուցէ՝ մի կատարելութեան վերայ խօսելով միւսներն ուրանայ. ինչպէս կան մարդիկ, որ աստուածային արդարութեան վերայ խօսելու ժամանակ կ'ուրանան նորա բարութիւնը և կը կարծեն թէ՝ Աստուած ամենակարող լինելով կ'առնէ այնպիսի բան, որ հակառակ է նորա արդարութեան։

Աստուած ունենալով այս ամեն կա-

տարելութիւններն՝ Սուրբ Գրոց մէջ կ'անուանի Երանելի։ «Որ ըստ Աւետարանի փառաց Երանելւոյն Աստուծոյ է, որում եղէ ես հաւատարիմ»։ Ա. Տիմ. Ա. 11։ Աստուած ունի այնպիսի փառք, որ չը պատկանիր ոչ ոքին և այս փառքը կը պարունակուի նորա կատարելութեանց մէջ, զոր միշտ կը տեսնէ եւ նոքօք կը փառաւորուի, և Աստուած արժան կը համարի դնել իւր փառքն իւր կատարելութեանց և այն փառաւորութեան մէջ, որով մեք պէտք է փառաւորեմք զնա։ Այս վերջին նշանակութեամբ կ'ասուի Փառաւորեալ Աստուած։ «Քանզի գնոց գնեցայք. փառաւորարարէք զԱստուած 'ի մարմինս ձեր և 'ի հոգիս ձեր, որ է յԱստուծոյ»։ Ա. Կորն. Զ. 20։

Այս ամէն կատարելութիւնները մեղ պէտք է խոնարհեցնեն Աստուծոյ առջեւ, որ միշտ մտածելեմք նորա կատարելութեանց վերայ։ Ոչ ինչ բան կարող չ'է այնքան մեծութիւն տալ մեր հոգւոյն, ինչպէս մըտածելն Աստուծոյ կատարելութեանց վերայ և փառաւորելն զնա։ Պէտք է ուրեմն սիրեմք զԱստուած և երկիւղ ունենամք 'ի նմանէ, ցանկամք նորա ողորմութեանք

եւ աշխատիմք դառնալ նմանող նմա։ «Արդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»։ Մատթ. Ե. 48։

Աստուած յայտնեց իւր կատարելութիւնները իւր Գործքով 'ի սկզբանէ երկնքի և երկրի ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՄԲ, այսինքն ամենայն շնչաւոր և անշունչ, երեւելի և անտեսանելի արարածոց, որք կը բովանդակին նորա մէջ։ Աստուած է պատճառ և Տէր բոլոր աշխարհի եւ մի այլ պատճառ չը կայ։ Սուրբ Գիրքը յայտնի կ'ուսուցանէ մեզ, որ Աստուած է ամենազան ստեղծողն և արարիչը. «Աստուած՝ որ արար զաշխարհս եւ զամենայն որ 'ի նմա, նա երկնից և երկրի է Տէր»։ Գործ. ԺԷ. 24։ Մովսէս մարգարէն մանրամասն կը պատմէ մեզ Աստուծոյ արարչագործութիւնը՝ իւր Գրքի մէջ (Աստուածաշնչի մէջ) ասելով թէ՝ աշխարհքը ստեղծուած է Աստուծոյ խօսքով. «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր» և այլն։ Ծնող. Ա. 1։ «Նա ասաց և եղեն, հրամայեաց եւ հաստատեցան»։ Սաղմ. ԼԳ. 9։ «Հաւատովք իմանամք հաստատեալ զյաւիտեանն Բանիւն Ա-

ուածոյ՝ աներեւութիւց զերեւելիսս եղեալ »։ Եբր. ԺԱ. 3։

Սուրբ Գիրքը մեզ կ'ուսուցանէ պարզ, որ այն խօսքը, որով ստեղծեց Աստուած զաշխարհ՝ է նորա Միածին Որդին։ « Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր բանն։ Նա էր 'ի սկզբանէ առ Աստուած։ Ամենայն ինչ նովաւ եղեւ և առանց նորա եղեւ և ոչ ինչ, որ ինչ եղեւն »։ Յով. Ա. 1—3։ « Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երեւին՝ եւ որ ոչն երեւին, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն նովաւ եղեւ և 'ի նոյն հաստատեցաւ։ Եւ նա է յառաջ քան զամենայն և ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ »։ Կող. Ա. 16—17։

Բովանդակ արարածոց մէջ՝ ամենէն երեւելի են հրեշտակները եւ մարդիկ։ Հրեշտակները մարդիկներէն գերազանց հոգի են, որք Աստուածոյ սպասաւորներն են, և այս պատճառաւ է, որ նոցա անունն կ'ասուի Հրեշտակ, այսինքն Առաքեալ։ Հրեշտակները կը բաժնուին երկու—բարի եւ չար։ Բարի հրեշտակները

նոքա են, որք մնացին իրենց արքութեան և հնազանդութեան մէջ և բազմութիւն են։ «Եւ տեսի և լուայ զձայն հրեշտակաց բազմաց, որք կային շուրջ զաթոռս վրայն և զչորիւքն կենդանեաքն և էր թիւն նոցա բիւրք բիւրուց և հազարք հազարաց»։ Յայտ. Ե. 11։ «Թէ համարիցուս թէ ոչ կարեմ աղաչել զհայր իմ՝ և հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան զերիսուսան գունդս հրեշտակաց»։ Մատ. ԻԶ. 53։ Հրեշտակները կ'անուանին Սերովբէ, Քերուբէ և այլն, և նոցա պարտաւորութիւնն է փառաւորել զԱստուած և կատարել նորա հրամանն։ «Եւ Սերովբէքք կային շուրջ զնովաւ, վեց թեւք միոյ և վեց թեւք միոյ, երկուքն ծածկէին զերեսս իւրեանց և երկուքն ծածկէին զոտս իւրեանց եւ երկուքն թռուցեալ աղաղակէին մի առ մի և ասէին. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի են ամենայն երկիր փառաւք նորա»։ Եսայ. Զ. 2—3։ «Ասեմ ձեզ՝ զի հրեշտակք նոցա յերկինս՝ հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ, որ յերկինս է»։ Մատ. ԺԸ. 10։ «Ոչ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք, որք առաքին 'ի սպասաւորութիւն այնո-

ցիկ՝ որ ժառանգելոյն են զկրկութիւն։
Եբր. Ա. 14։ Հրեշտակներդ սիրով եւ
ուրախութեամբ կը հնազանդին Աստու-
ծոյ եւ նոցա հնազանդութիւնն է, զոր
Փրկիչն մեզ օրինակ կը տայ Տէրունական
աղօթիցմէջ ասելով. «Եղիցին կամք քո,
որպէս յերկինս և յերկրի»։ Մաթ. Զ. 14։
Իսկ չար հրեշտակներդ նոքա են, որք հը-
պարտութեամբ ընդդիմացան Աստուծոյ
և հեռանալով բնակեցան անդնդոց մէջ։
«Զի եթէ 'ի հրեշտական յանցուցեալս
Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարային
կապանաւք արկեալ 'ի սպարապան՝ ետ պա-
հել 'ի դատաստան»։ Ա. Պետ. Բ. 4։ Քրիս-
տոսի մարդեղութենէն առաջ՝ այս չար
հոգիքն ունէին զօրութիւն կամ իշխանու-
թիւն մարդոց վերայ, որք կը ծնանէին մար-
դոյ մէջ դանազան հիւանդութիւններ։
Այս հիւանդութիւններէն էր, որ Քրիս-
տոս փոխաւորապէս կ'ազատէր մարդոյ
հոգին և մարմինը։ Այս ազատութենէն
յետոյ՝ մեք այլ եւս պատճառ չունիմք
վախնալու սատանայի իշխանութենէն,
այլ միայն պէտք է զգոյշ լինիմք, որ չը
փոքձեն զմեզ չարութեան ճանապարհաւ։
«Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ

և արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան, որ են 'ի նեբբոյ երկնից »։ Եփես. Զ. 12։ «Արթուն լերուք և հակեցէք, զի ոսոխն ձեր սատանայ իբրեւ առիւծ գոչէ, շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ »։ Ա. Պետ. Ե. 8։

Մարդ ստեղծուած է Աստուծմէ՝ հոգւով և մարմնով։ Հոգին է մարդոյ մասն, որ կը զանազանուի մարմնէն, բայց միացած է նորա հետ և այս միութեամբ մարդ կը մնայ է, կը դատէ, ունի շարժմունք, զգայողութիւն և կեանք։ Հոգւոյ մէջն է մարդկային ազատասրութիւնը, գրագիտութիւնը և ճշմարիտ կեանքը։ Հոգւոյն ստուած է, որ սիրէ մարմնոյ վերայ և մարմնոյ մինչ հետապնդի հոգւոյն։ Ասուծ՝ մարդ չ'է, ինչպէս կ'ասեն, բանական կենդանի, այլ Հոգի է նա մարմնոյ հագած, որ մի գործի կամ մէջոյ է հոգւոյ հանար աշխարհիս հետ կապակցելու և նորա վերայ ներգործելու։ Նմանութիւնը և պատկերը, զոր Աստուած ստաւ մարդոյն, կը նշանակէ, որ նա ստեղծեց զմարդ հոգի՝ որ այսինքն ընդունակ դատելու, նկատելու և ճանաչելու։ Սաեղծեց ապա, այսինքն ընդու-

ծակ ընտրելու և կամենալու։ Ստեղծեց ա-
որ, այսինքն ընդունակ բարի խնդրե-
լու։ Աստուծոյ լուսովը լուսաւորուելու և
նորս սիրոյ մէջ բնակելու։ Ստեղծեց ան-
հաւ, այսինքն ընդունակ յաւիտենական
լինելու։ Հոգին է ուրեմն՝ որ կ'առաջնոր-
դէ մարդոյն և իշխող կը շինէ աշխարհի
վերայ։ «Փոքր ինչ խնայարհ սարարեր զնա
քան զհրեշտակս, փառաւք եւ պատուոյ
պսակեցեր զնա և կացուցեր զնա 'ի վերայ
ձեռակերտաց քոց»։ Սաղ. Ը. 6—7։

Աստուած երբ ստեղծեց ամեն արա-
րածները, յայտնեց որ ամենը բարի են,
այսինքն բարութենէ են ստեղծուած,
բարի են ստեղծուած եւ բարի լինելու
համար են ստեղծուած։

Արարչագործութիւնը պէտք է ծնա-
նի մեր մէջ հնազանդութիւն, ապրուածպաշ-
տութիւն, սէր եւ ընդհակառութիւն առ Ա-
ստուած, որ նա ստեղծած է զմեզ և հա-
ղորդակից կ'առնէ իւր Երջանկութեանը։
Պէտք է նոյնպէս ծնանի մեր մէջ կապա-
րեալ հաւատարմութիւն, որ Աստուած ինչ-
պէս որ ստուած է կեանք, նոյնպէս կը տայ
և կեանքի ամեն հարկաւորութիւնները։
«Մի հոգայք վասն ոգւոյ ձերոյ թէ՝

զինչ սուտիցէք կամ զինչ լսիցէք, և մի վասն մարմնոյ ձերոյ՝ թէ զինչ ագանիցէք, ոչ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր և մարմին քան զհանդերձ »։ Մտթ. Զ. 25։ Պէտք է հաւատամք հաստատ, որ Արարիչը միշտ կը նախախնամէ իւր արարածներն։

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆՆ է Աստուծոյ այն ներգործութիւնը կամ կարող զօրութիւնը, որով նա կը հոգայ իւր արարածոց համար, նոցա կարգութեանց համար, և կը խառնուի նոցա կենաց մէջ, ինչպէս պիտանի է իրեն։ Նախախնամութիւնը կը բաժանուի երկու — Հասարակ և Յատուկ։

Աստուծոյ հասարակ Նախախնամութիւնը կ'երեւի աշխարհի տուած օրէնքներու մէջ, ինչպէս — արեգակի լուսաւորութեան, տարերաց, եղանակի և ժամանակի փոփոխութեան մէջ։ Աստուած այս Նախախնամութիւնը ունի ընդհանուր արարածոց վերայ, ինչպէս կ'ասէ Քրիստոս. « Զի արեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրեւ 'ի վերայ արդարոց և մեղաւորաց »։ Մտթ. Ե. 45։

Աստուծոյ յատուկ Նախախնամու-

թիւնը կ'երեւի այն ժամանակ, երբ Աստուած կը խառնուի մարդոյ յատուկ գործոց մէջ, ինչպէս կը տեսնենք Մովսիսի, Յովսեփի պատմութեան մէջ եւ այլն։ Այս Նախախնամութիւնը երբեմն կ'երեւի մեզ պատաքին ձեւով, ինչպէս՝ հրաշքներով, որոց մէջ յայտնի կ'երեւի նորա ձեռքը։ Բայց առհասարակ, Աստուած մեզ կը նախախնամէ մեզմէն ծածկուած միջոցներով, իւր Նախախնամութեանը գործիք շինելով մարդկանց գործքերը կամ անցքերը։

Խոստովանելով՝ որ Աստուած ունի ամենամեծ կատարելութիւններ — ամենակարողութիւն, ամենիմացութիւն և ամենաբարութիւն, կը խոստովանիմք մի և նոյն ժամանակ, որ այս կատարելութեանց համեմատ ունի եւ գործ, այսինքն Նախախնամութիւն։ Նա ամենաբարի գոլով՝ կը նախախնամէ իւր արարածները, տալով անենայն բարութիւն։ Ամենիմաց գոլով՝ կը տայ այն հնարքները, որով մարդ կարող է բարութեան հասնիլ, և ամենակարող գոլով՝ կը տայ ամենուն կեանք և միջոց՝ կենաց պահպանութեան։ Ուրեմն՝ ուրանալ Աստուծոյ Նախախնամութիւնը՝

կը նշանակէ ուրանալ նորա ամէն կատարելութիւնները, նաև նորա գոյութիւնը։ Արարածն ամէն ժամանակ պէտք է կախում ունենայ Արարչի կամքէն և լինի նորա աչաց և ձեռաց ներքոյ։ Թէպէտ մեք կը տեսնենք, որ մարդոյ ձեռագործը մի քանի ժամանակ կը մնայ եւ կը տեւէ առանց մարդոյ օգնութեան, բայց նորա մնալու պատճառն եւս այն է, որ Աստուած բոլոր աշխարհս անդադար նախախնամելով այն ձեռագործն եւս կը նախախնամուի նորա մէջ։ Արարածներն եւս իրենց բնութեամբ կը յայտնեն, որ Արարիչն է նախախնամողը, վասն զի՝ արարածն իւր կեանքն ու զօրութիւնն առած է Արարչէն, և ոչ մի արարած իւր զօրութեամբ չ'է կարող կենալ առանց Արարչի և Ստեղծողի պահպանութեան։ "Ամենեքեան քեզ սպասեն և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու։ Դարձուցանես զերեսս քո 'ի նոցանէ՝ եւ խռովին, հանես զոգի 'ի նոցանէ՝ պակասին եւ 'ի հող դառնան"։ Սաղ. ՃԴ. 27—29։

Եթէ Հանգանակի առաջին մասին մէջ Աստուծոյ մի կատարելութիւն մի՝ այն կը յիշուի, այն է նորա ամենակարո-

զութիւնը, պատճառն այն է որ Նախախնամութիւնք անշուշտ արարչագործութեան հետեւանքն է, ինչպէս կ'ասեն թէ՝ Նախախնամութիւնը ոչ այլ ինչ է. եթէ ոչ ընդհակ Արարչագործութեան։

Աշխարհիս խմառուն եւ համաձայն կարգն ու կանոնաւորութիւնը այնքան կը զարմացնէ զմեզ իւր ամեն մի մասով, մանաւանդ ատոնցմէ կանոնաւոր շարժմունքով, յերկնից եւ գիշերուան եւ ընդակայ փոխոխութեամբ, քառասոց, կենդանեաց եւ մարդկային ցեղի պահպանութեամբ, աճմամբ եւ տարածմամբ, որք յայտնի կը վկայեն՝ թէ այնպիսի խմառուն, գեղեցիկ եւ հերգաշնակ ընդհանուր կարգն պարարածի գործ չէ, այլ ամենակարող Արարչի, որ'ի սկզբանէ կարգեցաւ հաստատեալ այսպիսի խմառուն կարգ. "Արարեր զլուսին վասն ժամանակի, արեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ"։ Սաղ. ճԺ. 19։ Սուրբ Գիրքն ասելի պարզ ցոյց կը տայ մեզ Աստուծոյ Նախախնամութիւնը Եբրայեցւոց ազգի վերայ, թէ ինչպէս Աստուած կը նախախնամէ ազգերը եւ իւր ընտրած մարդիկը, ջրհեղեղի ժամանակ, Նոյեմի եւ Գոմորի կործանը

ման ժամանակ, Կարդիր ծոմն անցնելու ժամանակ և այլն, և այլն։

Վերեւ ասացինք, որ աշխարհս ըստեղծուած է Աստուծոյ բարութենէն, ստեղծուած է բարի եւ ստեղծուած է բարութեան մէջ մնալու համար։ Բայց մարդս լինելով անձնիշխան՝ շատ անգամ անհնազանդ կը գտնուի Աստուծոյ կամքին և իւր ազատութիւնը գործ կը դնէ՝ ի չարն։ Այս պատճառաւ է, որ աշխարհի մէջ կը տեսնենք զանազան չարութիւններ, թէպէտ եւ գիտենք միանգամայն, որ Աստուած կը նախախնամէ ամենն արարածները։ Լինելու չէր աշխարհի մէջ չարութիւն, եթէ մեք մնացած լինէինք մեր առաջին անմեղութեան մէջ։ Ուրեմն՝ բոլոր չարիքը յառաջ կը գան մեր անձնիշխանութիւնը բարութեամբ գործ չը դնելէն, այն անձնիշխանութիւնը, որ իբրեւ պատիւ եւ նմանութիւն Աստուծոյ տրուած է մեզ. որ նոյնա Աստուծոյ գործակից լինիմք աշխարհի մէջ։ Զարաչար գործ դնելով մեր անձնիշխանութիւնը՝ մեք կը տեսնենք, որ կը հետեւին մեզ համար չար հետեւանքներ եւ փլուածներ։ Այս փլուածներն եւս մեք պէտք է հասկ-

ինքնք իբրեւ գործիք, որով ամենաբարի Նախախնամութիւնը կամի մեզ հասակացընել մեր մոլորութիւնը, հանել չար ճանապարհէ եւ դարձնել առ ինքն, ուղղել, ինչպէս կ'ասէ մարգարէն. «Մի թէ կամելով կամիցիմ զմահ մեղաւորի, ասէ Տէր, որպէս զդառնալ նոցա 'ի չար ճանապարհէ եւ կեալ»։ Եզեկ. ԺԸ. 23։

Թէպէտ շատ անգամ կը տեսնեմք մեք չար մարդիկը բարեբաղդութեան մէջ, բայց նոցա բարեբաղդութիւնը արտաքուստ կ'երեւի մեզ. վասն զի չը կայ ճրշմարիտ երջանկութիւն եւ խաղաղութիւն առանց խղճի հաւանութեան եւ առանց Աստուծոյ հետ հաշտուելու Յիսուսի Քրիստոսի միջնորդութեամբ։ Շատ անգամ Աստուած կը համբերէ մարդկանց չարութեանը, որ տայ ժամանակ զղջալու, եւ եթէ նոքա յետ չը դառնան իւրեանց չար գործքերէն, չ'են կարող փախչիլ ապագայ պատժէն, և շատ անգամ Աստուած այս պատիժը կը դնէ այս աշխարհէն, տալով մեծ նեղութիւն այն մարդկանց, որք 'ի չարն գործ կը դնեն Աստուծոյ համբերութիւնը։ «Տէր, մի սրտմտութեամբ քոյ յանդիմաներ զիս, եւ մի բարկութեամբ

քով խրատեր զիս։ Զի նեռոք քո հարուստ յիս եւ յիս հաստատեցար ձեռն քո ՝։ Սաղ. Լէ. 1—4։

Աստուծոյ հապարակ Նախախնամութիւնը կայ ամեն պարագոց վերայ՝ ուստանց բացառութեան, թէ փոքրին եւ թէ մեծին, մինչեւ հնչին արարածոց վերայ անգամ։ «Ոչ ապաքէն երկու ծլնձղուկք դանկի միով վաճառին և մի 'ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց հօր ձերոյ։ Այլ ձեր ամենայն խակ հեր գլխոյ թուեալ է ՝։ Մատթ. ժ. 29—30։ Իսկ Աստուծոյ յոգոյ Նախախնամութիւնն է իւր պաշտելոյց վերայ։ Բայց ասկայն Աստուծոյ Նախախնամութեան ճանապարհն մեզ հասմար ոնչացու խորհուրդ է. նա կը գերազանցի մեր մտքէն. և մեր ամեն խնդրելն այս է միայն, որ Աստուած կը նա խախնամէ և կը կառավարէ աշխարհքը, կը խառնուի մեր գործոց իւր կամքով ուստանց դժուարութեան. ինչպէս արժան է։ Յիմար ապէսք է լինի ուրեմն այն մարդը, որ կ'ուրանայ Աստուծոյ Նախախնամութիւնը, չը կարդանալով իւր սահմանառոր և ոչինչ մտքով խմանալ նորա նախախնամութեան ճանապարհն։ «Արդ

անզգամն 'ի սրտի իւրում՝ թէ ոչ գոյ Աստուած »։ Սաղ. ԺԳ. 1։ Վասն զի Աստուծոյ գոյութեան և կատարելութեանց հետ անշուշտ կապուած է և Աստուծոյ Նախախնամութիւնը։ Ուրանալ Աստուծոյ Նախախնամութիւնը՝ կը նշանակէ ուրանալ նորա գոյութիւնն ու կատարելութիւնները։

Աստուծոյ նախախնամութիւնը յաւիտեան է իւրաքանչիւր արարածոց բնութեանը։ Անշուշտ արարածները կը կառավարին նորա ամենակարողութեամբ եւ ընդհանուր օրէնքներով։ Անասուններն ոչ թէ միայն այս օրէնքներով կը կառավարին, այլ և բնածին ազդեցութեամբ. որով իսկ նոքա կը զանազանին անշունչներէն և կ'որոշեն թէ ինչ է յաւիտեան կամ ընդդէմ իրենց բնութեանը։ Բայց հոգեւոր արարածները կը կառավարէ Աստուած իւր ամենակարողութեամբ և իւր տուած օրէնքներով, որ ուղղէ նոցա ըզգացողութիւնը, միտքը և կամքը, և իւր հոգւով կը խօսի մարդոյ հոգւոյ հետ։ Աստուած ամեն քանի վերայ ունի ներգործութիւն. նա կը շարժէ մեր հոգին դէպ 'ի բարութիւն, կը տայ մեզ օգնու-

թիւն փորձութեան ժամանակ, կը տայ մեզ դիպուած, կարողութիւն և հնարք բարութիւն ընելու, և այս բարութեան վարձն Աստուած երբեմն կրկին տալ այս աշխարհէն, այնպէս որ՝ կարող եմք ասել թէ՝ ասելի Աստուած է պատճառ մեր բարութեան, քան թէ մեք։

Մեր չարութեան դէմ Աստուած կը վարուի ինչպէս արժանի է։—Մեր անձն իշխան լինելուն համար՝ թոյլ կը տայ մեր չարութիւնը, թոյլ կը տայ մեղաւորին իւր կամքին հետեւելու, յետ կ'առնու մեղաւորէն իւր սուրբ հոգին, երբ նա կը տրիւրեցնէ, կը արամեցնէ եւ կը հեռացնէ զայն. կը շփոթէ մեղաւորի խորհուրդներն և դատողութիւնները և կը շինէ իւրեւ հնարք իւր ազատութեան, ինչպէս կը տեսնենք Յովսեփի եղբարց չար գործոց մէջ։ "Դուք խորհեցայք զինէն 'ի չարութիւն և Աստուած խորհեցաւ վասն իմ 'ի բարութիւն"։ Ծնդ. Ծ. 20։ "Զմի՞ խոովեցան հեթանոսք եւ ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս"։ Գոր. Գ. 25։ Մեծ մեղք է ասել՝ թէ Աստուած է պատճառ մարդոյ չար գործոց, վասն զի՝ Աստուած տալով մեզ կարողութիւն եւ ազատու-

թիւն՝ կը հեռացնէ զմեզ չար գործքե-
րէ՝ խղճմտանքի ձայնով, իւր պատուի-
բաններով, իւր հոգւով, իւր խոստմունք-
ներով, երբեմն եւս մեծ պատժով։ «Մի
ոք որ 'ի փորձութեան իցէ, ասիցէ՝ թէ
յԱստուծոյ փորձիմ՝՝ զի Աստուած ան-
փորձ է չարաց. փորձէ նա և ոչ զոք։ Իւ-
րաքանչիւր ոք փորձի առ յիւրոյն ցան-
կութենից ձգեալ եւ ախորժեալ»։ Յակ.
Ա. 13—14։

Աստուծոյ Նախախնամութիւնը ամեն
բարի գործոց առաւելն կը տայ. «Եւ տրն
կեցի, Ապօլոս ջուր եւս, այլ Աստուած
աճեցոյց»։ Ա. Կորն. Գ։ 6։ Աստուծոյ Նու-
խախնամութիւնը չը հեռացներ զմեզ բը-
նական լուսոյ բարի օրէնքները մոռանա-
լէն, զորս կարող եմք գործ դնել զմեզ
պահպանելու համար եւ որք կը հասմ-
ուին Աստուծոյ Նախախնամութեան մի-
ջոցներ։ Բայց պէտք չ'է մոռանամք, որ
Աստուծոյ Նախախնամական ներգործու-
թիւնը աւելի մեծ է քան մերը և մարդ-
կային հնարքները գործ դնելու ժամանակ
դարձեալ պէտք է ինդրեմք Աստուծոյ
հովանաւորութիւնը։

Աստուծոյ Նախախնամութիւնը պէտք

է ծնանի մեր մէջ. — Ա. Շարխիբիւն այն ամեն բարութեանց համար, զոր կը վայելեմք և որոց առաջին պատճառն է Աստուած։ «Գոհացայց զքէն, Ցէր, բա լորով սրտիւ խմով պատարագիս զամենայն ոգանչելիս քո։» Սաղ. Թ. 1։ «Ցամենայնի գոհացարուք, զի այս են կամք Աստուծոյ Քրիստոսիս Ցիսուսիս 'ի ձեզ։» Թեսաղ. Ե. 18։ — Բ. Համբերութիւն և Հաստատութիւն այն ներգործութեանց մէջ, զոր Աստուած կը տայ մեզ մեր բարութեան համար։ «Լուտ եղէ եւ ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր։» Սաղ. ԼԹ. 10։ — Գ. Հաւատարմութիւն և խոստմունք նպաստաւորութիւն մեր կենաց ամեն պատահմանց մէջ. վասն զի Աստուած է, որ նոյն պատահմանց կը տայ ընթացք և կը դարձնէ ամենայն ինչ 'ի բարին, եթէ կը սիրեմք զԱստուած։ «Բայց գիտեմք՝ եթէ որոց սիրեն զԱստուած, յամենայնի գործակից լինի 'ի բարիս, որք հրաւիրեալք են. կոչեցան։» Հռով. Ը. 28։ — Դ. Բարի սովորութիւն՝ որ ամեն մեզ պատահած իրողութեանց մէջ՝ միշտ տեսնելեմք Աստուծոյ ներգործութիւնը, ինչպէս կ'ասէ Ցովսէփ իւր եղբարց։ «Եւ արդ՝ ոչ ե-

թէ դուք առաքեցիք զիս այսր, այլ Աստուած։ Մանդ. Խ. 8։ — Ե. Մեծ եւ հաստատ ուղղութիւն միշտ Աստուծոյ ճանապարհի վերայ գնալու եւ գործելու ինչ որ հաճոյ է նորա կամաց, վասն զի մեք միշտ և հանապազ Աստուծոյ աչաց առաջին եմք և ամեն գործոց մէջ Աստուծմէ կախումն ունիմք։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

"Հաստատմ է՝ Ղ մի փէր Ցիսուս Քրիստոս" և այլն.

Աստուած Տէր՝ Հանգանակի մէջ ոչ թէ միայն պէտք է հաստատեմք Աբրահիմ եւ Նախախնամող, այլ առաւել պէտք է հաստատեմք ինչպէս մեզ Փրկիչ։ "Արդ՝ ճշմարտիւ գիտացէ ամենայն տունդ Իսրայելի, զի և Տէր զնա և օծեալ Աստուած արար, զայն Ցիսուս զոր դուք խաչեցիք"։ Գործ. Բ. 36։ "Զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա"։ Եփես. Ա. 22։

Բայց Ցիսուս անունը տրուած է, ոչ թէ մարդկանց կամքով, այլ Աստուծոյ,

որ նա պէտք է փրկէր մարդկային ազգը մեղքէ, ինչպէս հրեշտակն ասաց Յովսէփին. «Ծնցի որդի և կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց»։ Մատ. Ա. 21։ Ո՛չ թէ միայն ազատեց զմեզ Յիսուս իւր մահով դատապարտութենէ, որպէս մեր մեղքն արժանացուցած էր, այլ կը լուսաւորէ զմեզ իւր վարդապետութեամբ, կը քաջալերէ զմեզ իւր օրինակով և մանաւանդ կը նորոգէ զմեզ իւր հոգւով. որ կրկին չ'ընկնինք մեղաց մէջ, և ինչպէս որ ազատեց մեր մեղքէն, նոյնպէս եւս ազատեց նորա ամեն հետեւանքներէն։

Մեր երկնաւոր Հայրն առաքեց իւր միածին Որդին, որ նա լինի մեզ համար իմաստութիւն, արդարութիւն, փրկութիւն եւ սրբութիւն։ «Որ եղեւ մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն եւ սրբութիւն և փրկութիւն»։ Ա. Կորն. Ա. 50։ Նա է մեր իմաստութիւնը, որ ցոյց տուաւ մեզ փրկութեան ճանապարհը։ Նա է մեր արդարութիւնը, որ զմեզ փրկեց մեր մեղքէն և արժանացուց իւր արդարութեանը։ Նա է մեր սրբութիւնը, որ սրբեց մեր սիրտը և մեր կեանքը։ Նա է մեր

գրիւ-ԼԻՒՆԸ, որ աղաւոեց զմեզ մեր մեղքէն եւ այս փրկութիւնը, որ կըսկսուի այն աշխարհիս մէջ հաւատով և կենաց նորոգութեամբ, պէտք է լրումն առանց միւս կենաց մէջ երջանկութեան, յորմէ մեղքն անդարձ հեռացուցած էր զմեզ։ Նա է ճշմարիտ Փրկիչ, կատարեալ Փրկիչ, միայնակ Փրկիչ։ «Եւ չկայ այլով իւրով փրկութիւն զի և ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից առեալ ի մարդիկ, որով արժան լիցի կեալ մեզ»։ Գործ. Դ. 12։

Այսպէս ուրեմն՝ մեր հաւատն առ Փրկիչն կը լինի ճշմարիտ։ Նախ՝ երբ մեք բաց ի նմանէ՝ մի այլ փրկութեան աղբիւր չ՚որոնենք։ «Խափանեալ էք ի Քրիստոսէ, որք օրինաւքն արդարանայք և անկեալ էք ի շնորհաց անտի»։ Գաղ. Ե. 4։ Երկրորդ՝ երբ կը ճանաչենք և կը փառաբերենք նոր շնորհաց գինը՝ ասելով Յովհաննէս Աւետարանչի հետ միասին։ «Զի ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք զշնորհս փոխանակ շնորհաց»։ Երրորդ՝ երբ կ՚զգանք կարօտութիւն նորա ողորմութեան, անդադար կը գնանք առ Քրիստոս և անդադար կը խնդրենք ի նմանէ և կըստանանք։ Չորրորդ՝ երբ գործ

կը դնեմք նորա ողորմութիւնները մեր պրպտութեան եւ փրկութեան համար։ «Մեք զքաջդ ապրեսցուք հեղգայեալ յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն առ խօսելոյ 'ի Տեառնէ»։ Եբր. Բ։ 3։

Քրիստոս բառք կը նշանակէ Օծեալ կամ Մեսիա։ Եբրայեցւոց մէջ այս ա-նունը կը տային թագաւորաց, մարգարէից եւ քահանայից, վասն զի՝ ինչ ժամանակ պարտաւորութիւն կը յանձնէին նոցա կ'օծէին սուրբ խեղով։ Այս էր շնորհաց նիւթական նշան, զոր Աստուած կը տար, որ նոքա ունենան կարողութիւն կատարել իրենց պաշտօնն արժանապէս եւ փոխադարձեալ այն պարտաւորութիւնները, որոց համար ընտրուած էին։ Եբրայեցիք տուին այս Քրիստոս կամ Մեսիայ անունը Մեծ Առաքելոյն, զոր Աստուած խոստացած էր նոցա, որ պէտք էր լինէր փրկիչ մարդկային ազգի եւ որսն մարդկային ազգը անհամբերութեամբ կը սպասէր, ինչպէս մխիթարութեանն Իսրայելի. «Եւ էր այր մի յԵրուսաղէմ, որոյ անունն էր Սիմէոն եւ էր այրն այն արդար եւ երկիւղած յԱստուծոյ եւ ակն ունէր մխիթարութեանն Իսրայելի եւ Հոգին Սուրբ էր 'ի

նմա։ Ղուկ. Բ. 25։ Այսպէս էր անուա-
նուած Դանիէլի մարգարէութեան Թ. գրքի
խոյն մէջ։ Սամարացի կինն ասաց Քրիս-
տոսին, «Գիտեմ՝ զի Մեսիայ գայ՝ ան-
ուանեալն Քրիստոս, յորժամ եկեսցէ, նա
պատմեսցէ մեզ զամենայն։» Յով. Դ. 25։

Յիսուս անուանուեցաւ Քրիստոս, ա-
րդարեւեւ նա էր ճշմարիտ խոստացուած
Մեսիայն և նորա վերայ կային այն ամէն
նշանները, որով մարգարէքն նշանակած
էին զՄեսիայն և յատուկ ստուած էր նը-
մա այս անունը. վասն զի նա կատարեց
երեք պաշտօն — Մարգարէի, Քահանայի,
Թագաւորի, որ այսպէս էր կատարէր Մեսիայն
մեր փրկութեան համար։

Թէպէտ չըստացաւ այս «նիւթական»
օծումն, որպէս համարի մեք կը խօսիմք, բայց
ստացաւ ճշմարիտ հոգեւոր օծումն։ «Ըստ
Յիսուս, որ 'ի Նազարէթէ, զոր օծն Աստ-
ուած Հոգւով Սրբով եւ զօրութեամբ,
որ շրջեցաւ բարի առնել և բժշկել զա-
մենայն ըմբռնեալսն 'ի սատանայէ, զի
Աստուած էր ընդ նմա։» Գործ. Ժ. 38։
«Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և
օծ խակ զիս, յաւետարանել աղքատաց
առաքեաց զիս։» Ղուկ. Դ. 18։

Իբրեւ Մարգարէ կատարեց Քրիստոս մարգարէի ամեն պաշտօն, այսինքն կ'ուսուցանէր ժողովրդոց, կը ճանաչեցնէր Աստուծոյ կամքը և փրկութեան ճանապարհը, կը յայտնէր նոցա՝ Աստուծոյ դատաստանը և կը հաստատէր իւր առաքելութիւնը քարոզութեամբ եւ հրաշքով։ "Զքիսուսէ Նազովրեցւոյ, որ եղեւ այր մարգարէ, հզօր արդեամբք եւ բանիւք Առաջի Աստուծոյ և ամենայն ժողովրդեան"։ Ղուկ. Իդ. 19։ Ամեն բանով Նա կը գերազանցէր բոլոր մարգարէներէն։ "Յարուցեալ ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալք կանխ"։ Կող. Բ. 3։ Նորա վերայ մարգարէացան Մովսէս։ "Մարգարէ յիւրոցդ քոց իբրև զիս յարուցցէ քեզ Տէր Աստուած քո, նմա լուիջիք"։ Բ. Օրի. ԺԸ. 15։ Եւ այս խոստմունքը չը յարմարիր և չըվերաբերիր ոչ մի մարգարէի, որք կային մինչեւ Ի Քրիստոս, քայց միայն Փրկչին։ Ինչպէս Մովսէս ազատեց Եբրայեցիները Եգիպտոսի ծառայութենէն, այնպէս եւս Քրիստոս ազատեց մարդկային ազգը մեղաց ծառայութենէ։ Ինչպէս Մովսէս միջնորդ էր հին ուխտին, Յիսուս Քրիստոս եւս

միջնորդ է նոր ուխտին։ Մովսէս օրէնք տուող էր միայն Եբրայեցւոց ազգին, քայց Քրիստոս բոլոր մարդկութեան։ Յիսուս այնքան մեծ է Մովսիսէն, ինչքան արդին մեծ է ծաղայէն. Յիսուսի տուած ազատութիւնն աւելի կատարեալ և մեծագին է քան Մովսիսինը, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ պատրաստութիւն աւետարանական լուսոյ։ "Մովսէս հաւատարիմ է ամենայն տան նորա, իբրեւ ծառայ, առ 'ի վկայութիւն բանիցն ապացելոց. այլ Քրիստոս իբրեւ որդի 'ի վերայ տան իւրոյ, որոյ տունն մեք իսկ եմք"։ Եբր. Գ. 5—6։

Քրիստոս է Ճշմարիտ Քահանայ։ Հին քահանայապետը պատարագ կը բերէր սեղանի վերայ մեղաց թողութեան համար, բարեխօս կը լինէր ժողովրդի հանար և կ'օրհնէր։ Այս էր քահանայապետի իրաւունքը, որ տարին մի անգամ, զղջման օրը, կը մտնէր սուրբ խորանը, այն տեղ զոհ կը մատուցանէր և արիւնը մշտկաւ կը ցանէր քաւութեան սեղանի վերայ և ժողովրդի համար կը բարեխօսէր Աստուծոյ, որ ընդունի նոցա զոհը եւ թողութիւն տայ նոցա մեղաց։ Պատարագէն յետոյ

կ'ելնէր խարանէն և Աստուծոյ անուամբ կ'օրհնէր ժողովուրդը։ Այսպէս և Յիսուս Քրիստոս իւր անձն զոհեց մեր մեղաց թողութեան համար։ «Եւ գնացէք ուրեմն, ուսցէք և Քրիստոս սիրեաց զմեզ և մատնեաց զանձն իւր վասն մեր, պատարագ և զեղումն Աստուծոյ 'ի հոտ անուշութեան»։ Եփես. Ե. 2։ Նա է մեզ համար երկնքի մէջ Բարձրեալ իւր Հօր մօտ։ «Եւ եթէ մեղանիցէ ոք՝ ունիմք բարեխօսս առ Աստուած զՅիսուս Քրիստոս զարդարն և զանարատն»։ Ա. Յով. Բ. 1։ «Զի ոչ եթէ 'ի ձեռագործ սրբութիւնսն եմուտ Քրիստոս յօրինակս ճշմարտութեանն, այլ 'ի բուն իսկ յերկինս, յանդիման լինել երեսայն Աստուծոյ վասն մեր»։ Եբր. Թ. 24։

Քրիստոսի զոհը մեծ է հին քահանայի զոհէն։ Նոքա մահկանացու էին, մեղաւոր և ինքեանք եւս կարօտութիւն ունէին զոհի՝ իրենց մեղաց համար և նոցա զոհն անիծուտար էր և սէնք էր ամեն ժամանակ նորոգուէր. «Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս զգածեալս տկարութեամբ, իսկ բանն երդմանն յետ օրինացն՝ զորդի որ յաւիտեան կատարեալ է»։ Եբր. Է. 28։ Եւ Պօղոս Առաքեալն

մանրամասն կը խօսի Քրիստոսի քահանայութեան վերայ։ «Զի դեռ եւս յերանս հոգ իւրոյ էր, յորժամ ընդ առաջ ելեալ նմա Մելքիսեդեկ»։ Եբր. է. 10. Կը տեսնենք սրեմն՝ թէ ինչքան մեծ եւ գերազանց է Քրիստոսի քահանայութիւնն Ղեւտացւոց քահանայութենէն։

Յիսուս Քրիստոս մեր Թագաւորն է, ինչպէս կը յիշուի Աստուածաշնչի մէջ. «Մեծ է իշխանութիւն նորա և խաղաղութեան նորա չկայ սահման։ Յաթոռն Դաւթի հաստի և զարքայութիւն նորա յաջողեսցէ»։ Եսայ. Թ. 7։ «Նա եղեալի մեծ և Որդի բարձրելոյ կոչեսցի։ Եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօրն նորա և թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակոբայ 'ի յաւիտեանս»։ Ղուկ. Ա. 32։

Փրկիչն ինքն խոստովանեցաւ Պիղատոսի առաջ, որ ինքն է Թագաւոր. բայց Եբրայեցւոց թիւր դատողութիւնը ուղղելու համար, որք կը կարծէին թէ նա պէտք է թագաւորէ այս աշխարհիս մէջ, Քրիստոս աւելացուց այս խօսքերը. «Իմ արքայութիւն չէ՝ յայսմ աշխարհէ»։ Յովհ. ԺԸ. 36։

Յիսուսի թագաւորութիւնը Հոգեւոր է եւ երկնաւոր, որ միայն կարող է մեզ

օգնել մեր ամեն կարօտութեան ժամանակ։ Նորա իսկ թագաւորութիւնն է իւր Եկեղեցւոյ և հպատակաց վերայ, որք կը հաւատան և կը կատարեն նորա խօսքերը։ Կը թագաւորէ նա նոցա վերայ եւ նոցա արդւոյ վերայ իւր Խօսքով և Հոգւով. կ'օգնէ նոցա և կը պահէ մինչեւ իւր փառաւոր գալստեան օրը։ Ուրեմն՝ պարտաւորեմք խոստովանիլ զԲրիստոս Ճշմարիտ Աստուած, Ճշմարիտ Քահանայապետ և Ճշմարիտ Թագաւոր, այսմիտեւ նա կատարեց այս երեք պաշտօնքը, ինչպէս կը վկայէ Ս. Գիրքը։ Մեք պէտք է քնդունիմք զնա կենդանի հաւատով օգտաւէտ զոհ մեզ համար և նորա արդիւնքէն սպասեմք փրկութիւն։ Պէտք է տամք նմա պատիւ ինչպէս թագաւորի՝ հնազանդելով և ընծայելով նմա մեր սիրտը, որ նա մեր վերայ թագաւորէ յաւիտեան։

Աստուած Միածին Որդի, ինչպէս և Հանգանակի մէջ, այս Միածին խօսքով կը զանազանեմք նորա որդիութիւնը մեր որդեգրութենէն։ Նա որդի է իւր բնութիւնեամբ. նա է միայն այս կերպով Որդի Աստուծոյ և սորա մէջն է նորա Միածնորդին։ Իսկ մեր որդիութիւնն Աստուծոյ՝

նովաւ է ; այսինքն նորա զարմութեամբ և շնորհքով. «Իսկ որք ընկալան զնա՝ նա նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոյ հաւատացին յանուն նորա »։ Յով. Ա։ 12։

Ամենայն թէ՝ նա է իւր բնութեամբ որդի Աստուծոյ՝ մեք կը խոստովանիմք, որ նա այն բնութենէն է, զոր ունի Աստուած՝ նորա Հայրն. ուստի՝ նա է աստուածն Ճշմարիտ Աստուած, հաւասար Հօր և Հոգւոյն Սրբոյ։ Որովհետև աստուածային բնութիւնը մի է, այս պատճառաւ կ'անուանի նա Որդի Աստուծոյ, որ ծնեալ է 'ի յաւիտենից 'ի Հօրէ. և Սուրբ Գրոց մէջ կ'անուանի Աղէր կենաց և կը յայտնուի նորա աստուածային բնութիւնը։ «Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս և նա Որդւոյ ետ զկեանս յանձին իւրում »։ Յով. Ե. 26։

Ինչպէս ջրոյ կը ծագի ջրէն, այնպէս որ լուսոյ ճառագայթը հեռանալով իւր աղբիւրէն չը պանազանուիր և չը բաժանուիր լուսէն, այնպէս եւս Աստուծոյ Որդին ծնաւ 'ի Հօրէ և եկաւ յաշխարհ և էր անբաժան 'ի նմանէ, այսինքն նորա աստուածային բնութենէն։ Թէպէտ նա

նորա ծնունդն չէ կարող ունենալ իսկա-
պէս նմանութիւն աշխարհի ոչ մի բանին,
ոչ սրեգակի լուսին, ոչ կրակին և այլն։
Այս մեծ ճշմարտութիւնը, որ կը գերա-
զանցուի մեր մտքէն՝ յայտնի կ'ուսուցա-
նէ մեզ Սուրբ Գիրքը։ Նախ՝ որ Յիսուս
Քրիստոս է Աստուած։ "Իսկզբանէ էր
բանն և բանն էր առ Աստուած և Աս-
տուած էր Բանն. Նա էր 'ի սկզբանէ առ
Աստուած"։ Յովհ. Ա. 1—2։ "Որոյ հարը
քրն, յորոց և Քրիստոս բաղ մարմնոյն, որ
է 'ի վերոյ ամենեցուն Աստուած օրհնեալ
յաւիտեանս ամէն"։ Հռով. Թ. 5։ "Եւ
ակն կալցուք երանելի յուսոյն և յայտ-
նութեան փառաց Մեծին Աստուծոյ և Փրկչին
մերոյ Յիսուսի Քրիստոսի։" Տիտ. Բ.
13։ "Զի ծանիցուք զՀշմարիտն եւ եմք
'ի Հշմարտին որդւոյ նորա Յիսուսի Քրիս-
տոսի։ Զի նա է Հշմարիտ Աստուած՝ և կեանք
յաւիտենական"։ Ա. Յովհ. Ե. 20։

Երկրորդ՝ աստուածային կատարելու-
թիւնները որոնց են Յիսուս Քրիստոսին,
ինչպէս են՝ յաւիտենականութիւն, անփո-
փոխութիւն և այլն։

Յաւիտենականութիւն.—"Ես եմ այբ և ես
եմ յի, ասէ տէր Աստուած, որ էին և որ

ի և որ գալոցն է ամենակալ ։ Յայտ. Ա. 8։ «Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ յառաջ քան զԱբրահամն եմ ես ։ Յով. Ը. 58։

Անիոխիոսրիւն. — «Ի սկզբանէ, Տէր, զհիմունս երկրի հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են։ Նոքա անցանեն և դու կաս և ամենայն յաւիտեան ։ Սաղ. ՃԱ. 26—27։ «Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեան ։ Եբր. ԺԳ. 8։

Ադեանիսրոդոսրիւն. — «Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ եւ ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ, զի զոր Հայր առնէ զնոյն և որդի նմանապէս գործէ ։ Յով. Ե. 19։

Ադեանգիսրոսրիւն. — «Եւ զի ոչ էր պէտ ասել՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյն. զի ինքնին իսկ գիտէր զինչ կրէր 'ի մարդն ։ Յով. Բ. 25։ «Եւ ասէ Պետրոս, դու գիտես, զի սիրեմ զքեզ ։ Յով. ԻԱ. 16։ «Եւ ծանիցեն ամենայն եկեղեցիք, թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկամունս և զսիրտս և տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց ։ Յայտ. Բ. 23։

Ադեոսրիսրոսրիւն. — «Զի սուր խցեն երբ լսս կամ երբք ժողովեալ յանուն իմ՝

անդ եմ՝ ես 'ի մէջ նոցա »։ Մատ. ԺԸ. 20։ « Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի »։ Մատ. ԻԸ. 20։

Արքեպիսկոպոսին. — « Զամենայն ինչ նոր վասն երդեալ և առանց նորա երդեալ և ոչ ինչ որ ինչ երդեսն »։ Ցով. Ա. 3։ « Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երեւին և որ ոչն երեւին։ Եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն ինչ նովաւ՝ և 'ի նոյն հաստատեցաւ »։ Կող. Ա. 16։

Նախնիամոնին. — « Եւ նա է յառաջ քան զամենայն եւ ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ »։ Կող. Ա. 17։ « Հայրն իմ մինչեւ ցայժմ գործէ և ես գործ ծեմ »։ Ցով. Ե. 17։ « Որ է ելոյս փառացս եւ նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ »։ Եբր. Ա. 3։

Թողութիւն մեղաց. — « Իշխանութիւն ունի Որդի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ զմեղս »։ Մարկ. Բ. 10։

Յարութիւն մեռելոց. — « Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առ-

նէ, նոյնպէս և Որդի զորս կամի կենդանի առնէ »։ Յով. Ե. 21։ « Որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ կերպարանակից լինիլ մարմնոյ փառացոյ նորա ըստ զօրութեանն առ ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ զամենայն »։ Փիլ. Գ. 21։

Երրորդ՝ Սուրբ Գիրքը կը պատուիրէ մեզ աստուածային անուն տալ մի միայն Հօր, Որդւոյն և Հոգւոյն Սրբոյ։ Կը պատուիրէ Աստուծմէ միայն երկնչիլ, զնա միայն սիրել, նմա միայն նուիրել մեր կեանքը և նորա պատուիրանքները ջանալ արքութեամբ կատարել և այս պաշտօնը մեզ համար ամենամեծ պատիւ համարել աշխարհքիս մէջ։

Եւ Չորրորդ՝ Քրիստոս չ'արգիլեց այն մարդիկն, որք Որդի Աստուծոյ կ'անուանէին զնա, ինչպէս անուանեցին Պետրոս եւ Նաթանայէլ, կամ որք Աստուած կ'անուանէին զնա, ինչպէս Թովմաս. « Պատասխանի եւ ասէ նմա Սիմոն Պետրոս և ասէ. « Դու եւ Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ »։ Մատ. ԺԶ. 16։ « Պատասխանի եւ նմա Նաթանայէլ և ասէ. Ռաբբի, դու եւ Որդի Աստուծոյ »։ Յով. Ա. 49։ « Պա-

սատանայի եւ Թագաւոր՝ եւ ասէ ցնա Տէր իմ եւ Աստուած իմ։ Յովհ. Ի. 28։

Միածին Որդին, որ է Հայրամարտ Աստուած եւ յաւիտենական Բան, խոստացաւ, այսինքն առաւ Հայրամարտ բնութիւն մարդկային, բաղկացեալ 'ի հոգւոյ եւ 'ի մարմնոյ, ծնանելով սուրբ Կուսէն Հոգւոյն Սրբոյ զօրութեամբ։ "Հոգին Սուրբ եկեսցէ 'ի քեզ եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո։ Ղուկ. Ա. 35։ Այս պատճառաւ նա կ'անուանի Մարդ, Որդի մարդոյ, որպէս կատարուեցաւ Եսայեայ մարգարէութիւնն. "Ահա կոյս յղացցի եւ ծնցի որդի եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած։ Եսայ. Է. 14։ Կատարուեցան այն մարգարէութիւնքն, որ Մեսիայն ամենայն ծնունդ Յուդայի ցեղէն Դաւթի ազգէն։ "Մի պակասեսցի իշխան 'ի Յուդայ եւ մի պակաս յերանայ նորա, մինչեւ եկեսցէ նա՝ որոյ իւրն է հանդերձեալք քրմեան եւ նա է ակնկալութիւն հեթանոսաց։ Ծնունդ. ԽԹ. 10։ Ըստ որում Սուրբ կոյսն Մարիամ էր Յուդայի ցեղէն եւ Դաւթի ազգէն։ Այս մարգարէութիւնն նոքա Հանգամանակի մէջ կը տիշատին այս

խոսքերով, «Մնա՛ Ի Մարիամայ սրբոյ Կոյսն Հոգւոյն Սրբով»։ Այս ծնունդը պէտք է լինէր հրաշալի, հեռացած ամէն մարդկային մեղքերէ, վասն զի՝ նա պէտք է լինէր սուրբ եւ անմեղ քահանայ։ «Զի այսպիսի իսկ վայել էր մեզ քահանայապետս, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ՝ի մեղաւորաց և բարձրացեալ քան զերկինս»։ Եբր. է. 26։

Քրիստոսի Մարդեղութիւնն խորհուրդը մեզ համար անիմանալի է և անճառելի, ինչպէս մեր հոգւոյ և մարմնոյ միութիւնը։ Աստուածային բնութիւնը, որ անսահման է և անհնարելի՝ կարող էր միանալ մարդկային բնութեան հետ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Այս ճշմարտութիւնն է, որ Ս. Գիրքը մեզ կ'ուսուցանէ։ «Եւ բանն մարմին եղեւ, և բնակեցաւ՝ի մեզ»։ Յով. Ա. 14։

Այս սիրոյ խորհուրդը մեծ խորհուրդ է աշխարհի. «Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան, որ երեւեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ՝ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ աշխարհի եւ վերացաւ փառաւք»։ Ա. Տիմ. Գ. 16։

«Վասն որդւոյ իւրոյ եղեալոյ 'ի զառակէ Դաւթի ըստ մարմնոյ»։ Հռով. Ա. 3։ «Որոյ հարքն, յորոյ եւ Քրիստոս ըստ մարմնոյն, որ է 'ի վերոյ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեան ամէն»։ Հռով. Թ. 5։

Քրիստոսի մէջ պէտք է խոստովանիլ երկու բնութիւն — ասպուածային և մարդային անշփոթ և անբաժանելի միաւորութեամբ։ Առանց այս խոստովանութեան կարող չ'եմք մեկնել և իմանալ Աւետարանի զանազան խօսքերն։ Օրինակի համար՝ Քրիստոս կ'ասէ. «Հայր իմ մեծ է քան զիս»։ Յով. ԺԴ. 28։ Պէտք է հասկանամք, որ այս խօսքն կ'ասէ իւր մարդկային բնութեան համար։ Իսկ երբ կ'ասէ. «Ես 'ի Հայր և Հայր յիս է»։ Յով. ԺԴ. 10։ Այս պէտք է հասկանամք նորա աստուածային բնութեան համար, և շատ այսպիսի խօսքեր։ Ինչպէս և կ'ասէ Ներսէս Շնորհալին Ընդհանրականի մէջ. «Թէպէտ յղացեալ որպէս զմարդ, այլ 'ի Հոգւոյն Սրբոյ որպէս զաստուած. Քաղցեալ որպէս զմարդ և զմեռեալս յարուցանէր՝ աստուածային զօրութեամբ, որպէս զԱստուած»։

Հաւատոյ Հանգանակը Քրիստոսի ծը-
նունդենէն յետոյ կը յիշէ նոքա Զարլա-
բանդը, Խալբոնիոնը, Թաղոն եւ այլն։
Այսու կ'ուսուցանէ մեզ, որ Աստուծոյ
Որդւոյ մարդեղութիւնն ունէր նպատակ
ազատելու զմեզ մեր մեղքէն իւր չարչա-
րանքով և մահով։ Թէպէտ Քրիստոսի բո-
լոր կեանքը չարչարանք էր, թէ թշնամեաց
կողմէն և թէ ուրիշ մարդիկներէն։ Բայց
նա չարչարուեցաւ առաւել իւր վերջին
կենաց մէջ և այս վերջին չարչարանքն է,
որ կը յիշուի Հանգանակի մէջ այս խօսքե-
րով. "Զարլաթեալ". պատճառն որ՝ այս
վերջին չարչարանքով Քրիստոս ցոյց տը-
ւաւ զինքն որպէս Զոհ պատրաստուած
մահուան համար, եւ ցոյց տուաւ իւր
վերայ բոլոր մարդարէութեանց կատա-
րումն, զոր մեք կը կարդանք մարգարէից
գրոց մէջ Մեսիայի վերայ և մանաւանդ
Եսայեայ մարգարէութեան մէջ։

Քրիստոսի Զարլաթանը եւ Մահը թէ-
պէտ կատարուեցաւ թշնամութեամբ
Երրայեցւոց գլխաւոր քահանայից և Պի-
լատոսի թուլութեամբ, բայց Ս. Գիրքը
մեզ կ'ուսուցանէ, որ այս զոհը զմեզ մեր
մեղաց դատապարտութենէն փրկելու

համար էր։ Կարճ առնելք՝ Քրիստոս զահ
եղաւ, որ զմեզ արդարացնէ և յաւիտե-
նական կեանք տայ։ Յովհաննէս Մկրտիչն
կը նմանեցնէ զՔրիստոս Գառին, զոր կը մոր-
թէին Եբրայեցիք պասէքի ժամանակ, ա-
սելով. «Ահաւասիկ Գառն Աստուծոյ, որ
բառնայ զմեղս աշխարհի»։ Յով. Ա։ 29։
«Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց. և
ոչ թէ մերոցն միայն, այլ ամենայն աշ-
խարհի»։ Ա. Յով. Բ. 2։ «Զի այն՝ որ չէր
գիտէր զմեղս, վասն մեր մեղս արար, զի
մեք եղիցուք նոմա արդարութիւն Աս-
տուծոյ»։ Բ. Կորն. Ե. 21։ Հաղորդութեան
խորհուրդն հաստատելով՝ Քրիստոս ինքն
եւս կ'ասէ. «Առէք կերայք՝ այս է մարմ-
մին իմ։ . . . Արբէք 'ի դմանէ ամենեքին։
Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ 'ի
մերոյ բազմաց հեղուս 'ի թողութիւն»։
Մատ. ԻԶ. 26—28։ Մարգարէքն եւս կը
յիշեն այս Զոհն, որ է Քրիստոս։ «Իբրեւ
զոչխար 'ի սպանդ վարեցաւ, իբրեւ որոյ
առաջի կտրչի անմռունչ կայ, այնպէս ոչ
բանայ զբերան իւր»։ Եսայ. ԾԳ. 7։
Քրիստոս ինքն կը յայտնէ իւր կամաւոր
զոհ լինելն. «Ոչ ոք հանէ զնա յինէն
(զանձն իմ) այլ ես դնեմ զնա անձամբ

խմով։ Իշխանութիւն ունիմ դնել զնա. և Իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս պատուէր առի ի Հօրէ իմմէ ։ Յով. Ժ. 18։

Հանգանակը յիշելով Քրիստոսի խաչելութիւնը մեր միտն կը բերէ՝ թէ ինչպէսի ցած և անպատիւ ատելիանաց պատժով մեռաւ Քրիստոս։ Խաչով պատժելին Եբրայեցւոց մէջ հաստատուած էր անիծեալ։ Քրիստոս՝ ինչպէս փարատող ամենայն մեղաց և անէծից, որ մարդոյ վերայ էր, յանձնառաւ այս անիծեալ տանջանաց պատիժն և այսպիսի մահով է ահա, որ նա կը մատեցնէ զմեզ Աստուծոյ։ «Քրիստոս գնեաց զմեզ յանէծից օրէնքն, եղեալ վասն մեր անէծք, զի գրեալ է, թէ անիծեալ է ամենայն (մարդ) որ կախեալ կայցէ զփայտէ »։ Գաղ. Գ. 13։ «Որ չիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհեսցէ մեզ »։ Հռով. Ը. 32։

Քրիստոսի խաչով մեք կարող եմք ստանալ ամեն օգնութիւն, որ մեզ հարկաւոր է կեալ եւ չարչարուիլ ինչպէս Քրիստոնեայ։ Քրիստոսի խաչը կարող է

մեղ տալ ողորմութիւն, զօրութիւն եւ միխիթարութիւն։ Քրիստոսի խաչն է միայն Քրիստոնէիս փառքն ու պարծանքը, ինչպէս կ'ասէ Պօղոս. «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն 'ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ 'ի խաչ ելեալ է և ես աշխարհի»։ Գաղ. Զ. 14։

Մահէն յետոյ Հանգանակի մէջ կը յիշուի Քրիստոսի Թաղումն; փոսն ղն՝ Թաղումն իւր բոլոր հանգամանքներով կը հաստատէ Նորա ճշմարիտ մահն, և Նորա Թաղմամբ կատարուեցաւ այս մարգարէութիւնն, որ նա պիտի ունենայ պատուական գերեզման։ «Եւ տայց զչարս փոխանակ գերեզմանի Նորա և զմեծամեծս փոխանակ մահու Նորա»։ Եսայ. ԾԳ. 9։

Թաղումէն յետոյ կը յիշուի Քրիստոսի Յարութիւնն յերրորդ աւուր, որով կատարուեցաւ Նորա առաջուց ասած խօսքն իւր Յարութեան վերայ. «Եւ յերիր աւուր յառնել»։ Մատ. ԺԶ. 21։ Պատճառն այս է, որ երէքօրեայ Թաղումն բաւական էր ճշմարտելու Նորա մահն։ Բայց Նորա մարմինն պիտի չը տեսնէր ապականութիւն։ «Զի ոչ թողցես զանձն իմ 'ի

գժոխս և ոչ ուսցես սրբոյ քումմ՝ սեսա-
նել զապականութիւն »։ Սաղ. ԺԵ. 10։

Յարութիւնէն յետոյ կը յիշուի Քրիս-
տոսի Համբարձումն, որոյ համար ասած էր
աշակերտաց։ « Իսկ որդ՝ եթէ տեսանիս
յեր զՈրդի մարդոյ՝ զի ելանիցէ՝ ուր էր
զառաջինն »։ Յով. Զ. 63։ Ճշմարիտ որ՝
նա պէտք է համբառնար, պէտք է բռնէր
իւր տեղն, զոր Թողուց մեր փրկութեան
համար, պէտք է նստէր այն տեղ, որպէս
Որդի մարդոյ, իբրեւ հաստատումն իւր
կատարեալ հնազանդութեան և անսահ-
մանն սիրոյ առ Հայրն իւր, որ մեզ ցոյց
տուաւ իւր չարչարանքով և մահով։ « Որ
'ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յա-
փշտակութիւն համարեցաւ զլինելն հա-
ւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնա-
ցոյց, զկերպարանս ծառայի առեալ, 'ի
նմանութիւն մարդկան եղեալ և կերպա-
բանօք դտեալ իբրեւ զմարդ »։ Փիլ. Բ. 6։
Քրիստոսի այս փառքը Հանգանակի մէջ
կը յիշուի այսպէս։ « Նստաւ ընդ աջմէ Հօր »։

Աստուած Հոգի լինելով՝ այս խօսքերը
պէտք է խմանամք այնպէս, ինչպէս յար-
մար է նորա հոգեւոր բնութեանը։ Հան-
գանակի մէջ Աջ ասելով՝ ինչպէս կ'ասէ

և Դաւիթ մարգարէն. «Առաց տէր զտէր իմ. նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց». Սաղ. ՃԺ. 1. կը նշանակէ Յաքոբիան առ առաւածային փառաց։

Այս սովորութիւնն ունէին Հարաւային Թագաւորներն, որ իրենց աջ կողմը կը նստեցնէին, և շատ անգամ իրենց ու Թոռի վերայ, այն մարդիկն զոր կը պատուէին և մեծ կը համարէին։ Սաղոմոն եւս իւր մայրը իւր աջ կողմն նստեցուց։ Յովհաննու եւ Յակոբի մայրն խնդրեց Քրիստոսէն աջ կողմն նստեցնել իւր որդւոց մինն։ «Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ որդւովք իւրովք հանդերձ, երկիրպագանէր՝ և խնդրէր ինչ 'ի նմանէ։ Եւ նա ասէ ցնա. զի՞նչ կամիս։ Ասէ ցնա, ասա զի նստցին սոքա երկու որդիքս իմ՝, մի ընդ աջմէ քումմէ՝ և մի ընդ ահեկէ յարքայութիւնն քումմ»։ Մատ. Ի. 20—21։

Հանգանակի մէջ յիշած խօսքերու մէջն այս է, որ Քրիստոս բարձրացաւ երկնային հոգիներէն աւելի բարձր, կը կառավարէ զմեզ, կը Թագաւորէ մեր միջոցաւ։ Ի՞նչպէս իւր Եկեղեցւոյն, ինչպէս

Պօղոս Առաքեալն կ'ասէ. «Զոր յաջողեաց 'ի Քրիստոս, զի յարոյց զնա 'ի մեռելոց՝ և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս 'ի վերայ ամենայն իշխանութեան, և պետութեան և զօրութեան, և տէրութեան և ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ, այլ և 'ի հանդերձելումն»։ Եփես. Ա. 20—21։

Քրիստոս մեր երկինքն հանդերձեալով՝ խոստացաւ բարեխօս լինիլ մեզ համար առ Հայր, որով և շարունակեց իւր քահանայութեան պարտաւորութիւնը։ Ինչպէս Հին Ուխտի քահանայապետը կը մտնէր Սրբութեան Խորանը զոհի արիւնով և կը բարեխօսէր առ Աստուած ժողովրդի համար, այնպէս եւս Քրիստոս, Նոր Ուխտի կենսաւոր քահանայապետը, մնաւ բարեխօսելու՝ ոչ թէ ձեռքով չինած տաճարն, այլ անձեռագործն. «Զի ոչ եմտէ 'ի ձեռագործ Սրբութիւնսն եմուտ Քրիստոս՝ յօրինակս ճշմարտութեանն, այլ 'ի բուն իսկ յերկինս, յանդիման լինիլ երեսացն Աստուծոյ վասն մեր»։ Եբր. Թ. 24. և կը բարեխօսէ մեզ համար։ «Եւ եթէ մեղայցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զա-

նարատն »։ Ա. Յով. Բ. 1։ Երկինքն հաւատ բառնալով՝ բայց աւ մեզ համար Քրիստոս երկնային դուռն, պատրաստեց մեզ հաւատար տեղի երկնային ժառանգութեան, հնարեց մեզ աստուածային ողորմութիւնը, լինելով մեր գլուխն՝ զմեզ իրեն ամենայն ամ չինեց։ «Ընդ նմին յարոյց և ընդ նմին նստոյց յերկնաւորս 'ի Քրիստոս Յիսուս »։ Եփես. Բ. 6։ Երկինքը հաւատանալով՝ խոստացաւ իւր աշակերտաց՝ ուղարկել Հոգին Սուրբ և նոքաք՝ բոլոր աշխարհին։ «Լաւ է ձեզ, եթէ ես երթամ, զի եթէ ես չէ երթայց՝ մխիթարիչն չէ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ՝ առաքեցից զնա առ ձեզ »։ Յով. ԺԶ. 7։

Ինչպէս Որդին Աստուծոյ մարդկային սիրոյ համար առաւ մարդկային բնութիւն, նոյնպէս եւս կամի, որ մեք եւս մանակից լինիմք նորա Աստուածութեանը։ Որոյ համար կը տայ մեզ իւր Հոգին, որ պատրաստէ զմեզ և մեք ունենամք հաղորդութիւն նորա Աստուածութեան հետ։

Հանդանակն մեր միան կը բերէ, որ Յիսուս Քրիստոս պէտք է գայ իւր վերջին դատաւորն հանդերձ։ Այս Վէրջին Դատաստան Քրիստոս

բիստոսի, որ կը յիշուի Սուրբ Գրոց մէջ, պէտք է լինի 'ի կատարածի աշխարհի, ինչ ժամանակ նորա թագաւորութիւնը կը հաստատուի բոլոր աշխարհի մէջ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

«Հաւատամք Ի Հոգին Սուրբ» և այլն։

Հաւատալ Ի Հոգին Սուրբ կը նշանակէ հաւատալ այն ամենայն բանին, ինչ որ կ'ուսուցանէ մեզ Սուրբ Գիրքը Հոգւոյն Սրբոյ վերայ, զգալ նորա օգնութեան և ուղղմութեան կարօտութիւնը եւ հարկաւորութիւնը, խնդրել Ջերմեռանդութեամբ՝ շնորհք, ուղղմութիւն և զօրութիւն՝ նորա տուած շնորհքներն գործ դնելու համար։

Սուրբ Գիրքն կ'ուսուցանէ մեզ՝ թէ ինչ է Հոգին Սուրբ ինքն ըստ ինքեան եւ ինչ է՝ վերաբերելով առ մեզ։ Կ'ուսուցանէ թէ՝ ինքն ըստ ինքեան Հոգին Սուրբն է Երրորդութեան մի անձն, նոյն պէս անսահման, յաւիտենական և ճշմարիտ Աստուած ընդ Հօր և ընդ Որդւոյ։ «Զի երեք են որք վկայեն յերկինս. Հայր,

Բանն և Հոգին Սուրբ »։ Ա. Յովհ. Ե. 7—8։ Սուրբ Գիրքն կը խոստովանի զնա Աստուած. «Ասէ Պետրոս. Անանիա, ընդէ՞ր էլիր Սատանայ զսիրտ քո՝ սուտել քեզ Հոգւոյն Սրբոյ. ոչ ստեցեր մարդկան, այլ Աստուծոյ »։ Գործ. Ե. 3—4։ «Ո՞չ գիտէք, եթէ տաճար էք Աստուծոյ, և Հոգի Աստուծոյ բնակեալ է 'ի ձեզ »։ Ա. Կորն. Գ. 16։

Սուրբ Գիրքը կը տայ Հոգւոյն Սրբոյ աստուածային կատարելութիւններ. —

Ա. Հեռատեսութիւն. — «Յո՛ երթայց ես յոգւոյ քումմէ և կամ յերեսաց քոց ես յո՛ փախեայց։ Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես. և եթէ իջանեմ 'ի դժոխս ես անդր մա՛ ես »։ Սաղ. ՃԼԹ. 7—8։

Ա. Հեռագիտութիւն. — «Այլ յայտնեաց մեզ Աստուած Հոգւովն իւրով, զի Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ »։ Ա. Կորն. Բ. 10։

Ա. Բարձրագոյնութիւն. — «Եւ երկիր էր անտեսեւոյթ և անպատրաստ և խաւար 'ի վերայ անդնդոց. և Հոգի Աստուծոյ շրջէր 'ի վերայ ջրոց »։ Ծնն. Ա. 2։

Յայտնութիւն. — «Քանզի ո՛չ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն

թիւն երբէք, այլ 'ի Հոգւոյն Սրբոյ կը-
ներալք խօսեցան մարդիկ յԱստուծոյ »։
Բ. Պետ. Ա. 21։

Առաքելական պատգամ.— « Գնայէք այ-
սուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հե-
թանոս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր
և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ »։ Մատ. ԻԸ.
19։ « Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրի-
ստոսի և սէրն Աստուծոյ, եւ հաղորդութիւն
Հոգւոյն Սրբոյ, ընդ ձեզ ամենեսին »։ Բ. Կորն. ԺԳ. 13։

Մեք պէտք է որոշեմք Հոգին Սուրբն
իւր տուած շնորհքներէն։ Սուրբ Գիրքն
որոշելով Հոգին Սուրբն իւր տուած շնո-
րհքներէն, ցոյց կը տայ մեզ, որ խոս-
տովանիմք զնա՝ ոչ թէ իբրեւ հասարակ
զօրութիւն Աստուծոյ, այլ որպէս մի ան-
ձն Սուրբ Երրորդութեան։ « Թէպէտ և
բաժինք շնորհայ են, այլ Հոգի նոյն է »։
Ա. Կորն. ԺԲ. 4։ « Եւ մի տրտմեցուցանէք
զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցայք
յաւուրն փրկութեան »։ Եփես. Դ. 30։

Հոգին Սուրբն է Ճանապարհ.— « Եւ զԱ-
ստուծոյն ոչ ոք գիտէ, եթէ ոչ Հոգին
Աստուծոյ »։ Ա. Կորն. Բ. 11։

Նա է Միակամ.— « Այլ զայս ամենայն

յանկոյէ մի՛ եւ նոյն Հոգի, բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի »։ Ա. Կոր. ԺԲ. 11։

Նա է Ո-ստիւ. — «Այլ մեք՝ ոչ ելեալ զհոգի աշխարհիս այլ զորիկ առաք, այլ զՀոգին որ յԱստուծոյ, զի ծանիցուք զոր՝ զոր յԱստուծոյն շնորհեցաւ մեզ »։ Ա. Կոր. Բ. 12։ «Եւ զոր խօսիմք ոչ ելեալ մարգկեղէն ուսմամբ ճարտարութեամբ բայ նից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն ընդ հոգեւորս զհոգեւորսն համեմատեմք »։ Ա. Կոր. Բ. 13։

Նա է Վիլ և Բարիեսս. — «Նոյն ինքն Հոգին վկայ է հոգւոյս մերում, ելեալ եմք որդիք Աստուծոյ »։ Հռով. Ը. 16։ «Այլ ինքն Հոգին բարեխօս լինի՝ ի հեծութիւնս անմուտանելիս։ Զի ըստ Աստուծոյ բարեխօս է վասն սրբոց »։ Հռով. Ը. 27։

Վ. Երաքերելով սա մեզ՝ Հոգին Սուրբն է Աղբիւր Դրոնեան Աստուծոյ ընդ մարդիսն։ Նա է յաստուկ և անդադար ներգործող մեր փրկութեան համար։ Նա է միացնող զմեզ Ճշմարիտ հաւատով Քրիստոսի հետ։ Նա է արժանացնող Քրիստոսի ողորմութեանը՝ նորոգելով զմեզ և սրբելով։ «Եւ դուք այնպիսիք ոմանք էիք։

այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ 'ի Հոգին Աստուծոյ մերոյ »։ Ա. Կորն. Զ. 11։

Հոգին Սուրբն է մեր Ո-ւրախո-ւթիւնն և խաղաղո-ւթիւնը. « Զի ոչ է աքքայութիւնն Աստուծոյ կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն և խաղաղութիւն և խնդութիւն 'ի Հոգին Սուրբ »։ Հռով. ԺԴ. 17։

Այս է Նշան, որով Քրիստոս զմեզ կը ճանաչէ. « Եւ մի՝ սրտմտեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցայք յաւուրն փրկութեան »։ Եփես. Դ. 30։

Այս մեզ կը տայ զքո-ւթիւն և խրոնը-ւթիւն զԱստուած անուանելու Հայր։ « Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյ իւրոյ 'ի սիրտս մեր, որ աղաղակէ՝ աբբա՛, Հա՛յր »։ Գաղ. Դ. 6։

Հոգւոյն Սրբոյ շնորհքներն կը բաժանին երկու. — Հրաշալի և Հասարակ։ Հրաշալի շնորհքներն ստաւ Աստուած առաքելոց և մարգարէից. իսկ հասարակներն ամենայն մարդկան։ Հրաշալի շնորհքները ստացան առաքեալներն և մարգարէները, որով կատարեալ իմացան Աւետարանի ճանաչողութիւնն եւ կարողացան

խօսել զանազան լեզուներով, մարգարէանալ եւ հրաշագործել։ Առաքեալներն ստացան այս շնորհքները, որով կարողացան քարոզել Աւետարանը բոլոր աշխարհին եւ ցոյց տալ, որ իւրեանց ուսուցչութիւնն երկնային է և ուստուն՝ աստուածային։ «Եւ բանն իմ եւ քարոզութիւն, ոչ պատիր բանիւք իմաստութեան, այլ արդեամբ Հոգւոյն և զօրութեամբ»։ Ա. Կորն. Բ. 4։ «Զի Աւետարանն մեր ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ, այլ և զօրութեամբ և Հոգւով Արբով»։ Ա. Թես. Ա. 5։ Գործք Առաքելոցը մեզ կ'իմացնէ, որ ինչպէս Առաքեալներն, նոյնպէս և ամեն ճշմարիտ հաւատացեալներն՝ Քրիստոնէական եկեղեցւոյ նոր հաստատուելեան ժամանակ կը գործէին հրաշքներ։ Բայց երբ եկեղեցին բաւական հաստատուեցաւ, որ հաստատակ քահանայքն ան գամ կարող կը լինէին քարոզել Աւետարանն և կառավարել իւրեանց եկեղեցին՝ կարօտութիւն չը մնաց այս սրտուքին հրաշագործութեանց։ Մէք պէտք է ուրախանամք, որ մեզ սրուած են հաստատակ շնորհքներ, որք կարող են նորոգել, այսինքն տալ մեզ հաւատ, արքուիւն և մեղքերու

ՐԻՆ։ Պէտք է ուրախանամք, որ Հոգւոյն Սրբոյ այս շնորհքներով տակաւին այս աշխարհիս մէջ կարող եմք ճանաչել յաւիտենական երջանկութիւն և ընդունակ լինել փրկութեան։ Առաքեալն խօսելով հրաշալի շնորհայ վերայ՝ կը յորդորէ որ աւելի օգտաւէտ շնորհքներ որոնեմք. «Բայց՝ նախանձաւորք լերուք շնորհացն, որք լաւքն են». Ա. Կորն. ԺԲ. 31. և կը գրէ Սէրն առ Ապոլոնաց և առ ընկերն։

Հոգւոյն Սրբոյ տուած հատարակ շնորհքները բազմաթիւ են և զանազան։ Այս կարգին մէջ կարելի է դնել ամենէն առաջ այն ճանաչողութիւնը, զոր մեք կրնամք՝ կարդալով եւ քարոզելով Աստուծոյ խօսքը։ Սա եւս Հոգւոյն Սրբոյ շնորհքն է, վասն զի նորա զօրութեամբ գրեցին Սուրբ Գիրքն Մարգարէներն եւ Առաքեալներն։ Աստուած կը տայ մեզ հատարակ շնորհքները բարի գործքով, բարի մտադրով, բարի օրինակով և կը տայ սոյն ուղղմութիւններն այս կեանքս մէջ արտաքին միջոցներով։

Այս պատճառաւ ահա՛ Հոգւոյն Սրբոյ շնորհքն պէտք է զանազանել մոլեկ բնութենէ։

Ա. Մոլիրոնոլիանն կ'արհամարհէ Հը նարհաց արտաքին միջոցներու օգնութիւնը. իսկ ընդհակառակն՝ Հոգին այս օգնութիւնը կը գտնէ իւր համար հիմն եւ գործ կ'ածէ իւր նպատակի համար։

Բ. Մոլիրոնոլիանն կամի որ Աստուծոյ ներգործութիւնը լինի միշտ զգալի կերպիւ, ինչպէս կը տեսնենք Առաքելոց վերայ. իսկ ընդհակառակն՝ Հոգին կը ներգործէ ծածուկ և անզգալի։ «Զի հոգմն ուր կամի շնչէ և զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի գայ կամ յո երթայ, այսպէս և ամենայն ծնեալն 'ի Հոգւոյն»։ Յովհ. Գ. 8։

Գ. Մոլիրոնոլիանն կը հեռացնէ ամենայն քննութիւն և դատողութիւն և կը հեռանի իւր վառուած երեւակայութեանը. իսկ ընդհակառակն՝ Հոգին կը տայ մեր մտաց զօրութիւն և չարգելուր մեր տայ քննութիւնն կամ դատողութիւնն։

Դ. Մոլիրոնոլիանն կը ջանայ աւելի առաջ գնալ Աւետարանի ուսմունքէն, իսկ ընդհակառակն՝ Հոգին չ'որոներ նոր յայտնութիւն։

Ե. Մոլիրոնոլիանն թոյլ կը տայ որ մնան իւր մէջ չարութիւններ, այսինքն

ՀՆՈՒԹԻՒՆ, ԱՐԾԱԹԱԽՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ՈՐ ՀԱՍԱՐԱԿ ԱՂԱՍՈՒԹԻՒՆ ՉԸ ՏՍՊ ՈՒՐԻՇ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆՑ, ԱՅԼ ԿԸ ՀԱՂԱԾԷ ԵՒ ԿԸ ԵԵՂԷ. ԻՍԿ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԻՆ ԵՆՈՒԹԻՆ ՈՒՆԻ ԻՒՐ ԵՇԱՆԸ — ԱՅՆ Է ՄԱՐԴԱՓԷՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՐԲՈՒԹԻՒՆ։

ՄԵՐ ՄԻՏՔԸ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ, ՈՐ ՀՈԳԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՒՆԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՀՈԳԵՈՅ ՎԵՐՈՅ։ ՄԵՐ ՈՒԿԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՐԿԱԴՐԷ ԶՄԵԶ ԿԳԱԼ ԵՒ ԽՍՏՈՎԱՆԻՔ ՄԵՐ ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀԱՅ ԵՒ ԿԸ ՅՈՒՍԱԴՐԷ ՈՐ ԱՄԵՆԵՆՈՒՆ ԱՐԱՐԻՉ ՀՈՅՆ ՉԸ ԽՆԱՅԵՐ ԵՐԲԷՔ, ԱՅԼ ԿԸ ՏՍՊ ԻՒՐ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ։

ՍՈՒՐԲ ԳԻՐՔՆ Կ'ՈՒՍՈՒՑԱՆԷ, ՈՐ ՄԵՔ ԲՆԱՒ ՊԷՏՔ Չ'Է ԵՐԿՄԻՍ ԼԻՆԻՄՔ, ԵՐԲ ԿԸ ԽՆԴՐԵՄՔ ԱՍՏՈՒԾՄԷ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՆՈՐԱՍ ՊԱՏՍՈՒԻՐԱՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ։ Ս. ԳԻՐՔՆ Կ'ԱՍԷ՝ ԱՍՏՈՒԱԾ Է ՈՐ ԿԸ ՇԱՐԺԷ ՄԵՐ ՀՈԳԻՆ ԻՒՐ ԲԱՐԵԲԱՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ Կ'ՈՒԶՂԷ ԻՒՐ ՊԱՏՍՈՒԻՐԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ։ "ԶԻ ԱՍՏՈՒԱԾ Է, ՈՐ ՅԱՋՈՂԷ 'Ի ՄԵԶ ԸՆԿԱՄԵԼՆ ԵՒ ՂԱՌՆԵԼՆ ՎԱՆ ՀԱՃՈՒԹԵԱՆ"։ ՓԻԼ. Բ. 13։ ԵՄԱՆՈՍՊԷՍ Կ'ՈՒՍՈՒՑԱՆԷ, ՈՐ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ ԿԸ ԲՆԱԿԻ ԻՒՐ ՀՇՄԱՐԻՏ

պաշտօնայ մէջ և այս պատճառաւ նոքա կ'անուանին Տաճար Աստուծոյ։ «Ո՛չ գիտէք, եթէ տաճար էք Աստուծոյ և Հոգի Աստուծոյ բնակեալ է 'ի ձեզ»։ Ա. Կորն. Գ. 16։ Սուրբ Գիրքն կ'ուսուցանէ, որ Հոգին Սուրբ է, որ կը ծնանի մեր մէջ Քրիստոնէական առաքինութիւն. «Իսկ պտուղ Հոգւոյն այս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն»։ Գաղ. Ե. 22-23։ Կ'ուսուցանէ նոյնպէս թէ՝ Աստուած է որ կը բանայ մեր սիրտն իւր խօսքի հաճար և կը տայ համկացողութիւն և մեք առանց Հոգւոյն Սրբոյ օգնութեան՝ ոչ այլ ինչ ենք, եթէ ոչ շնչաւոր կենդանի, որ կարող չէ հասկանալ Աստուծոյ բանք։ «Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա և ոչ կարէ գիտել, եթէ հոգեպէս քննի»։ Ա. Կորն. Բ. 14։

Հոգւոյն Սրբոյ ամէն շնորհքները մեք կարող ենք ստանալ։

Ա. Հեղինէամբ պրպի, զգալով նորա շնորհաց հարկաւորութիւնը. «Զքաղցեալս լցոյց բարութեամբ և զմեծատու

նրա արձակեաց ունայնս »։ Ղուկ. Ա. 53։

Բ. Աղօթքով — « Ապա թէ որ 'ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ՝ որ ասայն ամենայնի ա-ռատապէս՝ և ոչ նախատէ և տայցի նը-մա »։ Յակ. Ա. 5։ Ուրեմն՝ մարդ կը կառա-վարուի Աստուծոյ շնորհքով և ազատու-թեամբ, ծառայ է նա իւր բնական տը-կարութեամբ, ազատ է աղօթքով, իր-մէն է կախուած խնդրել և ստանալ զո-րութիւն. որովհետեւ ինքն ըստ ինքեան չ'ունի զօրութիւն։

Գ. Գործ դնելով Աստուծմէ տուայած շնորհքն։ Մոլորութիւն է ասասել թէ մեք միայն մեր կարողութեամբ կարող եմք ամէն բան անել։ Մոլորութիւն է նոյնպէս ասել՝ թէ առանց մեզ՝ կ'պնէ. Աստուած մեզ համար ամէն բան. այլ ընդհակա-ռակն՝ մեք եւս մեր կողմէն պէտք է գործ դնեմք այն ամէն հնարքներն, զոր Աստ-ուած կը տայ մեզ, այն է կարդալ նորա խօսքն, մտածել նորա օրինաց վերայ, ալ-թուն կենալ և հետեւիլ այն բարի խոր-հրդին, զոր կը ծնանի մեր մէջ աստուա-ծային խօսքը։ Այս պայմանով կարող է մարդ ստանալ աստուածային շնորհքն և

բազմացնել կամ շահեցնել. վասն զի՝ այն մարդը որ ունեցած շնորհքն գործ չընդնէր, Աստուած կ'առնէ և կը տայ նման, որ յաժամայ է գործ դնելու։ «Զի որ գուցէ տացի նմա և յաւելցի և որ ոչն գուցէ և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ»։ Մաթ. ԺԳ. 12։ Իսկ ընդ հակառակն՝ եթէ մեք առ ոչ ինչ համարեմք այս աստուածային շնորհքներն և գործ չը դնեմք, կամ գործ դնեմք չարութեամբ, այս կը նշանակէ մեղանչել, զոր Սուրբ Գիրքն կ'անուանէ փրկել և ջնջուցանել Հոգին Սուրբ մեր մէջ։ «Եւ մի արհամարհուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ; որով կնքեցայք յաւուրն փրկութեան»։ Եփես. Դ. 30։ «ԶՀոգին մի՛ շիջուցանէք»։ Ա. Թեսաղ. Ե. 19։

Կը տեսնենք ահա, որ պէտք է հաւատալ 'ի Հոգին Սուրբ, որ գործակից է ընդ Հօր և ընդ Որդւոյ մեր փրկութեան համար։ Եթէ մեք չը հաւատամք թէ ի՞նչ է Հոգին Սուրբ, ի՞նչ է արած մեզ՝ համար և կամ ի՞նչ կամի առնել մեր մէջ՝ կը նշանակէ որ մեք չենք կամիր հաղորդութիւն ունենալ նորա շնորհաց։ Մեք չենք կարող ստանալ նորա շնորհքներն, միշտ կը մընամք մեղաց մէջ և չ'ենք լինիր Քրիստո-

նեայ։ «Բայց դուք ոչ էք մարմնով, այլ հոգւով. եթէ իսկ Հոգին Աստուծոյ 'ի ձեզ բնակեալ. ապա եթէ ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի, սա չ'է նորա »։ Հռովմ. Ը. 9։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

« Հաւատամք ի մի միոյն ընդհանրական և առաքելական Սուրբ Եկեղեցի » և այլն։

Եկեղեցին է հաւաքումն այն մարդկանց, որք կը հաւատան Յիսուս Քրիստոսին։ Այն մարդիկը, որք կը հաւատային Առաքելոց քարոզութեանը և կ'ընդունէին Աւետարանը՝ բնական էր, որ որոշէին Հեթանոսներէն և Եբրայեցիներէն՝ զԱստուած պաշտելու համար հոգւով և ճշմարտութեամբ. ինչպէս սուտին անգամ այսպէս հիմնուեցաւ Յերուսաղէմ Եկեղեցին։ Այս հաւատացեալները հիմնեցին միաբանութիւններ, զոր կ'անուանէին Յունայ լեզուով Էկլէզիա, Եկեղեցի, այսինքն ժողով։ Թէ այս հաւատացելոց ժողովներն և թէ սոցա հետեւող միւս

ժողովներն և թէ՛ Հին Ուխտի Ճշմարիտ առաքելական պաշտամունքներն մի և նոյն հաւատով և յուսով միանալով իրար հետ՝ կը կազմեն ընդհանուր միաբանութիւն Քրիստոնէից, զոր կ'անուանենք Սուրբ, Ընդհանուր Եկեղեցի։

Հաւատացելոց այս ժողովներն՝ ինչպէս որ կը յայտնեն իւրեանց աբստրակտն երեւելի միութիւնն'ի Քրիստոս, նոյնպէս պէտք է ունենան և ներքին հոգեւոր միութիւն'ի Քրիստոս, և այս անտեսանելի միութիւնն յայտնի է միայն հաւատացողին, թէ ունի արդեօք սրբութիւն, թէ ոչ, եւ յայտնի է Աստուծոյ, որ սրտագէտն է ամենայնի, սորա համար է որ Քրիստոս կ'ասէ. «Բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք»։ Մատ. ԻԲ. 14։ Կամ կը նմանեցնէ սուկանի՝. «Նման է արքայութիւն Աստուծոյ ուռկանի արկելոյ»։ Մատ. ԺԳ. 48։ Այս հոգեւոր եկեղեցւոյ համար կ'ասէ Պարգիս Շնորհալին։ «Յամենայն ազգաց և լեզուաց, որք սահակերտեցան Աւետարանին եւ'ի վէճն Քրիստոս հաւատովք մերձեցան՝ յամենեցունց մի տաճար հոգեւոր և մի եկեղեցի շինեցաւ»։ Այս հոգեւոր եկեղեցին

էր, զոր փառաւորէին մեր նահատակնե-
րն. — «Եկեղեցիք ոչ են պարզեալք թա-
գաւորաց եւ ոչ արուեստ ճարտարու-
թեանց, և ոչ գիւղք խնամանոյ և ոչ ա-
ւար քաջութեան զինուորաց և ոչ պատիր
խաբէութիւնք դիւաց... : Այլ հնարքն
են մեծին Աստուծոյ. ոչ միաւորեալք 'ի
մարդկանէ առաւել, այլ ամենայն բա-
նաւոր աղգաց, որք վիճակեալք են 'ի
բնակութիւն 'ի ներքոյ արեգականն ». :
Եղէք :

Եկեղեցին կ'անուանի Ընդհանրական,
վասն զի նա չը սահմանուի մի աղգով,
ինչպէս Երուսաղեմոյ Հին Ուխտի եկեղե-
ցին, այլ հաւաքուն է ամեն ժամանակի
և ամեն երկրի հաւատացելոց. Ամենեն
ակսած մինչև 'ի կատարած աշխարհի : «Մի
Եկեղեցի անուանեմք ամենայն Քրիստո-
նեայքս ». կ'ասէ Ներսէս Լամբրոնացին :
Ամենայն Նահատակաց և Մարգարէք, որք
փրկութեան յայտ դրած էին Մեսիայի
վերայ՝ են անդամք Եկեղեցւոյ, ինչպէս և
մեք Քրիստոնեայքս Աւետարանով : «Նը-
մա ամենայն մարգարէքն վկայեն զթողու-
թիւն մեղաց առնուլ անուամբ նորա ա-
մենայն հաւատացելոց ». Գործ. ԺԳ. 43 :

Սուրբ Գիրքը կը նմանեցնէ Եկեղեցին շինուածի, որոյ գագաթին Աստուած իւր յաւիտենական իմաստութեան մէջ ծրագրեց և դրաւ նորա Հիմ, որ է Քրիստոս, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Զի զհիմն այլ ոչք կարէ դնել, քան զեղեալն՝ որ է Յիսուս Քրիստոս» ։ Ա. Կորն. Գ. 11 ։ Նա է Վէմ, որ կը պահէ և կը պաշտպանէ բոլոր շինուածն և Եկեղեցւոյ անդամներն են նիւթ այս շինուածոյն. «Դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր յանարատ քահանայութիւն մատուցանել զհոգեւորսն պատարագս՝ հաճոյս Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ։ Դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէս զի զձեր առաքինութիւնս նուիրեսջիք յայն՝ որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր զարմանալի լոյսն» ։ Ա. Պետ. Բ. 5—9 ։ Սուրբ Գիրքն երբեմն կը նմանեցնէ Եկեղեցին Արքայի, որոյ անդամներն կապուած են ամուր կապով և լի են կենդանութեամբ որոց գլուխն է Քրիստոս. «Ա՛յլ ճշմարտութեամբ՝ սիրով՝ աճեսցուք ի նա զամենայն, որ է Գլուխ Քրիստոս. ուստի ամե-

նայն մարմին յօդեալ և պատշաճեալ ա-
մէն այն խաղալեօք տարբերութեան՝ ըստ
ազդեցութեան՝ չափով ըստ իւրաքանչիւր
մասին՝ զաճումն մարմնոյ գործէ՝ 'ի շինած
ութիւն իւրոյ սիրով »։ Եփես. Դ. 16։

Եկեղեցւոյ կոչումն լինելով մի հօտ
հաւատացելոց Հրէից և Հեթանոսաց և
ունենալով զ Հովիւ, զ Փրկիչ և զ Տէր Յի-
սուս Քրիստոս, այս պատճառաւ՝ Հանգա-
նակի մէջ ասելով Ընդհանրական՝ կ'ասուի և
Մի, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. « Որք
միանգամ 'ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիս-
տոս զգեցեալ էք, չիք խտիր, ոչ Հրէի,
և ոչ Հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազա-
տի. ոչ արուի և ոչ իգի, զի ամենեքեան
դուք զ էք 'ի Քրիստոս Յիսուս »։ Գաղ.
Դ. 27։

Հաւատալ յԸնդհանրական Եկեղեցի
կը նշանակէ նախ՝ հաւատալ որ ըստ խոստ-
մանն Յիսուսի Քրիստոսի է և պիտի լինի
Եկեղեցի աշխարհիս երեսին ընտրուած
կամ կոչուած 'ի փրկութիւն աստուածա-
յին հոգւով։ Երկրորդ՝ հաւատալ, որ մեք
կենդանի անդամ՝ եմք Եկեղեցւոյ։ Ընդ-
հանուր Եկեղեցին կը բաղկանդակէ իւր
մէջ յատուկ եկեղեցիներ, որք ունին զա-

նաղան անուններ ըստ ազգի և ըստ տեղ-
ւոյ. զոր օրինակ Կորնթացւոյ, Հռովմա-
յեցւոց, Եբրայեցւոց, Հայաստանեայց
և այլն։ Հայաստանեայց Եկեղեցին որ է.
Սուրբ, ընդհանրական եւ առաքելական
Եկեղեցի, հիմնուեցաւ Թադէոս և Բար-
ղուղիմէոս Առաքելոց քարոզութեամբ(1)։

Եկեղեցին կ'անուանի Սուրբ, վասն զի
նա կ'ուրուշաւ աշխարհէն, կը նուիրուի
Աստուծոյ ծառայութեանն և նորա անդ
ամներն կ'ուխտեն կենալ սրբութեան
մէջ եւ կը գտնեն եկեղեցւոյ մէջ ամեն
տեսակ օգնութիւններ, որոց կարօտ են։
"Որպէս և սիրեաց Քրիստոս զեկեղեցի և
զանձն իւր մատնեաց վասն նորա. զի նա
սրբեսցէ զնա ասաղանին բանիւ, զի կա-
ցուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր
զեկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ, կամ
աղտեղութիւն՝ կամ այլ ինչ յայսպիսի
սեաց, այլ զի իցէ սուրբ անարատ"։

---

(1) Այսքան գրեր կը յարատեւէ նոյն հիման մէջ։ ունի իւր արած պատերազմներն ընդդէմ խաւարի, ունի իւր կրած հալածանքներն, իւր Մարտիրոսներն, Դաւանաւորներն եւ Հայրապետներն։ մինչ բանիւ ունի իւր պատմական կեանքն։ որ կարօտութիւն ունի առանձին ուսման։

Եփես. Ե. 25—26։ Այս Սուրբ անունը կը տամք Եկեղեցւոյն դարձեալ այն պատճառաւ՝ որ նա կը հեռացնէ և հեռի է ամենայն ծուռ և թիւր վարդապետութիւններէ եւ ունի ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ինչպէս են Մկրտութիւն, Դրոշմ, Աստուածաբանութիւն և այլն։

Ա՛ՍՏՈՒԹԻՒՆՆ է սուրբ Խորհուրդ՝ որով կ՚ընդունուիմք Եկեղեցւոյ մէջ, կը լուացուիմք սկզբնական մեղքէ և կը կնքուիմք անդամք լինիլ Եկեղեցւոյ։

Մկրտութիւն բառը կը նշանակէ լուանալ։ Այսօր եւս այս խորհուրդը կը կատարէ Հայաստանեայց Եկեղեցին մի եւ նոյն ձեւով անփոփոխ, ընկղմելով զերեխայն երեք անգամ՝ ջրոյ մէջ և ասելով. "Յանո՛ն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ"։

Մկրտութիւնը հին է. Եբրայեցիք ունէին սովորութիւն մկրտելու հեթանոսներն, որք կամէին նուիրուիլ Ճշմարիտ Աստուծոյ՝ կրօնական մկրտութիւն, որպէս նշան քաւութեան եւ կը լուային հեթանոսութեան աղտն ջրով։ Յովհաննէս Մկրտիչը կը մկրտէր ամենքը, որք կը գային նորա մօտ՝ ստանալու քաւութեան մկրտութիւն, որ նշան էր հեռանալու

ամեն սեռակ չարաչար թիւնեալ է։ Բայց նորա մկրտութիւնը խորհուրդ չէր, վասն զի չունէր խաչ մեջ փրկութիւն։

Յետոյ Քրիստոս ասենգեց մկրտութեան խորհուրդն իւր աշակերտաց հետ բանալու ժամանակն՝ ասելով. «Գնացէք ուրուսիսուս աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ». Մատ. ԻԸ. 19։ «Որ հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի». Մարկ. ԺԶ. 16։ Այս հրամանաւ եւ այս խոստմունքներով Առաքեալներն և նոցա աշակերտներն կը մկրտէին ամենքը, որք կը հաւատային Աւետարանին և կամէին աշակերտիլ այնմ։ Այս սովորութիւնը կը կատարեն ամենայն Քրիստոնէական եկեղեցիներն։

Մկրտութիւնն անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ կը նշանակէ Ա. Որ նա կը կատարուի Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ հրամանաւ կամ զօրութեամբ, Բ. Ամենքը, որք մկրտուած են՝ ոչէտք է ընդունին մի միայն ճշմարիտ Աստուած։— Հայր ասելով՝ որ զմեզ որդի կ'առնէ իւրեն. Որդի ասելով՝ որ զմեզ կը փրկէ. Հոգին Սուրբ

սաեալով՝ որ մեր մէջ կը նորոգէ Աստուծոյ պատկերն և նմանութիւնը վերստին ծննդեամբ աւազանին։

Մկրտութեան ժամանակ ջուր գործածելը մեր միտն կը բերէ մեր ապտեղի բնութեան վիճակն և այն կարօտութիւնը, որ մեր հոգին կը զգայ սրբութեան և նորոգութեան համար. ցոյց կը տայ մեզ այն հոգեւոր շնորհքներն զոր մեք կը գտնենք Աւետարանի մէջ։ «Եւ դուք այնպիսիք ոմանք էիք, այլ լուացարուք, այլ սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և 'ի Հոգին Աստուծոյ մերոյ»։ Ա. Կորն. Զ. 11։

Ուրեմն՝ նոր օրէնքով մեք կրսանանամք մեղաց թողութիւն Քրիստոսի արիւնով, զոր թափեց մեզ համար Խաչի վերայ, և Հոգւոյն Սրբոյ օգնութեամբ որ կ'արժանացնէ զմեզ Քրիստոսի Եկեղեցւոյն անդամ դառնալու։ Մկրտութիւնը կը ներկայացնէ մեզ սկզբնական մեղքը, մեր սեպհական աղտը և սրբութիւնն, զոր մեք կրստանամք Աստուծոյ որդեգիր լինելով Յիսուսի Քրիստոսի միջնորդութեամբ։ Հոգւոյն Սրբոյ շնորհքը Սուրբ Գիրքը շատ տեղ կը նմանեցնէ ջրոյ. վասն զի՝ ինչպէս

Ջուրն ոչ թէ միայն լուանալու համար է, այլ և նորոգելու. նոյնպէս և Սուրբ Հոգին կը սրբէ, կը նորոգէ և կեանք կը տայ հոգւոյն։ «Պատասխանի եւ նմա Յիսուս՝ և ասէ։ Եթէ գիտէիր դու զպարգեւսն Աստուծոյ, և ով է, որ ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ, և տայր քեզ ջուր կենդանի»։ Յով. Դ. 10։ «Զի ես տայ ջուր 'ի ծարաւս՝ որոց գնան յանջրդւոջ, եղիցի զոգի իմ 'ի վերայ զաւակի քո և զոտնութիւնս իմ 'ի վերայ որդւոց քոց»։ Եսայ. Խդ. 3։

Քրիստոսի անունով մկրտուողները պարտական են ոչ միայն խոստմանիլ հրապարակաւ Քրիստոնէութիւնը, ճանաչել զՔրիստոս Փրկիչ, նմա ակնուանիլ ամեն ժամանակ, այլ նոյնպէս պարտական են բոլորովին ընծայել իրենց անձն Քրիստոսի հաւատով և սիրով, ցոյց տալ որ ինքեանք նոր արարած են և պահել այն սրբութիւնը, զոր ստացած են։ «Որ և ըզձեզ ըստ նմին օրինակի կեցուցեալ մկրտութիւնն, ոչ զմարմնոյ աղտն 'ի բաց ընկենելով, այլ զբաւոք մտացն հանդէս առ Աստուած, 'ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի»։ Ա. Պետ. Գ. 21։

Այս պատճառաւ՝ Եկեղեցին 'ի ըս-կիզբն Քրիստոնէութեան կը պահանջէր մկրտուելիներէն քրիստոնէական հաւատոյ կարգ խոստովանութիւն և հրապարակական ուխտ արքութեան մէջ կենալու և աշխարհի համար իրենց անձը մեռած համարելու։

Ընկրմելու ձեւն, զոր գործ կ'ածէ մեր Հայաստանեայց Եկեղեցին, կը նշանակէ Քրիստոսի Մահն, Թաղումն եւ Յարութիւնն։ Կը թաղուի հին մարդը, որ ծնանի նոր մարդ։ Այս բանը մեր միտն կը բերէ Պաղուս Առաքելոյն ասածն. «Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբ 'ի մահ, զի որպէս Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց փառաւք Հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգութիւն կենաց շրջիցուք»։ Հռով. Զ. 4։

Մեր Եկեղեցին ընդունած է երախայից մկրտութիւնը զանազան պատճառաւ. Նախ՝ որ Քրիստոնէից երախայքն ընդունուած են նոր ուխտով, այսինքն Աւետարանաւ։ «Զի ձեզ են աւետիքս և որդւոց ձերոց»։ Գործ. Բ. 39։ Եթէ աւետիքը խոստացուած է Քրիստոնեայ ծնողաց և իրենց որդւոց, ապա ուրեմն կարող են մկրտիլ եւ նոցա որդիքն կամ

երախայքն։ Եվ՝ Եբրայեցւոց երա-
խայքն կ'ընդունէին Թլփատութեամբ
այն ուխտն մէջ, որ տուած է Աստուծ-
մէ Նոցա Հայրերուն, Թէպէտ և Նոքա քն-
դունակ չ'էին ուխտ դնել և ճանաչել իւ-
րենց պարտաւորութիւնը, ինչպէս և Քրիս-
տոնէից երախայքն։ Ինչ ժամանակ Քրիս-
տոս հրամայեց իւր աշակերտաց մկրտել,
Թոյլ տուաւ Նոցա ազատութեամբ
հետեւիլ այս նախնի սովորութեանը, և
երբ աշակերտները կ'արգելուէին երա-
խայքն Նորա մօտ գալու՝ Յիսուս նախա-
տեց աշակերտներն ասելով. "Թոյլ տուք
մանկուտիդ գալ ատ իս դ։ Բաց 'ի սմանէ,
կարծիք չը կայ որ Առաքեալներն ինչ ժա-
մանակ ամբողջ գերդաստան կը մկրտէին՝
Նոցա մէջ չը լինէր երախայ։ Եվրդ՝ երա-
խայից մկրտութիւնը մի բարի օրինակ է
Եկեղեցւոյ մէջ, որ ծնողքները կ'ընծայեն
իրենց որդիքն Աստուծոյ ծառայութեան
եւ ինքեանք եւս կը միխիթարուին, որ իւ-
րենց որդիքը մանկկից կը լինին Քրիստ
ողորմութեանը։ Այն խոստմունքը՝ զոր
երախայքը պէտք է տան մկրտութեան
ժամանակ՝ կը տան Նոցա Հիքահայրերը և
կ'ուխտեն Քրիստոնէական ուսումն տալ

նոյա, երբ կատարեալ ընդունակութիւն ունենան։

Մկրտութեան վերայ Հանգանակն կ'աւելցնէ Մի բառն, պատճառն որ՝ մարդն մկրտութեամբ մի անգամ կըստանայ Յիսուսի Քրիստոսի շնորհքն։ Ուրեմն՝ այս խորհուրդն երբէք պէտք չէ կրկնուի. "Մի Տէր, մի հաւատ, մի Մկրտութիւն"։ Եփես. Դ. 5։ "Քանզի անհնար է միւսանգամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն և հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ, եւ զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակն ճաշակեցին եւ զօրութիւնսն հանդերձելոյ աշխարհին, և կործանեսցին. միւսանգամ նորոգել յապաշխարութիւնս և վերստին 'ի խաչ հանել անձանց զՈրդին Աստուծոյ եւ դարձեալ խայտառակել"։ Եբր. Զ. 4—6։

Երկրորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ԴՐՈՇՄՆ, որով մկրտեալն կ'ընդունի զգալի օծութեան միջնորդութեամբ՝ Հոգւոյն Սրբոյ նելքին օծութիւնը, շնորհքը և զօրութիւնը և կը պատրաստուի պատերազմի մտնել աշխարհի հետ և աշխարհի մոլութեանց հետ, ինչպէս կ'ասէ Յովհան Նէս Առաքեալն. "Եւ զուք օծութիւն ու-

նիք առ 'ի Աստծոյն և գիտէք ամենեքին։ ... Զայս գրեցի ձեզ՝ զի մի՞ ոք զձեզ մոլորեցուցանիցէ և դուք օծութիւնն զոր ընկալարուք 'ի նմանէ, բնակեսցէ 'ի ձեզ, և չէ՞ հնչ պիտոյ եթէ ոք զձեզ ուսուցէ, այլ որպէս զի նոյա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի և ճշմարիտ է և չէ՞ սուտ և որպէս ուսոյցն զձեզ կայք 'ի նմա »։ Ա. Յովհ. Բ. 20—27։

Այս խորհրդով Հոգին Սուրբ կը զօրացնէ մեր սիրտը, մեր միտքը եւ մեր կամքը, ինչպէս կ'ասէ Ներսէս Լամբրոնացին. « Սա—Հոգին Սուրբ—օծանէ զմիտս մեր ըստ Յովհաննու և առնէ Քրիստոս նեռայս և Քրիստոսընկալս և յայսմ օծութենէ զօրանալոք գիտել զամենայն։ Սա լուսաւոր առնէ զաչս սրտից մերոց և ըզյոյս կոչման մերոյ և զմեծութիւն փառաց ժառանգութեան և զլայնութիւն և զերկայնութիւն սիրոյն Քրիստոսի »։

Այս խորհուրդը կատարուեցաւ Յիսուսի Քրիստոսի վերայ նոքա մկրտութեան ժամանակ։ « Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս՝ ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի և ահա բացան նմա երկինք և եռեաս զՀոգին Աստուծոյ զի իջանէր իբրեւ զա-

զանի և գայր 'ի վերայ նորա »։ Մատ։ Գ։ 16։ Եւ հաստատեցաւ Հոգւոյն Սրբոյ գալստեամբն 'ի դասս Առաքելոց, որք կը կատարէին յետոյ այս խորհուրդը ձեռքը դնելով մկրտուածներու վերայ և Հոգին Սուրբ զգալի նշանաւ կամ զօրութեամբ կ'ինջանէր նոցա վերայ։ « Եւ իբրեւ լուան մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի, և 'ի դնել 'ի վերայ նոցա Պաւղոսի զձեռն, եկն Հոգին Սուրբ 'ի վերայ նոցա »։ Գործ։ ԺԹ։ 5—6։

Մեր Եկեղեցին կը կատարէ այս խորհուրդն այսպէս։ « Լնու քահանայն ըզ-սուրբ իւղն (միւռոն) 'ի յափն իւր . . . և կնքէ սուրբ իւղովն զձակատ մկրտելոյն, զաչսն . . . . զքառմանն . . . . զոտսն »։ ('ի մեծ Մաշտոցի)։ Եւ այսպէս ուրեմն այս խորհուրդն ընդունողը պէտք է կենդանի վկայ լինի Քրիստոսի համար, պահող ու պաշտպանող նորա ճշմարտութեանց եւ անթերի կատարող նորա պատուիրանաց, մանաւանդ նորա մեծ պատուիրանին—Սիրոյ առ Աստուած և առ մարդ։ « Այլ առջիք զօրութիւն 'ի հասանել Հոգւոյն Սրբոյ 'ի վերայ ձեր, և եղիջիք վկայք ինձ Յերուսաղէմ', և յամենայն Հրէաստանի

և 'ի Սամարիա և մինչեւ 'ի ծագս երկրի »։ Գործք. Ա. 8։

Երրորդ խորհուրդ Եկեղեցւոյ, որ կը յիշատակուի Հանգանակի մէջ, է ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ, որով մեղաւոր և զղջացեալ Քրիստոնեայն կը խոստովանի Աստուծոյ՝ առաջի Նորա քահանային իւր մեղքն և կրաւանայ քահանայի աղօթքով և Քրիստոսի խօսքով և չարչարանաց արդիւնքով մեղայ թողութիւն։ Աստուծոյ քահանայից այս իշխանութիւնը հիմնուած է Քրիստոսի այս խօսքի վերայ. « Փչեաց 'ի նոսա և ասէ. առէք Հոգի Սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա, և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի »։ Յով. ԻԲ. 22։ Եւ այս խօսքի հաւատ է, որ քահանայն կ'ասէ. « Եւ ես բանիւն Աստուծոյ » և այլն։

Ապաշխարութեան խորհուրդը մեծ պարտք կը դնէ ապաշխարողի վերայ, որ նա ջերմեռանդութեամբ եւ ճշմարիտ զղջմամբ խոստովանի իւր բոլոր մեղքերը, թողու իւր պարտապանաց՝ իրենց մեղքը, որովհետեւ առանց հաշտուելու մարդկանց հետ և թողնելու նոցա մեղքն, չ'է կարող ինքն ևս հաշտուիլ Աստուծոյ հետ

և թողութիւն ստանալ։ «Թողցէ՛ ամբա-
րիշտն զհանապարհս իւր և այր անօրէն
զխորհուրդս իւր, եւ դարձցի առ Տէր,
զոտցէ զողորմութիւն. և առ Աստուած
մեր, զի բազմապատիկ թողցէ զմեղս և
զանօրէնութիւնս ձեր»։ Եսայ. Ծե. 7։
«Այսպէս ասէ Տէր ամենակալ, դարձա-
ցո՛ւք առ իս՝ ասէ Տէր զօրութեանց եւ
դարձայց առ ձեզ»։ Զաք. Ա. 3։ «Արա-
ցէ՛ք այսուհետեւ պտուղ արժանի ապաշ-
խարութեան»։ Մատ. Դ. 8։ «Ո՛չ եկի
կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշ-
խարութիւն»։ Ղուկ. Ե. 32։

Ուրեմն՝ մեծ պարտք կայ քահանայի
վերայ, որպէս առաջ կը խոստովանուին մեղ-
քերը, որ լաւ իմանայ՝ թէ ի՞նչ է Աստու-
ծոյ ճշմարտութիւնները և ի՞նչ է Աստու-
ծոյ կամքն, որ նոցա համաձայն վարուի,
խորհուրդ պտհէ խոստովանութիւնն, իբ-
րեւ Աստուծոյ հաւատացած, իւր աստ-
ուածատուր իշխանութեան մէջ, և պէտք
է իմանայ յանդիմանել և խրատել, իմա-
նայ ափոփել և մխիթարել, ինչպէս կ'ասէ
Պօղոս Առաքեալն. «Մի՛ անփոյթ առներ
զշնորհացդ որ 'ի քեզ են, որ տուաւ քեզ
մարգարէութեամբ 'ի ձեռնադրութենէ

երիցութեան ։ Ա. Տիմ. Դ. 14։

Մեղաւորն ապաշխարելով կը ստանայ թողութիւն իւր մեղաց և այս պատճառաւ Հանդանակի մէջ կ'ասենք. «Հաւատամք ի մի՛ Աստուած ի թողութիւն մեղաց։ Հաւատալ մեղաց թողութեան կը նշանակէ հաւատալ Աստուծոյ այն ողորմութեանն, զոր արար մեղաւորաց՝ նեղելով նոցա մեղքն։ Կ'ասուի թողութիւն, այն պատճառաւ, որ կարելի է մեր մեղքն համարիլ իբրև մէկ պարտք, զոր Աստուած կը թողու մեզ։ Թողութիւնն իւր մէջ կը բովանդակէ երկու ողորմութիւն. — Ա՛ռջին՝ Աստուած ազատեց զմեզ այն պատիժէն, որոյ մեք արժանացած էինք մեր մեղքով. իսկ Երկրորդ՝ Աստուած յետ տուաւ մեզ իւր սէրն և մեր իրաւունքը յաւիտենական ժառանգութիւն վայելելու։

Մեղաց թողութեան Սուրբ Գիրքը կը տայ զանազան անուններ. ինչպէս, Արդարութիւն, զոր պէտք չ'է համեմատեմք մարդկային արդարութեան հետ, որով մեղադրուածն կ'արդարանայ իւր անմեղութեամբ։ Վասն զի, երբ մեք կ'ասենք թէ արդարացանք Աստուծոյ առաջ, կը նշանակէ որ Աստուած կամի մեզ հետ

վարուել ինչպէս արդարոց հետ, առ ոչ ինչ համարելով մեր մեղքը։ «Եւ քանզի Աստուած էր Քրիստոսիւ զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր և չը համարել նոցա զմեղս իւրեանց և եդ 'ի մեզ զբանն հաշտութեան»։ Բ. Կորն. Ե. 19։ Կ'աստուի մեղայց Թողութիւնն Ողորմութիւն Աստուծոյ, որ Յիսուսի Քրիստոսի հեղութեան և անասելի զոհ լինելուն համար Աստուած ներեց մեր մեղքը. «Արդարանան ձրի նորին շնորհօք 'ի ձեռն փրկութեան. որ 'ի Քրիստոս Յիսուս»։ Հռով. Գ. 24։ Այս ողորմութեանը կարող եմք արժանանալ հաւատով. որ կը սրբէ մեր սիրտը և կը ծնանի մեր մէջ ջերմեռանդն ապաշխարութիւն։ Կենդանի, հեզ և գործնական հաւատը կը միացնէ զմեզ Քրիստոսի հետ, կը շինէ նորա անդամ։ Եւ կը հասկացնէ, որ Աստուած կը տեսնէ մեր մէջ զՔրիստոս և ոչ թէ զմեզ, և նորա արդիւնքն և դիտաւորութիւնը մերն կը համարի։ «Եւ գտայց 'ի նմա ոչ թէ զիմ ինչ արդարութիւն, որ յօրինաց անտի է՝ ունիցիմ, այլ զհաւատոցն Քրիստոսի, որ յԱստուծոյ արդարութիւն է»։ Փիլ. Գ. 9։

Այն մարդիկը, որք ճշմարիտ հաւաք

տով միացած են Յիսուս Քրիստոսի հետ և լուացուած են իրենց մեղքէն նորա արիւնով և արբուած են նորա հոգւով՝ ինչ-քան միայն կարող են ասել — Հաստատմ ի Լաոդիկիան Դպրոց։ «Զոր յառաջն ետուր Աստուած 'ի քաւութիւն 'ի ձեռն հաւատոյն արեամբ նորա, 'ի հանդէս արդարութեան նորա, վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործեցելոց»։ Հռով. Գ. 25։ Այսու ճշմարիտ խոստովանութեամբ կարող են արժանանալ աստուածային խոստման։

Բայց ոչ մեր հաւատը, ոչ մեր բարի գործը, ոչ մեր ապաշխարութիւնը և ոչ մեր քաւութիւնը միայն չ'են կարող տալ մեզ փրկութիւն. վասն զի՝ մեր հաւատն ոչ այլ ինչ է, եթէ ոչ միջոց, որով կ'ընդունիմք Աստուծոյ ողորմութիւնը 'ի ձեռն Քրիստոսի։ «Ոչ 'ի գործոց արդարութեան, զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմութեանն ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն և նորոգութեան Հոգւոյն Սրբոյ։ Զոր եհեղ 'ի մեզ առատութեամբ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ»։ Տիտ. Գ. 5։ Մեր հաւատը, մեր բարի գործը, մեր ապաշ-

խարութիւնը միայն նշան են հնորհակալութեան մեր փրկութեան և թողութեան համար։ Մեր փրկութիւնը չ'ունի մի այլ պատճառ, բայց միայն Աստուծոյ ողորմութիւնը։ Պահեմք ուրեմն այս մեծ հրաշ մարտութիւնը, որ Աստուծոյ ողորմութիւնն է որ զմեզ կը փրկէ և ասեմք Սուրբ Գրոց հետ միասին. «Զերդու

Պօղոս Առաքեալը մանրամասն կը խօսի այս խորհրդոյ վերայ։ «Տէր Յիսուս՝ ի գիշերին, յորում մատնէր, առ հաց, գոհացաւ, եբեկ և ասէ. Առէք և կերայք, այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի. զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն՝ առ և ասէ. այս բաժակ նորոյ ուխտի է իմով արեամբ. զայս արարէք քանիցս անգամ եթէ ըմպիցէք առ իմոյ յիշատակի։ Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս և զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ նա»։ Ա. Կոր. ԺԱ. 23—25։

Այս սուրբ խորհրդով միանալով Քրիստոսի հետ միշտ պէտք է սպասենք նորա գալստեանը եւ միշտ յիշենք նորա մահն։ Քրիստոս ասելով այս խօսքերն. «Զայս արարէք առ իմոյ յիշատակի»։ և Պօղոս Առաքեալն աւելցնելով այս խօսքերը, «Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմեցէք մինչեւ եկեսցէ նա»։ կը յիշեցնէ այս խօսքերով Քրիստոսի մահը, որ այս մահն է միակ հիմն փրկութեան։ Այս մահն է, որ կ'ազատէ զմեզ

գաստապարտութենէ։ Այս մահն է, որ կ'արժանացնէ զմեզ Աստուծոյ ողորմութեանն և նորա հետ հաշտութեանն։ Այս մահն է, որ կըստիպէ զմեզ, որ մեք եւս տամք մեր անձը նմա, որ այնքան սիրեց զմեզ, որ իւր անձն զոհեց մեզ համար։

Հաղորդութեան սուրբ խորհրդով մեք կը միանամք Քրիստոսի հետ, մեք պէտք է մասնակից լինիմք օրենքն ոչ թէ միայն նորա մահուանը, այլ եւ նորա կենաց, որ արժանի լինիմք յաւիտենական կենաց և բնակիմք Յիսուսի Քրիստոսի մէջ և նա մեր մէջ։ Մեր կեանքով նորա կենաց մասնակից լինելու համար կ'ասէ Քրիստոս. "Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս և ես յարուցից զնա յաւուրն յետնում։ Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի եւ ես 'ի նմա"։ Յով. Զ. 54—57։

Այս սուրբ խորհրդոյն արժանապէս հաղորդուելու համար՝ Քրիստոնեայն պէտք է ունենայ ճշմարիտ զղջումն, ճշմարիտ հաւատ։ Ջերմեռանդն ցանկութիւն դառնալ դէպ 'ի քա-

թութիւն, արքութիւն, որք կը պարու-
նակեն իրենց մէջ Մարդասիրութիւն։ Մի
խօսքով հաղորդուողը պէտք է լիովին
զիտց և զՔրիստոս, որ նա իւր մեղքերով անց
պատուած է զԱստուած և պէտք է հա-
ստատց, որ նորա այս մեղքերն թողու-
թիւն կըստանան Աստուծմէ Քրիստոսի
խաչով և արդիւնքով։ Նա պէտք է ցան-
կայ, որ աւելի և աւելի յառաջանայ հա-
ւատոյ մէջ, արքութեան և մարդասիրու-
թեան մէջ։

Այս զգացողութիւններն անշուշտ
հարկաւոր են արժանապէս Քրիստոսի
մարմնին և արիւնն ճաշակողաց. վասն զի
նոցա է փրկութիւն խոստացած, և նոցա՝
որք կը զղջան իրենց մեղքն, նոցա՝ որք կը
հաւատան, նոցա՝ որք կ'աշխատին իրենց
արքութեան համար, նոցա՝ որք կը ներեն
այլոց իրենց մեղքն, ինչպէս Աստուած
ներեց մեզ, և նոցա՝ որք կը ցանկան լի-
նիլ նորա համար զոհ, ինչպէս նա ինքն
զոհուեցաւ մեզ համար։

Հաղորդութիւնն է հրապարակական
խոստովանութիւն, որ մեք կը զղջանք մեր
մեղքը, որ կապտուինք մեր Փրկչի հետ
կենդանի հաւատով և կամիմք լինիլ Հրշ

մարիս հաւատացող և հնազանդող։ Ուրեմն՝ հաղորդուիլ առանց արժանաւորութեան՝ այսինքն հրապարակաւ խոստովանել, որ ունի վերեւ յիշած զգայողութիւններն, և ընդհակառակն՝ ինքնին զգալ որ մի և նոյն ժամանակ զուրկ է այն զգացողութիւններէն, այս կը նշանակէ անպատուել զԱստուած, լինիլ ամբարիշտ և կեղծաւոր վերին աստիճանի։ Հաղորդուիլ կը նշանակէ ներքին հոգեւոր միութիւն Քրիստոսի և մեր բոլոր եղբարց հետ, որ մեք ամենքս մի մարմին եմք 'ի Քրիստոս, որ է Գլուխ։ Ուրեմն՝ որք չ'ունին արժանաւոր զգացողութիւններ, չ'են զղջար իրենց մեղքը և կը մօտենան կեղծաւորութեամբ Քրիստոսի մարմնոյ և արեան, նոցա համար Պօղոս Առաքեալն կ'ասէ. "Այսուհետեւ որ ուտիցէ զհացս կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ՝ պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն։ Փորձեսցէ՛ մարդ զանձն իւր և ապա 'ի հացէ անտի կերիցէ և 'ի բաժակէն արբցէ։ Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում՝ ուտէ և ըմպէ. զի ոչ խորտրէ զմարմին Տեառն"։ Ա. Կորնթ. ԺԱ. 28—30։

Նոքա կ՚անպատուեն սուրբ խորհուրդը չը զանազանելով հասարակ հացէն։ Եւ որովհետեւ վերեւ յիշած սուրբ և բարի զգացողութիւններն անշուշտ հարկաւոր են ճաշակողի համար, ուրեմն՝ ամեն ճաշակող պէտք է փորձէ իւր անձն, թէ ունի արդեօք այն զգացողութիւններն, և. եթէ ունի՝ աւելի պէտք է հաստատուի նոցա մէջ. եթէ նուազ են այն զգացողութիւններն, պէտք է զօրացնէ, և եթէ չ՚ունի այն զգայողութիւնքն՝ անդադար պէտք է աշխատի ձարելու։ Եթէ չը կամի աշխատիլ եւ ունենալ՝ նա պէտք է հեռանայ այն սուրբ խորհրդէն՝ երկրին չելով որ աւելի չ՚անպատուէ այն սուրբ խորհուրդն եւ աւելի չը ծանրացնէ իւր թշուառութիւնն ընկնելով մեղայց թըմբութեան մէջ։ Ճաշակողը պէտք է անէ այս անձնափորձութիւնը այն դիտաւորութեամբ, որ իւր կեանքն յարմարեցնէ իւր ճանաչողութեան, ինքն իւր անձին դէմ չը կեղծէ, նուազեցնելով կամ՝ ներելով իւր յանցանքները։ Նա պէտք է միտը պահէ, որ Աստուած կը նայի մեր սրտին և կ՚ատէ կեղծաւորութիւնն։ Նա պէտք է մանրամասն քննէ թէ փրկութեան ճա-

նապարհի վերայ է, թէ ոչ. պէտք է քննել իւր ամէն զգացողութիւններն, ամէն խոսակցութիւններն, կենաց ամէն գործքերը, մտածել ընդհանուր և յատուկ պարտաւորութեանց վերայ, մանաւանդ այս մեծ պարտաւորութեան վերայ, որ է Հին եւ Նոր Հոգեկան կենաց, այսինքն Հաւատք, Յոյս, Սէր առ Աստուած եւ Սէր առ մարդ։ Այս քննութիւնը պէտք է կապակցեալ լինի ջերմեռանդ աղօթից հետ, որովհետեւ մեք կարօտութիւն ունիմք Աստուծոյ լուսոյ և օգնութեան հոգւոյն, որ կարողանամք ճիշդ քննել մեր սիրտն և ցրել մեր անձնասիրութեան ցնորքները։ Այս քննութեամբ միայն մեր անձն ճանաչելն օգտաւէտ կը լինի մեզ համար։ Այս քննութիւնը պէտք է գործնական լինի, այսինքն իսկոյն պէտք է ուղղեմք զմեզ, հեռանամք այն առարկաներէն և այն տեղերէն, որք մեզ համար վտանգաւոր կը ճանաչեմք։ Մի խօսքով՝ պէտք է գործ դնեմք ամէն հնարք և միջոցք, որք կը թուին մեզ օգտաւէտ մեր Փրկչին հաւատարիմ լինելու համար։ Այսպիսի քննութեան համար կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Փորձեցէք՝ մարդ զանձն իւր և ա-

պա՛ի հայցէ անտի կերիցէ և՛ի բաժա կէն արբցէ ։ Ա. Կոր. ԺԱ. 28։

Հինգերորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆ, զոր՛ի սկզբան հաստատեաց Աստուած այս խօսքերով. «Եւ օրհնեաց զնոսա Աստուած և ասէ. Աճեցէ՛ք և բազմացարո՛ւք և լցէ՛ք զերկիր ։ Մն. Ա. 28։ Քանի՛որ մարդն հնազանդութեամբ կը պահէր Աստուծոյ պատուիրանքը՝ կը պահէր և այս խորհուրդը լուր սուրբ նշանակութեամբ, բայց պատուիրանազանցութեամբ հեռանալով Աստուծմէ՝ հեռացաւ ամուսնութեան սուրբ նպատակէն, փոխեց զայն լոկ դաշնակցութեան և յաւաղ բերաւ բազմակնութիւն։ Այս մոլար մտքերը փարատելու համար էր, որ Քրիստոս կ՚ասէր Փարիսեցւոց. «Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն՝ ի սկզբանէ արու և էգ արար զնոսա՝ և ասէ. վասն այսորիկ թողցէ այր՝ զհայր և զմայր՝ և երթիցէ զկեաս կնոջ իւրոյ և եղիցին երկոքեան՝ ի մարմին մի։ Ապա ուրեմն՝ ո՛չ են երկու՝ այլ մի մարմին։ Արդ՝ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեցէ ։ Մտթ. ԺԹ. 4—6։

Քրիստոնէութիւնը տուաւ ամուսնա

նութեանն այն մեծ նշանակութիւնը, զոր
'ի սկզբանէ Աստուած սահմանած էր։
Տուաւ նմա իւր առաջին սրբութիւնը,
միութիւնը և յաւիտենական անլուծա-
նելի կապն՝ հիմնուելով Քրիստոսի խօսքի
վերայ. «Զոր Աստուած զուգեաց՝ մարդ
մի մեկնեսցէ»։ Պօղոս Առաքեալն հա-
մարձակ կը նմանեցնէ ամուսնութիւնը
Քրիստոսի միութեանն Եկեղեցւոյ հետ։
Ամուսնութեան կապը կ'անուանէ Մեծ
խորհուրդ՝ ասելով. «Ա՛ռք, սիրեցէ՛ք զգ-
կանայս ձեր, որպէս եւ Քրիստոս սի-
րեաց զԵկեղեցի եւ զանձն իւր մատ-
նեաց վասն նորա ...։ Նոյնպէս պար-
տին արք սիրել զիւրեանց կանայս, իբրև
զիւրեանց մարմին ....։ Որ սիրէ զկին
իւր, զանձն իւր սիրէ։ Զի ոչ ոք երբէք
ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ եւ
դարմանէ զնա, որպէս և Քրիստոս զԵ-
կեղեցի ....։ Վասն այսորիկ թողցէ այր
զհայր եւ զմայր իւր, եւ երթիցէ զգ-
հետ կնոջ իւրոյ եւ եղիցին երկոքին 'ի
մարմին մի։ Խորհուրդս այս մեծ է, բայց
ես ասեմ՝ իսկ 'ի Քրիստոս եւ յԵկեղե-
ցի»։ Եփես. Ե. 25—32։

Որովհետեւ Քրիստոս կը յայտնէ մեզ՝

որ Աստուած է, որ կը կապէ ամուսնաց-
ցողներն և կը կապէ յաւիտենական կա-
պով. ուստի ամուսիններդ պէտք է կա-
պուին ազատութեամբ. վասն զի Աստու-
ծոյ առաջ կը կապուին և Աստուծոյ սահ-
մանած նպատակի համար, որ նոքա մարդ-
կային ազգը աճեցնելով և բազմացնելով՝
աճեցնեն և բազմացնեն աստուածային
գերդաստանը. պէտք է կապուին բարո-
յական ազատութեամբ, սիրով և հաւա-
նութեամբ եւ ոչ թէ յականայից կամ
նիւթական շահէ եւ կամ ինչ և իցէ
պատճառներէ ստիպուած, որ արատաւոր
են բարոյական կապակցութեան։ «Մի՞թ
ոք, կ'ասէ Ն. Շնորհալին, 'ի քահանա-
յից 'ի բռնութենէ բռնաւորաց առանց
կամաց առն և կնոջ պակ գոյցէ»։

Վ. Եղերորդ խորհուրդ Եկեղեցւոյ է
ԿԱՐԳՆ ՓԱՀԱՆԱՑԱԿԱՆ կամ ՁԵՌՆԱԴՐՈՒ-
ԹԻՒՆ, որոյ արժանաւոր անձն Եպիսկո-
պոսի ձեռնադրութեամբ եւ աղօթքով
կ'առնու հոգեւոր զօրութիւն Եկեղեցւոյ
մէջ պաշտօն կատարելու և խորհուրդ-
ներ մատակարարելու։ Այս խորհուրդը
Քրիստոս հաստատեց իւր հանդերձեալն
ժամանակ՝ տանելով աշակերտները Ձի-

թեռնեաց լերան վերայ, ինչպէս կ'ասէ Ղուկաս Աւետարանիչն. «Եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ 'ի նոցանէ եւ վերանայր յերկինս»։ Ղուկ. ԻԴ. 51։

Այս խորհուրդն ընդունողներու պարտականութիւնն է քարոզել և ուսուցանել աստուածային ճշմարտութիւններն, և զայնս կատարել։ Ուսուցանել ոչ միայն խօսքով, այլև գործքով և բարի օրինակով լինել արժանաւոր սպասաւոր Եկեղեցւոյ՝ սուրբ խորհուրդները մատակարարելու համար և լինել հաշտարար մեղաւորաց ընդ Աստուծոյ։ «Զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել, այլ Աւետարանել...։ Զի եթէ Աւետարանեմ՝ ոչ ինչ են ինձ պարծանք, քանզի հարկ 'ի վերայ կայ. բայց վայ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ»։ Ա. Կորն. Ա. 17։—Թ. 16։

Եօթներորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ՕՏՈՒՄՆ ՀԻՒԱՆԴԱՑ, որով հիւանդը կը զօրանայ յուսով՝ գտնելով իւր մարմնոյ հիւանդութենէն ազատութիւն, բժշկութիւն և թողութիւն մեղաց։ «Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, կ'ասէ Յակոբոս Առաք-

քեալն, կոչեսցէն զերիցունս եկեղեցւոյ և արասցեն 'ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն և աղօթքն հաւատոյվք փրկեսցէ զաշխատեալն և յարուցցէ զնա Տէր և եթէ մեղս ինչ իցէ գործեալ թողցի նմա »։ Յակ. Ե. 14—15։

Մեր Հայաստանեայց Եկեղեցին կը կատարէ այս խորհուրդը կամ խորհրդաւոր արարողութիւնը հիւանդաց վերայ այսպէս.— Քահանայն Խաչիւ և Աւետարանաւ կը կարդայ այն աղաղմանները, ընթերցուածները, աւետարանները, աղօթքները և շարականները, որ 'ի հնուց սահմանած են Մաշտոցի մէջ. որմէ հետեւ աղօթքի մէջ կը բովանդակի խորհրդաւոր զօրութիւնն, ինչպէս կ'ասէ Յակոբոս Առաքեալն. « Աղօթք ընդ հաւատոյ լծորդեալ ապաղչութիւն տայցէ հիւանդին և Տէրն կազդուրեսցէ զնա »։ Եւ ինչպէս կ'ասէ Սարգիս Շնորհալին. « Ոչ իւրն տայր առողջութիւն հիւանդին, այլ անուն Տեառն »։

Հաւատալ 'ի յարութիւն մեռելոց, որ կը յիշուի Հանգանակի մէջ, կը նշանակէ, որ մեք կը հաւատամք, թէ երբ մեր հոգին հեռանայ մարմնէն և մարմինը մեռնի

և դառնայ հող, կը կանչուի մի օր դէպ՝ ի կեանք և կը միանայ հոգւոյ հետ, զոր նա ունէր յառաջ։

Յարութիւնն ունի իւր մէջ երկու ճշմարտութիւն — Անմահութիւն հոգւոյ եւ Յարութիւն մարմնոյ։ Մեր կրօնը կը խոստանայ վանի այս երկու ճշմարտութիւնը։ Հին Կտակարանը՝ Ենովքի եւ Եղիայի համբառնալովը՝ կը հաստատէ թէ՝ կայ մի այլ աշխարհ, որ տեղ պատրաստուած է հատուցումն բարի եւ չար մարդկանց։ "Ես՝ աւանիկ աղնուականի իմն ցանկա ցեալ եմ, այսինքն է երկնաւորին. վասն որոյ ոչ ամօթ համարի Աստուած կոչել նոցա Աստուած. քանզի պատրաստեաց նոցա քաղաք"։ Եբր. ԺԱ. 16։

Ինչ ժամանակ կ'ասէ, Ես եմ Աբրահամ՝ Աստուած, Իսահակայ եւ Յակոբայ Աստուած, սովաւ պարզ ցոյց կը տայ մեզ, որ ստուրբ մարդիկը կը բնակին նորա մօտ և նորա ողորմութեամբ կ'ուրախանան, ինչպէս կ'ասէ Քրիստոս. "Այլ զի յառնեն մեռեալք և Մովսէս գուշակեաց ի մորենւոջն, որպէս ասէ զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու, և զԱստուծոյ Իսահակայ եւ զԱստուծոյ Յակոբայ։ Եւ

Աստուած չ'է մեռելոց, այլ կենդանեաց. զի ամենեքին նմա կենդանի են »։ Ղուկ. Ի. 37—38։ Մովսիսէն յետոյ եկած մարգարէներն ևս կը հաստատեն այս ճշմարտութիւնը. « Եւ դարձցի հոգին յերկիր, որպէս և էր, և հոգին դարձցի առ Աստուած, որ ետու զնա »։ Ժող. ԺԲ. 7։ Բայց միայն Յիսուս Քրիստոս տուաւ կատարեալ յայտնութիւն այս ճշմարտութեան. « Բայց յայտնեցաւ այժմիկ՝ յերեւիլ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ եւ լուսաւոր արար զկեանս և զանեղծութիւն 'ի ձեռն աւետարանին »։ Բ. Տիմ. Ա. 10։

Այս ճշմարտութիւնները պարզ կը յայտնէ Նոր Կտակարանը. « Եւ մի երկնչիք յայնցանէ, որք սպանանեն զմարմին և զհոգի ոչ կարեն սպանանել։ Այլ երկերուք դուք առաւել յայնմանէ, որ կարող է զհոգի և զմարմին կորուսանել 'ի գեհենի »։ Մատ. Ժ. 28։ « Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես 'ի դրախտին »։ Ղուկ. ԻԳ. 43։ « Նեղեալ եմ՝ յերկոցունց՝ զցանկալն ելանել և ընդ Քրիստոսի լինիլ առաւել լաւ համարիմ »։ Փիլ. Ա. 23։

եւ մեք ջերմեռանդութեամբ կը հաւատամք Անմահութիւն, երբ կը պահեմք մեր կեանքը և զգայողութիւնը սրբութեամբ և չ'եմք ոտներ աշխարհիս վայելքները, այլ աստուածահաճոյ առաքինութիւններ։ «Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ, սուրբք և սիրելեալք, զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն, ներել միմեանց, շնորհել իրերաց, եթէ ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ. որպէս Աստուած Քրիստոսիւ շնորհեաց ձեզ, նոյնպէս և դուք»։ Կող. Գ. 12։

Եւ վերջապէս կ'աշխատիմք օր ըստ օրէ հարստացնել մեր հոգին բարի զգացողութեամբ, որ կարողանամք արժանանալ երկնային հայրենեաց եւ ճաշակել հոգւոյ երջանկութիւնը։

Յարութենէն յետոյ պէտք է լինի ընդհանուր դատաստան 'ի կատարածի աշխարհի եւ այս դատաստանի համար կ'ասուի Համազանակի մէջ.— Գալոց է նոքին տարմնովն եւ փառօք Հօր 'ի դատել ընդ ինդանիս եւ զբոլոսն։

Լուսիհետեւ Աստուած ամենասուրբ է,

ամենեմնատ, բարի, ամենակարող և կա-
ռավարիչ աշխարհի, ուրեմն՝ նա պէտք է
թէ շուտ թէ ուշ բաժանէ բարին չարէն։
Եւ մեք եւս կը տեսնենք, որ այս աշխար-
հի մէջ առաքինութիւնը չըտոնաւոր իւր
հատուցումն, ոչ եւս չարութիւնն՝ իւր
պատիժն, այլ ընդհակառակն՝ մեղաւոր-
ներն կը վայելեն սրախութիւն և արդար-
ներն՝ չարչարանք։ Պէտք է լինի ուրեմն՝ նը-
շանակուած մի օր՝ որ ամենը կարգի դրուի,
առաքինութիւնը ստանայ իւր հատուցու-
մն և չարութիւնը՝ իւր պատիժն։ Մեր
խղճմտանքն եւս նոյնպէս կը վկայէ, որ
կայ մի Տէր, յորմէ մեք կախուած ենք և
պէտք է ունենանք երկիւղ, որովհետեւ
նա վկայ է մեր գործոց, որ կը դատի մի
օր, բարիները վարձատրելով յաւիտենա-
կան երջանկութեամբ և չարերը պատժե-
լով յաւիտենական տանջանքով և Քրիստոս
այս ժամանակի համար է որ կ'ասէ. «Եւ
յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառաւք իւ-
րովք եւ ամենայն հրեշտակք ընդ նմա,
յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոյ։
Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն
ազգք և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց, որ-
պէս հովիւ զի մեկնեցէ զոդիս յայծեաց

և կացուցցէ զոդիսն ընդ աջմէ իւրմէ, և զայծիսն 'ի ձախմէ »։ Մատ. Ի՝Ե. 31—33։

Բարի մարդիկ կը դատուին իրենց հաւատով եւ իրենց գործով։ Որովհետեւ ինչպէս միտքը և հոգին պէտք է հնազանդին հաւատով՝ յայտնուած ճշմարտութեանց, նոյնպէս եւս սիրտը և կամքը սիրով և հնազանդութեամբ։ Ուրեմն՝ մեք եւս պէտք է հաւատամք ամեն բանի, ինչ որ նա կը պատուիրէ մեզ, վասն զի անհաւատութիւնը կը դառնայ մեզ համար դատապարտութիւն։ « Որ հաւատայ 'ի նա ոչ դատապարտեսցի և որ ոչն հաւատայ 'ի նա, արդէն իսկ դատապարտեալ է, զի ոչ հաւատաց յանուն Միածնի Որդւոյն Աստուծոյ »։ Յով. Գ. 18։

Դատաստան պիտի լինի ոչ թէ միայն կատարուած գործոց վերայ, այլ և ամեն մեր մտածմանց և բանից վերայ, զոր ասեցած եմք։ « Այսուհետեւ մի յառաջ քան զժամանակն դատիք. մինչեւ եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի և յայտնիցէ զխորհուրդս սրտից և ապա իւրաքանչիւրոյ գովութիւն եղիցի յԱստուծոյ »։ Ա. Կորն. Դ. 5։ « Զի 'ի բանից քոց արդարացիս և 'ի բանից քոց դա-

տապարտեսցիս »։ Մաթ. ԺԲ. 37։ Բայց այս դատաստանի օրն խորհուրդ է մեզ համար, ոչ ոք գիտէ, նա խորհուրդ է որ պատրաստ պահէ զմեզ ամեն օր և չը լինիմք յիմար կոյսերու նման, որք քնով անցուցին իրենց ժամանակը փեսայի առաջ դուրս գալու ժամին. «Արթուն կացէք, զի ոչ գիտէք զօրն և զժամ»։ Մաթ. Ի. 13։ Այս վերջին դատաստանէն յետոյ պէտք է կատարուի Աստուծոյ հրամանք, այսինքն արդարներուն յաւիտենական կեանք, իսկ մեղաւորներուն յաւիտենական տանջանք։ «Եւ երթիցեն նոքա մեղաւորքն 'ի տանջանս յաւիտենական, եւ արդարքն 'ի կեանս յաւիտենականս»։

ԱՂՕԹՔԻ ՎԵՐԱՑ

ԱՌՀԱՍԱՐԱԿ

Աղօթքն ունի երկու նշանակութիւն — Ընդհանուր եւ Յատուկ։ Ընդհանուր նշանակութեամբ աղօթքն է կապակցութիւն մարդոյ ընդ Աստուծոյ։ Աղօթքով մեք կը ցանկանք մօտենալ Աստուծոյ և

խօսիլ նորա հետ։ Այս նշանակութեամբ Աղօթքը կը բովանդակէ իւր մէջ աստուածպաշտութեան ամէն տեսակ գործքեր։ Յաւելեալ նշանակութեամբ Աղօթքն է կոչումն առ Աստուած և խնդրուածք բոլոր կարօտութեան մեր վիճակի։ Այս իրնդրուածոց հետ պէտք է կապակցեալ լինին այն զգացողութիւններն, զոր պարտիմք ունենալ առ Աստուած և մեր սիրտը պէտք է լինի կենդանի շնորհակալութեամբ լցուած նորա շնորհաց համար, զոր ստացած ենք։ «Մի՛ ինչ հոգայք, այլ ամենայն աղօթիւք և խնդրուածովք գոհութեամբ խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած»։ Փիլ. Դ. 6։

Աղօթքը մեծ բան է մարդոյ համար։ Նա է միայնակ էական պարպարոլիան մարդոյ առ Աստուած։ Նա է միայնակ ճանապարհ աստուածային հարկաւոր և թանկագին շնորհքներն ստանալու համար։ Նա է փաւոր իրաւունք, որով կը ստանամք արքութիւն և միութիւն։ Նա է էական պարպարոլիան, այսինքն գլխաւոր մասն շնորհակալութեան, զոր Աստուած կը պահանջէ մեզմէն մեր փրկութեան համար։ Երբ կը խնդրեմք Աստուծ-

մէ այն ամենայն՝ ինչ որ մեզ հարկաւոր է, այսու մեք կը խոստովանիմք, որ նա է մեր Աստուածն, մեր Բարերարն և մեր Հայրն։ Ի նմանէ ունիմք մեր կախումն. ի նմանէ ստացած ենք ամենայն բան. զնա կը սիրեմք իբրեւ Աղբիւր Բարութեան. նորա վերայ է մեր վստահութիւնը. նոր բա կատարելութիւններն կը փառաւորեմք աղօթքով և մանաւանդ նորա ամենաբարութիւնը։

Աղօթքն է ճանապարհ աստուածային շնորհքներն ստանալու։ Մարդս ունի անթիւ կարօտութիւններ, ինչպէս մարմնական, հոգեպէս և հոգեկան, այնպիսի կարօտութիւններ, զոր մեք ինքնին չենք կարող բաւականացնել։ Սուրբ Գիրքը կ'ուսուցանէ մեզ, որ միայն Աստուծոյ հոգին կարող է փոխել մեր սիրտը և զգացնել մեզ մեր մեղքը և շարժել զմեզ դէպ 'ի թողութիւն եւ փրկութիւն։ Նա միայն կարող է տալ մեզ զօրութիւն ընդդիմանալ ամենայն փորձութեանց։ Նա միայն կը տայ մեզ զօրութիւն Աստուծոյ խօսքը հասկանալ և գործ դնել։ Նորա նախախնամութիւնն է, որ աճումն կը տայ մեր օգտաւէտ գործոց և կը հեռացնէ զմեզ

ամեն կորստական ճանապարհէ։ Նա է որ կ'ուղղէ մեր ձեռաց գործքերը և կը յաջողէ մեր հոգացողութիւնները մեր կեանքը պահպանելու համար։ Աստուած միշտ պատրաստ է տալ այս ողորմութիւնները և կը խոստանայ տալ ամենուն, որք կը զգան այս ողորմութեան կարօտութիւնը և կը խնդրեն 'ի նմանէ։ «Կարդացեալ առ իս յաւուր նեղութեան քո. ես փրկեցից զքեզ և դու փառաւորեսցես զիս»։ Սաղ. Խթ. 15։ «Խնդրեցէք և տայի ձեզ, հայցեցէք և գտջիք. բաղխեցէք և բացցի ձեզ»։ Մատթ. է. 7։

Ուրեմն չը կամենալ աղօթել՝ կը նշանակէ չը կամենալ այն ամեն աստուածային ողորմութիւններն, որք տուած են մեզ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։ Կը նշանակէ մոռանալ, որ հարիւրաւոր են նոքա ինչպէս մարդոյ հոգւոյն, նոյնպէս և մարմնոյն։ Առանց աղօթելու եւս մարդ կարող է մասնակից լինել այն ժամանակաւոր ողորմութեան, զոր Աստուած կը սփռէ առհասարակ բարիներու և չարերու վերայ, բայց կը զրկուի ամենէն երեւելի եւ թանկագին ողորմութիւններէն, այսինքն հոգեւորէն։

Աստուած սահմանեց աղօթքն ինչպէս պայման իրմէն ողորմութիւն ստանալու։ Ոչ թէ այն պատճառաւ, որ նա չը գիտէ մեր հարկաւորութիւններն եւ կարօտ է մեր խնդրուածոց, ոչ, այլ այն պատճառաւ սահմանեց, որ մեք ինքնին զգանք մեր պիտոյքը։ Ոչ թէ մեր ինդիրքով Աստուած կը փոխէ իւր միտքը աշխարհս կառավարելու համար. ոչ թէ մեր աղօթքով Աստուած նոր ընդունակ կը լինի մեզ բարութիւն առնելու և կամ կ'աւելցնէ իւր բարութիւնը, ոչ, այլ այն պատճառաւ սահմանեց աղօթքն ինչպէս պայման, որ մեք լաւ զգանք նորա ողորմութեան կարեւորութիւնն եւ գործադրութիւնը։ Եթէ Աստուած միայն խնդրողաց կը տայ իւր հոգեւոր ողորմութիւններն, այս չը նշանակեր թէ պակաս է նորա բարութիւնը, կարողութիւնը եւ ճանաչողութիւնը, ոչ, այլ պատճառն այն է, որ խնդրողները միայն կը զգան Աստուծոյ ողորմութեան հարկաւորութիւնը, կը ճանաչեն նորա չնորհաց գինը և ջերմեռանդութեամբ կը ցանկան ստանալ և գործ դնել։

Աղօթքն է մեզ համար Փառաւոր իրա-

ռուն։ Աղօթքով մեք իրաւունք կը ստանամք մօտենալ Թագաւորին Թագաւորաց, Արարչին ամենայն աշխարհի, խօսիլ նորա հետ, ինչպէս մեր Հօր և Բարեբարի հետ։ Աղօթքն է մեզ համար Սրբոյ Ամենայն Ճանապարհ, որ կը հեռացնէ աշխարհային ներքէն և կը տանի դէպ 'ի հոգեւորներն։ Աղօթքով մեք կը ներկայանանք Աստուծոյ, կը տեսնենք նորա կատարելութիւնները, և կրնանամք հեզութիւն, որ ամենայն առաքինութեանց Հիմն է։ Աղօթքով մեք կրգտանք մեր ոչնչութիւնը Աստուծոյ առաջ եւ կ'խմանամք մեր տկարութիւնը և անզօրութիւնը։ Աղօթքն է մեզ համար հնարք միսիթարութեան տանջանաց և չարչարանաց մէջ։ Նա է մեզ համար հանգստութիւն, ինչպէս կ'ասէ Քրիստոս, "Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ"։ Մատ. ԺԱ. 28։ Մի խօսքով՝ աղօթքն է միմիայն Ճանապարհ, որով մարդ տակաւին աշխարհիս մէջ կարող է մօտենալ Աստուծոյ։ Նա է Կրօնի Նպատակն եւ տուող գլխաւոր բարութեան։ Եթէ մարդոյ աղօթքն անպտուղ կը մնայ պատճառն այն է, որ մարդ չ'աղօթէր այն

պէս, ինչպէս հարկն է։ «Խնդրէք և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք»։ Յակ. Դ. 3։

Ուրեմն՝ մեր աղօթքն արժանաւոր լինելու համար պէտք է ունենայ այն զգացողութիւններն և պայմաններն, որք հարկաւոր են աղօթքին։

Աղօթքը պէտք է ասուի առ Հայր, առ Որդին և առ Հոգին Սուրբ, այն պատճառաւ, որ Աստուած ունի ամեն հարկաւոր կատարելութիւններ եւ կարող է մեզ լսել։ Նա է յաւիտենական անսահման Հոգի, որ կարող է լինիլ ամեն ժամանակ, ամեն մարդոյ մօտ, ճանաչել ամեն հարկաւորութիւն և լսել ամենայն աղօթք։ Նա է ամենաբարի, որ կարող է ունենալ գթութիւն բոլոր մարդկանց վերայ։ Նա է ամենակարող, որ կարող է լցնել բաւականացնել մեր կարօտութիւնը թէ հոգեւոր՝ և թէ մարմնաւոր։ Վերջապէս նա է ամենիմաց, որ կը ճանաչէ՝ թէ ինչ է հարկաւոր ամեն մարդոյ, գիտէ ժամանակը և օգնութեան ձեւը։ Ուստի՝ Սուրբ Գիրքը կը հրամայէ ճանաչել մի Աստուած, Արարիչ երկնի և երկրի և ծառայել նմա։ «Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես

եւ զնա միայն պաշտեսցես »։ Մատ. Դ. 10։

Աղօթքը պէտք է լինի առ Քրիստոս, վասն զի նա մի է ընդ Հօր Աստուծոյ եւ շատ օրինակ կը տեսնենք Աւետարանի մէջ, որ աղօթքը կ'ասուի առ Քրիստոս։ « Եւ քարկոծ առնէին զՍտեփաննոս, որ կարդայր եւ ասէր, Տէր Յիսուս, ընդակալ զհոգի իմ »։ Գործ. Է. 58։ « Զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս պատուեն զՀայրն »։ Յով. Ե. 23։

Մեր աղօթքն առ Հայր պէտք է լինի Քրիստոսի անուամբ, այսինքն նորա արժանաւորութեամբ եւ միջնորդութեամբ, վասն զի նոքա ստացանք Աստուծոյ ողորմութիւնը։ « Զի նոքա ունիմք զնուաճումն երկոքին միով հոգւով առ Հայր »։ Եփես. Բ. 18։ « Ասէ ցնա Յիսուս, Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք, ոչ ոք գայ առ Հայր, եթէ ոչ լինիս »։ Յով. ԺԴ. 6։ « Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ տայէ ձեզ »։ Յով. ԺԶ. 23։ Աղօթքով մեք կը յայտնենք մեր հաւատոյ մեծ գործքը եւ Քրիստոսին կը տանք իւր արժանի պաշտօնը եւ ցոյց կը տանք մեր հեզութիւնը, որով եւ կը

յայտնեմք թէ մեք անարժան եմք Աստուծոյ մօտենալու և ինքնին սատանայն ամենայն, ինչ որ կը խնդրեմք Աստուծմէ։ Ուրեմն՝ այս աղօթքը Քրիստոսի անուամբ է առաջին դիրքոյ, որով Աստուած կը լսէ մեզ։

Աղօթքը պէտք է լինի քաջի պրոյ, յոյսով և կախուած են բոլոր զգայարանութիւններն և պէտք է լինի ոչ թէ կարիքդրութիւնամբ և յանդգնութիւնամբ, այլ ապաշխարութիւնամբ և արդարութիւնամբ, որովհետև մեք կը կատարեմք մի մեծագոյն պարտաւորութիւն։ Աղօթքը պէտք է լինի փրկի, որովհետև մեք կը մօտենամք Հօր Աստուծոյ, որ կը սիրէ զմեզ և մեք եւս պարտական եմք սիրել զնա ամենն բանէ առաւել։ Աղօթքը պէտք է լինի ջերմեռանդութիւնամբ և ճշմարիտ ցանկութիւնամբ, որ ատանամք Աստուծմէ մեր խնդրուածքն։ Այս տեսակ աղօթքը ընդդէմ է մեղադիանց կեղծաւորութեան և տուտ բարեպաշտութեան, որք միայն շրթունքով կը պաշտեն զԱստուած եւ չ'ունին ջերմեռանդութիւն առ Աստուած։ Երբ կ'աղօթեմք, պէտք է մեք կոչմէն եւս աշխատիմք գործ դնել այն միջոցներն, զոր Աստուած մեզ կը

տայ, որպէս զի մեր գործքը և կեանքը հաճոյանան լինին մեր աղօթքին։

Աղօթքը պէտք է լինի մեծ ուշադրութեամբ, վասն զի մեք Աստուծոյ հետ կը խօսիմք։ Աղօթքը պէտք է լինի հնազանդութեամբ և խոնարհութեամբ, ինչ վիճակի մէջ որ գտնուի մարդ։ «Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»։ Մատ. ԻԶ. 39։ Աղօթքը պէտք է լինի պարզութեամբ և հեզութեամբ, ինչպէս կ'ասէ Դաւիթ մարգարէն. «Զրհնեցէք և սաղմոս ասացէք նմա, պատմեցէք զամենայն սքանչելիս նորա»։ Սաղ. ՃԾ. 2։ Աղօթքը պէտք է լինի հաւատարմութեամբ, այսինքն անկասկած հաւատալով, որ Աստուած չընայելով մեր անարժանութեան անպատճառ կը լսէ մեզ Քրիստոսի սիրոյ համար, ինչպէս ինքն խոստացաւ Սուրբ Գրոց մէջ։ «Ապա թէ ոք 'ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ, որ տայն ամենայնի առատապէս և ոչ նախատէ և տացի նմա։ Բայց խնդրեսցէ հաւատովք և մի երկմտեսցէ»։ Յակ. Ա. 5–6։ Այս վստահութիւնը ընդդէմ չէ հեզութեան և խոնարհութեան, վասն զի հիմնուած չէ մեր

վերայ և մեր արժանաւորութեան վերայ, այլ Աստուծոյ բարութեան վերայ և նոր բա Որդւոյ արժանաւորութեան վերայ։

Վերջապէս ապօթելու ժամանակ պէտք է շարժուած լինիմք ճշմարիտ սիրով առ Աստուած և առ մարդ և ցանկամք իմաստութեան։ Առանց այս պայմանների մեք կարող չ'եմք այնպիսի բան խնդրել, որ փառք լինի Աստուծոյ, Քրիստոսի և համայն ազգ քրիստոնեան։ "Ցիսուս ամբարձ զաչս իւր 'ի վերս և ասէ. Հայր, գոհանամ զքէն զի լուար ինձ"։ Յով. ԺԱ. 41։

Աղօթքի նիւթը մարդոյ կամքէն կախուած չ'է, վասն զի մարդ կարող է մոլորուիլ զանազան ցանկութեանց մէջ, և խնդրել այնպիսի բան, որ անպատուութիւն լինի Աստուածութեան եւ ինքս մարդկային կոչման։ Աստուծոյ կամքը պէտք է ուղղիչ լինի մեր խնդիրներուն և ոչ մի բան պէտք չ'է խնդրեմք հակառակ նորա կամաց։ "Եւ այն է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ"։ Ա. Յով. Ե. 14։

Ուսումնասիրելու մեք այս աշխարհի մէջ

ճանապարհորդ եմք, և կը բնակիմք առ ժամանակ մի և ոչ թէ յաւիտեան, և պէտք է մահով անցնիմք այս աշխարհէն միւս աշխարհն, ուր կը տպասէ մեզ՝ երջանիկ կամ ապերջանիկ վիճակ մեր այս տեղ գրած գործոց համեմատ։ Ուստի մեր իրն դրուածոց առաջինն պէտք է լինի այն ողորմութիւնն և շնորհքը, յորմէ կախուած է մեր փրկութիւնն և երջանկութիւնն ապառնի կենաց մէջ, ինչպէս կ'ուսուցանէ մեզ Քրիստոս. «Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա եւ այդ ամենայն յաւելցի ձեզ»։ Մտթ. Զ. 33։ Իսկ միւս ողորմութիւններն, որք ներկայ կենաց կը պատկանին, պէտք է մեր խնդրուածոց մէջ երկրորդական լինին և այն ևս չափաւորութեամբ։ Պէտք է խնդրել Աստուծոյ հովանաւորութիւնը մեր կենաց համար, վասն զի շատ անգամ մեք չը գիտեմք՝ թէ ինչ է ամենէն լաւը մեզ համար։ Մեր հաւատը կը լուսաւորէ մեր միտքը և կը բարձրացնէ մեր հոգին դէպ 'ի անմահական բարութիւններն։ Աւետարանը կը պատուիրէ, որ մեք ճանապարհորդ ճանաչենք զմեզ այս աշխարհի

մէջ։ Աստուծոյ խոստումներն, որք միշտ հոգեւոր են և հոգեւոր բարութեան կը վերաբերին, պարզ կը յայտնեն մեզ՝ թէ ինչ կամի Աստուած, որ մեր խնդրեցէք իրմէն։ Մեր Փրկչի տուած աղօթքը գեղեցիկ օրինակ է մեզ համար՝ թէ ինչ և ինչպէս պէտք է լինի մեր աղօթքը։

Պարզ պէտք է կրկնել իւր աղօթքը, երբ Աստուած չը կատարեր նորա առաջին խնդրուածքը, մանաւանդ այն ժամանակ, երբ նորա խնդրուածներն հոգեւոր են։ «Ցաւով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից ստէպ կացէք»։ Հռով. ԺԲ. 12։ Քրիստոս անիրաւ դատաւորի և բարեկամի առակներով երկու օրինակ տուաւ մեզ աղօթքը կրկնելու համար։ Ղուկ. ԺԱ. 5—11։ —ԺԸ. 2—9։

Որովհետեւ աղօթքն է ճեմ պարարոտութիւն եւ իրաւունք մեզ համար, այս պատճառաւ պէտք է լինի նա ամէն ժամանակ, ամէն պատահմանց մէջ։ Անդադար մարդ պէտք է բարձրացնէ իւր սիրտն առ Աստուած, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Անդադար աղօթս արարէք»։ Ա. Թես. Ե. 17։ «Ամենայն աղաղթիւք և խնդրուածովք աղօթս առնել

յաւիտենական ժամանակի հոգւով և ի նոյն տքնեալքիք ամենայն ժուժկալութեամբ և խնդրուածովք »։ Եփես. Զ. 18։ Անդադար աղօթելը կարող չ'է լինիլ ձայնով, զատուճառն որ՝ անդադար աղօթքն մ'էլ այլ ինչ է, եթէ ոչ ղարժուն հոգւոյ առ Աստուած։ Անդադար աղօթելով՝ մարդ յոյց կը տայ իւր շնորհակալութիւնն Աստուծոյ և կ'ընծայէ նմա իւր կեանքն և կը լինի Աստուծոյ աչայ ուրջեւ։ Սա է իսկ և ճշմարիտ աղօթքն առ Աստուած։

Մարդասիրութիւնը կը պահանջէ մեզմէն աղօթել, ինչպէս մեզ համար, նոյնպէս և մեր ընկերներու համար։ Սուրբ Գիրքը նոյնը կ'ուսուցանէ մեզ։ Քրիստոս Տէրուն՝ կան աղօթքի մէջ կը պատուիրէ մեզ միմեանց համար աղօթել, նաև թշնամեաց համար։ « Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց և աղօթս արարէք ի վերայ ոտնոցիկ, որք լնկեն զձեզ և հալածեն »։ Մատ. Ե. 44։ « Եւ արդ՝ աղաչեմ նախ քան զամենայն, առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան »։ Ա. Տիմ. Բ. 1։

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հին ժամանակի խմաստունները սովորութիւն ունէին իրենց աշակերտաց տալ մի քանի համառօտ խօսքեր, որոց մէջ կը պարունակուէին այն ամենակարեւոր բաները, զոր մարդ պէտք է որոնէր այս աշխարհիս մէջ։ Այսպէս եւս Քրիստոսի աշակերտները խնդրեցին իրմէն ուսուցանել աղօթք, ինչպէս Յովհաննէսն ուսուցած էր իւր աշակերտաց։ Քրիստոս տրուաւ նոցա այս կարճառօտ աղօթքն, որ կ'անուանի ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ։

«Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողուցաք մեր պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմ-

մեզ 'ի չարէն. զի քո է արքայ-
ութիւն եւ զօրութիւն եւ
փառք յաւիտեանս. ամէն»։

Բայց 'ի Տէրունական աղօթքէն մարդ կարող է ունենալ և այլ աղօթքներ, իւր զանազան դրութեան համեմատ, ինչպէս կը տեսնենք Ցուրբ Գրոց մէջ։ Բայց ամէն աղօթք պէտք է Տէրունական աղօթքի հաւասար լինի, նորա պէս կարճառօտ և պարզ։ Տէրունական աղօթքը գերազանց է ամէն աղօթքներէ, որովհետեւ զայն տուած է մեր Տէր Յիսուս Քրիստոսն, և ոչ մի աղօթք կարող չ'եմք այնպէս վստահութեամբ ասել։

Տէրունական աղօթքը կը բաժանի երեք մասն — Յառաջաբան, Խնդրուածք և Վերջաբան։ Խնդրուածքները կը բաժանին վեց։ Առաջին երեքը հոգեւոր են, որք կը վերաբերին Աստուծոյ փառաց, մարդոյ գլխաւոր բարութեանն և հոգեւոր կեանքին. իսկ վերջին երեքն այն քանէրուն կը վերաբերին, որք յաստուկ մեզ հարկաւոր են մեր գլխաւոր բարութեանը հասնելու՝ այսինքն չափաւորութիւն աշխարհի վայելչութեանց մէջ, ներողութիւն ընկեր-

ըին եւ ազատութիւն 'ի մեղաց։

Նպատակն ՅՈՒԱՆՈՒԱՆԻ, որ կը սկսուի — Հայր մեր որ ի երկինս է, — է ծնանիլ մեր մէջ այն զգացողութիւններն, որով մեր աղօթքը հաճոյ լինի Աստուծոյ եւ մեք կարողանամք կատարեալ ջերմեռանդութեամբ մատուցանել Աստուծոյ մեր մէջ ինդրուածքը։

Յիսուս Քրիստոս իրաւունք տուաւ մեզ Հայր անուանել զԱստուած, որ այս քաղցրը անուամբ 'ի սկիզբն մեր աղօթքի ծը նուի մեր մէջ որդիական պատիւ առ Հայր։ Որպէս զի մեք ինչպէս որդիք սիրեմք այն ամենայն, ինչ որ փառք է մեր երկնաւոր Հօր համար, հնազանդիմք նորա կամաց եւ վստահութեամբ ապաւինիմք միայն նորա օգնութեանը։

Այս որդիութիւնը մեք կը ստանամք հաւատով 'ի Յիսուս Քրիստոս։ Որովհետեւ ասաց Քրիստոսի մեք համարձակութիւն չ'ունիմք զԱստուած Հայր անուանել. վասն զի մեր մեղքով արժանացած եմք նորա բարկութեանը և արդար պատժոյն։ Հայր բառին վերայ աւելցնելով ՝՝ Քրիստոս կը պատուիրէ մեզ աղօթել ինչպէս մեզ համար, նոյնպէս եւ ամեն

մարդոյ համար։ Կամի ծնանել մեր մէջ մարդասիրութեան և բարութեան զգացմունք, որ այլոց օգտի համար եւս այնպէս վաստուած լինիմք, ինչպէս մեր օգտի համար և մեր բաղդաւորութիւնը չը հիմնեմք այլոց ապաբաղդութեան վերայ։

Քրիստոս՝ Հայր Ամենասելէն յեսոյ. կ'աւելայնէ որ յերկինս է, ոչ թէ այն պատճառաւ որ Աստուած միայն երկինքն է, ոչ, վասն զի Աստուած ամենուրեք է. այլ այն պատճառաւ, որ աշխարհէս խլէ և բարձրացնէ մեր հոգին դէպ 'ի մեր երկնաւոր Հօր մեծութիւնը, փառքը և ամենակարողութիւնը, լցուցանէ մեր հոգին այնքան մեծ և բարձր պատուով, ինչքան մեծ և բարձր է երկինքը երկրէս։ Երկնից երեսը կը տեսնեմք Աստուծոյ մեծութեան և փառաց երեւելի նշաններն. ինչպէս են երկնային լուսաւոր մարմիններն, արեգակն, լուսին եւ աստեղք։ Երկնքի մէջ կը տեսնեմք հրեշտակներն եւ Աստուծոյ Ճշմարիտ պաշտողներն փառաւորուած և պսակուած նորա սիրով։ Այս մտածութիւնն է, որ կը խլէ մեր սէրը և մեր միտքը աշխարհի կապակցութիւններէն և կը վառէ մեր հոգին այն երկ-

նային վառաւոր և անանց երջանկութեան եռանդով. զոր պատրաստած է մեզ հաւատարիմ մեր երկնաւոր Հայրն. ուստի և կ'աղաչեմք. — Հայր մեր, որ յերկինս ես։

ԱՌԱՋԻՆ ԻՆԴՈՒԱԾՔՆ է — Սուրբ Երէց անուն։ Անուն բառը երբեմն կը նշանակէ զօրութիւն, պատիւ, հանգանակութիւն եւ ապաւաճպաղութիւն։ Այս նշանակութեամբ գործ կ'ածուի մկրտութեան ժամանակ։ Երբեմն կը նշանակէ կատարելութիւն առ Աստուած։ Այս նշանակութեամբ կ'ասէ Դաւիթ Գողիաթին. "Դուգաս 'ի վերայ իմ՝ սրով և գեղարդեամբ և ասպարաւ և ես գամ՝ 'ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց Հաւատացեալ Իսրայելի"։ Ա. Թագ. ԺԷ. 45։ Բայց ըստ մեծի մասին անուն բառն կը նշանակէ Ապաւաճ եւ նորա կապակցութիւններն։ Այս մտքով գործ կ'ածուի շատ տեղ Սուրբ Գրոց մէջ — Կոչել զանուն Տեառն։ Այս վերջին նշանակութեամբ գործ կ'ածուի և Տէրունական աղօթքի մէջ։

Սուրբ բառն երբեմն կը նշանակէ սուրբ առնել, ինչպէս կ'ասէ. "Հոգին սրբէ ըզմարդ"։ Երբեմն կը նշանակէ սուրբ պահել։ Այս մտքով կ'ասուի. — "Արքեա՛ զօր շա

բասթուն »։ Երբեմն կը նշանակէ ճանաչել և պարոնել ինչպէս սուրբ։ Խնդրել Աստուծմէ, որ նորա անունը սուրբ լինի, կը նշանակէ խնդրել իրմէն շնորհք ճանաչել զինքն, ունենալ ճշմարիտ դատողութիւն նորա կատարելութեանց վերայ, փառաւորել և ծառայել նմա ինչպէս արժան է, նորոգել մեր մէջ նորա պատկերը և նմանութիւնը և ընծայել նմա մեր հոգւոյ բոլոր զօրութիւնները։ Այնպէս որ նորա անունը անոպատիւ չը լինի մեր պատճառաւ, այլ գովուի եւ փառաւորուի մեզմով և մեր կեանքով։ Այս խնդրուածքը պէտք է առնենք մեք ինչպէս նորա փառաց և սիրոյ համար, նոյնպէս և մեր բոլոր ընկերներու փրկութեան համար։ Եթէ մեք այս խնդրուածքը կ'առնենք ջերմեռանդութեամբ՝ պէտք է մեր կոչմէն ելս դուրս ածենք զԱստուած ճանաչելու համար մեզ տուած բոլոր հնարքները, հնազանդ լինինք նորա խօսքին և նորա Սուրբ Հոգւոյ ազդեցութեանը, աշխատիմք հաղորդել մարդկանց մեր լոյսը և մեր զգացողութիւնները. ոչ թէ միայն խօսքով, այլ և մեր բոլոր կեանքով։ Եթէ մեք սուրբ չը պահենք Աստուծոյ անունը,

նա ինքն Սուրբ կը պահէ իւր անունը զարհուրելի և ահալի ձեւով, այն է անհնազանդներն և խստասիրտները պատժելով, ինչպէս պատժեց զՓարաւոն. «Եւ վասն այնորիկ պահեցայր, զի 'ի քեզ ցուցից զզօրութիւն իմ և զի պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր»։ Ելից. Թ. 16։

ԵՐԿՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՆ է — Եկեսցէ արքայութիւն քո։ Ասելով՝ Եկեսցէ արքայութիւն քո, պէտք չէ խմանալ Աստուծոյ այրքայութիւնը կամ թագաւորութիւնը աշխարհի վերայ, որ կը կատարուի նորա նախախնամութեամբ։ Այս նախախնամութեան թագաւորութեան համար կարելի չէ ասել — Եկեսցէ արքայութիւն քո. վասն զի, Աբսոլիւտ թագաւորութիւնն իւր սարսափելի վերայ միշտ կայ և կատարեալ է՝ թէ՛ ճանաչէն և հնազանդին նմա իրենց ազատութեամբ և թէ՛ չը ճանաչէն։ Այլ ասելով՝ Եկեսցէ արքայութիւն քո, պէտք է հասկանալ նորա բարոյական թագաւորութիւնը, նորա ընդհանուր արքայութիւնը, զոր Աստուած ունի իւր ճշմարիտ պաշտողաց վերայ Յիսուսին Քրիստոսին և որ Աւետարանի մէջ կ'անուանի Արքայութիւն Աստուծոյ, Արքայութիւն երկնից։

Այս աղքատութիւնը սկսաւ Քրիստոնէական կրօնի հաստատութեամբ, երբ մարդիկ լուսաւորուեցան Աւետարանաւ եւ հնազանդեցան Քրիստոսի, նովաւ եկան դէպ 'ի ճանաչողութիւն և ծառայութիւն Աստուծոյ։ Այս աղքատութիւնը կը պահանջէ կամաւոր հնազանդութիւն, բարեհաճ ոգի, և սէր հպատակներէն։ Բայց երկու արգելք կան, որք կը դժուարացնեն այս աղքատութեան գաղափարը և տարածումն։ Այս արգելքներըն են՝ եպիսկոպոսութիւն մարգիան և քարոզութիւն։ Ուստի՝ ասելով Եկեղեցի արքայութիւն, մեք կը խնդրենք Աստուծմէ, որ հեռացնէ այս արգելքները և աւելի մօտեցնէ զմեզ Աւետարանի պարզ ճանաչողութեան և տայ մեզ շնորհք հնազանդիլ նմա, որ թագաւորէ մեր սրտի վերայ սիրով, այնպէս որ՝ մեք դառնալով նորա հաւատարիմ՝ կարողանամք հասնիլ փառաւոր անմահութեան, ուր կը կոչէ զմեզ իւր Որդովն։

Եթէ մեք ջերմեռանդութեամբ կ'աղաչենք այս խնդրուածքը՝ պէտք է աշխատիմք հեռանալ ամեն բանէ, ինչ որ կարող է դժուարացնել և ուշացնել Աստու-

ծոյ թագաւորութեան գալուստն թէ՛ մեզ մէջ և թէ՛ այլոց։ Եթէ ներմուծանդ է մեզ խնդրուածքը՝ մեզ կը ջանամք դարձ դնել ամեն հնարք, որ կարող է առաջացնել այս թագաւորութիւնը և կը պատուիրամք ամեն բանով մեր Փրկչի Աստուածային և նորա կամքն ասելով — Եղիցի կամ։

Ասելով՝ այս ԵՐՈՒԴ ԽՆԴՐՈՒԱԾՔԸ — Եղիցի կամ։ որպէս յերկինս և յերկրի՝ — մեզ կը խնդրեմք Աստուծմէ, որ տայ մեզ շնորհք ամեն բանով հնազանդիլ նորա կամայ, թէ՛ չարչարանաց և թէ՛ համբերութեամբ։ Կը խնդրեմք Աստուծմէ, որ տայ մեզ շնորհք հնազանդիլ նմա, պահել նորա պատուիրանքներն եւ ընծայել նմա մեր կեանքը ամեն պատահմանց մէջ։ Այս խոնարհութիւնն, որ երբորդ խնդրուածքի նիւթն է, պէտք է լինի ջերմեռանդ սրտով, ընդհանուր, հաստատ, լի ուրախութեամբ եւ ջերմեռանդութեամբ, ինչպէս ունին հրեշտակներն Աստուծոյ համար երկնքի մէջ, զորս օրինակ կը տայ մեզ Փրկիչս Տէրունական աղօթիս մէջ ասելով — որպէս յերկինս։

Հրեշտակաց հնազանդութիւնը ուսուցած է մեզ օրինակ, որ մեք հնազանդու-

թեամբ աշխատիմք նմանիլ նոցա կատարեալ հնազանդութեան, որով կը հաստատուի մարդկութեան մէջ կարգ, հաւատարմութիւն, երջանկութիւն և այնու կ'ատնումք այն մեծ երջանկութեան ձաշակը, զոր Աստուած պատրաստած է իւր կամքը կատարողաց համար։ Այն ժամանակ մեք կարող եմք կատարել Աստուծոյ կամքը, երբ հեռանամք մեր կամքէն և միայն նորա կամքը ճանաչեմք պէտք, բարի, կատարեալ, այն բարի կամքը, որ կը տայ մեզ երջանկութիւն և որա համար կը խնդրեմք Աստուծմէ լուսաւորել զմեզ իւր գէղեցիկ պատուիրանները, որ մեք կարողանամք կատարելապէս իրեն հնազանդիլ։

Քրիստոս՝ բարձրացնելով մեր միտքը և մեր հոգին դէպ 'ի մարդոյ գլխաւոր երջանկութիւնն, որ է Աստուած, կը պատուիրէ մեզ խնդրել այն ամենայն, ինչ որ հարկաւոր է այս գլխաւոր երջանկութեանը հասնելու համար։ Եւ որովհետեւ՝ ոչ ինչ այնքան արգելք չէ, ինչքան աշխարհիս անչափաւոր հոգսերն և հոգին հաստատութեան և վայելչութեան աշխարհի, այս պատճառաւ Քրիստոս այս արգելք-

ներդը հեռայնելու համար կը պատուիրէ խնդրել Աստուծմէ ամենակալ հայր՝ ասելով — Զհայր մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր — որ է ՀԱՑԻՈՅ ԽՆԴՐՈՒԱԾՔ։

Այս խնդրուած հացը կը բովանդակէ իւր մէջ այն ամենայն, ինչ որ հարկաւոր է մեր կեանքին ամէն դրութեան մէջ։ Փրկիչս այստեղ կ'ուսուցանէ մեզ, որ մեք պէտք չէ ցանկանք և խնդրենք մեր տիսոյքէն առելի հարստութիւն։ "Այլ ունիմք կերակուր եւ հանդերձս՝ այնուհետև շատացուք ՝։ Ա. Տիմ. Զ. 8։ Աստուած կը տայ մեզ օրինաւոր ճանապարհաւ հարստութիւն., բայց մարդ պէտք չէ ինքն իւր հոգին մաշէ հարստութեան ցանկութեամբ։

Ասելով — Տո՛ւր մեզ — Փրկիչս մեր միտն կը բերէ, որ ամէն բարութեանց առաջին պատճառն Աստուած է։ Նա կը տայ մեզ ամէն բարութիւն, ինչ որ մեք ինքներս չենք կարող ստանալ, ոչ մեր հոգալով, ոչ մեր աշխատանքով, առանց նորա, ինչ որ հարկաւոր է մեզ այս աշխարհի մէջ կենալու կամ ապրելու համար։ "Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ՝ի դատեր վաստակին շինողք նորա։ Եթէ ոչ Տէր պահէ

գքաղաք՝ ընդունայն տքնին պահապանք նորա »։ Սաղ. ՃԻԳ. 1—2։ « Եւ տնկեցի, Ապողոս ջուր եւ, այլ Աստուած աճեցոյց։ Այսուհետեւ ոչ այն որ ինչ է, որ տընկեցն, և ոչ այն՝ որ ջուրն եւ, այլ որ աճեցոյցն Աստուած »։ Ա. Կորն. Գ. 6—7։

Այս հացը ոչ թէ միայն աղքատներն և չքաւորները պէտք է խնդրեն, այլ և հարուստները, վասն զի Աստուծոյ Նախախնամութիւնն է, որ կը տայ հարստութիւն և երբ կամենայ կը խլէ։ Նա կը տայ կենդ, առողջութիւն, որ ուրախանամք այս տուած կեանքով. իմաստութիւն, որ բարութեամբ անցնենք մեր կեանքը։ « Եւ ասէ ցնոսա, տեսէք և զգոյշ լերուք յամենայն ագահութենէ, զի ոչ եթէ 'ի մթերիս ընչից ուրուք իցեն կեանք նոցա »։ Ղուկ. ԺԲ. 15։

Որովհետեւ մարդոյ կեանքը իւր կամքէն չէ կախուած, ուրեմն՝ պէտք է որ Աստուած տայ առողջութիւն, հանգստութիւն և չափաւորութիւն, որ մեք կարողանամք ուրախ անցնել մեր կեանքը։ Մեք որ կը խնդրենք մեր Հայր Աստուծմէ, չ'ենք խնդրեր, որ այս հացը մեզ տայ անընդմիջապէս հրաշքով կամ սքանչելի

ձեռավ, այլ կը խնդրեմք, որ օրհնէ նա իւր Նախախնամութեամբ ամէն մեր բնական և օրինաւոր ճանապարհներն, որով կամիմք պահել մեր կեանքը, ինչպէս են ալիսպանդ, խրդ, հոգի ողորմիկան եւ պէրոյ։ Քրիստոս կ'ասէ մեզ. «Տուք եւ տացի ձեզ. չափ բարւոք, թափթաղուն, շարժուն, վերլուն՝ տացին 'ի գոգս ձեր, նովին չափով, որով չափէք, չափեսցի ձեզ ո։ Ղուկ. Զ. 38։

Ասելով զհաց Դր՝ կամի Քրիստոս մեզ պարզ ուսուցանել, որ այս հացը պէտք է լինի Դրը, այսինքն մեր օրինաւոր աշխատանքով, մեր ջանքով և մեր արդարութեամբ ճարած, առանց փնասելու և զրկելու զայլս. ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Քանզի մինչ առ ձեզ էաք՝ զայս պատուիրէաք ձեզ, թէ որ ոչն կամի գործել և կերիցէ մի։ Արդ՝ լսեմք զոմանց 'ի ձէնջ, թէ ստահակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալ հետաքրքիր շրջին, այնպիսեացն պատուէր ասեմք և աղաչեմք 'ի Տէր Յիսուս Քրիստոս, զի հանդարտութեամբ գործեսցեն և իւրեանց հաց կերիցեն ո։ Բ. Թես. Գ. 10—12։

Աստուած հայ հանապազորդ՝ Քրիստոս մեզ կը յայտնէ, որ ինչպէս օրական մշակը իւր աշխատանքով կրստանայ իւր օրական վարձը, նոյնպէս և ամէն մարդ պէտք է խնդրէ Աստուծմէ ամենօրեայ հաց և կրստանայ, քանի որ Աստուծոյ ծառայութեան մէջ է։ Ինչպէս Եբրայեցիք անապատի մէջ կրստանային ամէն օր մանանայ, որքան հարկաւոր էր ամէն տան կերակրուելու, այն չափաւորութեամբ պէտք է լինի մեր խնդրած հացն։ Միայն շաբաթ օրն Եբրայեցիք չ'էին հաւաքեր մանանայ։ Մեր Փրկիչը պատուիրեալ՝ որ ամենօրեայ հաց խնդրենք, կը պատուիրէ միանգամայն, որ այս խնդրուածքով իմանանք որ ամէն օր կախում ունինք Աստուծմէ; ամէն օր պարտական ենք հնարհակալ լինիլ նորա տուած ողորմութիւններէն և հնարհքներէն. Կամի մեր միտքը բերել մեր կենաց անստուգութիւնը, որ ոչ մի մարդ կարող չ'է հաստատ յուսալ թէ կ'ապրի արդեօք վաղուան օրն՝ թէ ոչ։ Կամի հեռացնել զմեզ մեր այս կենաց ապագայ անչափաւոր հոգերէն, որք 'ի զուր կը մաշեն մարդոյ հոգին։ Արդարեւ՝ կան այլ և այլ հարկա-

ւոր և օրինաւոր հոգեր, որք հեռաւանք են մարդոյ նախահոգութեանց, օրինակի համար. երկրագործը կը ցանէ, վաճառականը ապրանք կը պատրաստէ։ Այսպիսի հոգեորը օրինաւոր են, եթէ ունենան իրենց մէջ չափաւորութիւն և համաձայն լինին Աստուծոյ կամաց։ Այն հոգեորէն Քրիստոս զմեզ կրգուշացնէ, որք կը վերաբերին հեռու ժամանակներու և ծրնունդ են ազահութեան և աշխարհային վայելչասիրութեան և որոց հանելու համար գործ կը դրուին շար հնարքներ։ "Մի այսուհետեւ հոգայջէք վասն վաղուն, զի վաղիւն վասն իւր հոգասցի, շատ է աւուրն չար իւր։ Մատ. Զ. 34։

Մեր Փրկիչն ուսուցանելով մեզ այս խնդրաւածքով, որ խնդրեմք մեր կենաց ամենահարկաւոր պիտոյքը՝ կ'ուսուցանէ միանգամայն չափաւորութիւն և հեռանալ աշխարհային վայելչասիրութենէ։ Եւ երբ մարդ կը հասնի այն երջանիկ դրութեան, որ ամեն բան Աստուծմէ կը սպասէ և բաւական կը համարի, ինչ որ Աստուած օրուան մէջ կը տայ, այն ժամանակ ազատութեամբ կը բարձրացնէ իւր սիրտն առ Աստուած և կ'ընծայէ նմա

սաեալով՝ — Թո՛ղ մեզ ըստրիս մեր։

Ասելով՝ — Թո՛ղ մեզ ըստրիս մեր, որ-զիս և մեր Լուսո-մի մերոց պարպանաց — որ է ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔ, մեք կը խնդրեմք Աստուծմէ, որ զմեզ չը պատռէ մեր մեզաց համեմատ։ Կը խոստովանիմք մի և նոյն ժամանակ, որ մեք չենք կարող մատանիլ բնիկ նպատ ողորմութեան, եթէ չը թողումք մեր պարտապանաց պարտքը, որք զմեզ վշտացուցած և նեղած են։ Ամեն մարդ պէտք է խնդրէ այս թողութիւն Աստուծմէ, որովհետև ամենքս մեղսաւոր ենք Աստուծոյ առաջ։ Նա և Աստուծոյ ողորմութեան, թէպէտ և հաշտուած են և արդարացած Քրիստոսի, քսոյդ նոքա եւս պէտք է նոյնպէս խնդրեն թողութիւն, ոչ թէ միայն իրենց մեղքը միտք բերելու, հեղութեան մէջ մնալու և ճանաչելու համար, որ փրկուած են Աստուծոյ ողորմութեամբ, այլ և այն պատճառաւ, որ նոքա եւս ողորմ պէտք կամ ողորմ են շատ անգամ մեղաց մէջ ընկնիլ։ Այս թողութիւնը ստանալու համար պէտք է խնդրեմք Աստուծոյ օգնութիւնը Քրիստոսի անունով, Ճշմարիտ հաւատով և ջերմեռանդն ապաշխարութեամբ։

Փրկիչն յատուկ մեզ կ'ուսուցանէ այս աղօթքով, որ ինչպէս մեք կամիմք, որ Աստուած մեզ թողութիւն տայ. նոյնպէս և մեք պէտք է թողութիւն տանք այլոց։ Այս պատուիրանքը ոչդար է, իսկ փոխիալ է և համայն է արդարութեան և սիրոյ։ Մեք ուրեմն պարտաւոր եմք մի մեանց յանցանքն թողուլ քան թէ Աստուած՝ մերոյ, որովհետև մեր անհնազանդութիւնը անթիւ է և աւելի մեծ Աստուծոյ առաջ, քան այլ մարդկանց մեր առաջ և մանաւանդ որ շատ անգամ մեք ինքներս պատճառ եմք այլոց յանցաւորութեան։ Մեծ կուրութիւն է խնդրել Աստուծմէ ողորմութիւն և թողութիւն մեր մեղաց համար և մի և նոյն ժամանակ անողորմ եւ խստասիրտ լինիլ մեր եղբարց դէմ. և չը թողուլ նոցա յանցանքն։ Քրիստոս այս գեղեցիկ առակով օրինակ կը տայ մեզ. «Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ հաշիւ առնուլ 'ի մէջ ծառայից իւրոց։ Եւ երբոր սկսաւ առնուլ՝ մատուցաւ առն ոմն պարտական մի բիւր քան թարդ։ Իբրեւ չունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէր նորա ըստ

կին նորա և զորդիս նորա և զամենայն որ
ինչ և ունիցի՝ և հաստուցանել։ Եւ ան-
կեալ ծառայն երկիրպագանէր նմա՝ և ա-
սէր. Երկայնամիտ լեր առ իս և զամենայն
հաստուցից քեզ։ Գթացեալ տէր ծառային
այնորիկ՝ եւ արձակեաց զնա։ Եւ ելեալ
ծառայն և եգիտ զմի ի ծառայակցաց իւ-
րոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան.
և կալեալ զնա խեղդէր զնա և ասէր. Հա-
տո՛ւր ինձ զոր պարտիս։ Արդ անկեալ ծա-
ռայակցին՝ առ ոտս նորա աղաչէր զնա և
ասէր. Երկայնամիտ լեր առ իս եւ հա-
տուցից քեզ։ Եւ նա ոչ կամէր, այլ չը-
գաւ սրկ զնա ի բանտ, մինչեւ հատուցցէ
զպարտսն։ Իբրեւ սեսին ծառայակ-
ցիք նորա որ ինչ եղեւն տրտմեցան յոյժ
եւ եկեալ ցուցին տեառն իւրեանց զամ-
ենայն որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց
զնա տէրն իւր և ասէ՝ Ծառայ չար, զա-
մենայն զպարտսն թողի քեզ վասն զի ա-
ղաչեցեր զիս։ Իսկ արդ՝ ոչ էր պարտ և
քեզ՝ ողորմել ծառայակցին քում, որպէս
և ես քեզ ողորմեցայ։ Եւ բարկացեալ տէ-
րն նորա մատնեաց զնա դահճին, մինչեւ
հատուսցէ զամենայն զպարտսն։ Նոյնպէս
և Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ.

եթէ ոչ թողուցուք խրատքանչիւր եղբօր իւրում՝ ի սրտէ ձերմակ գյանցանս նոցա ։
Մատ. ԺԸ. 23—35։

Այս առակը պարզ մեկնութիւն է հինգերորդ խնդրուածոց, որոյ մէջ ուրիշ ներսու մեղքը մեր առաջն է դրուած իբրեւ պարտք։ Ով որ այս աղօթքը կ'ասէ առանց թողնելու այլոց յանցանքը, նա ինքն իրեն հակառակ է։ Որովհետեւ ասելով — Թող դեղ, մեք ոչ թէ միայն մեր անձին համար կը խնդրենք, այլ և ամենուն համար, որոց մէջ են ուրեմն և մեր պարտապաններն։ Աստուած թողութիւն չը տար այն մարդկանց, որք իրենց եղբայրց յանցանքը չ'են թողուր։ Ասելով այս աղօթքը մեք ոչ թէ միայն կը պարտաւորիմք թողութիւն տալ այլոց, այլ և կը պարտաւորիմք այնքան անգամ թողութիւն տալ, որքան կամիմք, որ Աստուած թողութիւն տայ մեր յանցանաց։ Որովհետև մեք կը ցանկանք, որ Աստուած ներէ մեր բոլոր մեղքերը և յանցանքները. ուրեմն մեք եւս պէտք է ծածկենք մեր սիրով այլոց մեղքը և յանցանքը։ Պէտք է ներենք մինչեւ յեւթանասանեկին եօթն անգամ. այսինքն անվիճ, ինչպէս կ'ասէ Քրիստոս,

և Յայնժամ մատեան առ նա Պետրոս և ասէ. Տէր, քանիցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ եւ թողից նմա, մինչեւ յեօթին անգամ։ Ասէ ցնա Յիսուս, ոչ ասեմ քեզ թէ մինչեւ յեօթին անգամ։ այլ մինչեւ յեօթանասնեկին եօթին անգամս։ Մատ. ԺԸ. 21—22։

Ինչպէս կամիմք, որ Աստուած թողութիւն տայ մեզ կատարելապէս, ոչ թէ միայն պատժէն ազատելով՝ այլ եւ կրկին տալով մեզ իւր ողորմութիւնն և սէրը, նոյնպէս և ամենայն Քրիստոնեայ պէտք է թողու իւր պարտապանի յանցանքը և կրկին սիրէ զնա և այպէս կատարէ իւր մարդասիրութեան պարտքը։

Վ. ԵՅԵՐՈՐԴ ԽՆԴՐՈՒԱԾՔՆ է — Ե՞ — Մի՛ փոխիր զքեզ ի փոյթ-ի՞ն, այլ երկի՛ զքեզ ի ըրէն — ։ Ասելով — Մի՛ փոխիր զքեզ ի փոյթ-ի՞ն — պէտք է իմանալ, որ կայ երկու տեսակ փորձութիւն։ Մի փորձութիւնը կը տայ մեզ Աստուած, որ երեւցնէ մեր սէրը, մեր հաւատը եւ մեր համբերութիւնը այլ մարդկանց։ Այս փորձութեամբ կը փորձուէին առաքելքն և աստուածապաշտ մարդիկ, որ նոցա հաւատը, սէրը և համբերութիւնը օրինակ դառնար այլոց։ Այս

պէս փորձուեցաւ Յովսէփ և օրինակ դարձաւ Ողջախոհութեան։ Այսպէս փորձուեցաւ Յովբ եւ անուանեցաւ Հայր համբերութեան։ Իսկ միւս փորձութիւնն է բոլորովին հակառակ Աստուծոյ կամաց և կը տանի դէպ 'ի մեղքը։ Առաջին փորձութիւնը կը գայ մեզ Աստուծմէ, որ կամի փորձել մեր խոնարհութիւնը, մեր հաւատը, մեր սէրը և մեր համբերութիւնը, երբեմն բաղդաւորութեան մէջ եւ երբեմն ապաքաղդութեան, երբեմն զանազան պատահմանց մէջ եւ երբեմն կոչելով զմեզ, որ մեք մեր անձնազոհութեամբ կատարեմք մեր մեծ պարտաւորութիւնն առ Աստուած եւ առ մարդ։ Վերջապէս Աստուած տալով մարդոյն անձնիշխանութիւն՝ կը համբերէ և այն փորձութեանց, որ յառաջ կը գան, ոչ թէ Աստուծոյ կամքէն, այլ մեր անձնիշխանութեան չարաչար գործածութենէն եւ մեր փրկութեան թշնամիէն — սատանայէն. ինչպէս կ'ասէ Յակոբոս Առաքեալն. «Երանի՜ նոր փորձի առ յիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատրեալ։» Յակ. Ա. 14։

Թէպէտ մեք կ'ասենք — Մի՛ պանիր ընդ

'ի փոյթ-ի՞ն — բայց այսու պէտք չ'է հաս-
կանալ, թէ Աստուած է ոանող դէպ 'ի
մեղքը կամ փորձութիւնը, «Մի՛ ոք որ 'ի
փորձութեան ասիցէ, թէ յԱստու-
ծոյ փորձիմ՝, զի Աստուած անփորձ է չա-
րաց, փորձէ՛ նա՝ և ոչ զոք ոչ։ Յակ. Ա. 13։
Ընդհակառակն՝ Աստուած միշտ կամի հե-
ռացնել զմեզ փորձութենէ խղճմտանքի
ձայնով և իւր սուրբ պատուիրանքներով։
Մի՛ պանիր զքեզ 'ի փոյթ-ի՞ն ասելով՝ պէտք
է հասկանալ այնպէս, թէ արժան է
Աստուծոյ բնութեանն և նորա կամացը,
որ միշտ սուրբ է, բարի է և արդար առ
մարդն։ Աստուծոյ համբերութիւնը, Աս-
տուծոյ մասնելն զմարդ իւր անձնիշխան
կամաց և մարդոյ անձնիշխանութեան չա-
րաչար գործածութիւնը Սուրբ Գրոց մէջ
տեղ տեղ կ'ասուի — Խոպոյոյ Ապրաաջ,
Ֆարաոյ Ապրաաջ և այլն։ «Եւ խստացոյց
Տէր զսիրտն Փարաւոնի և ոչ լուաւ նո-
ցա, որպէս եւ ասաց Տէր ցՄովսէս։
Ելից. Թ. 12։ «Խօսեցաւ Տէր ընդ Մովսի-
սի և ասէ, մնա՛ առ Փարաւոն, զի ես
խստացուցի զսիրտ նորա եւ զսիրտ ծա-
ռայից նորա, զի կարգասցեն նշան-
քս իմ 'ի վերայ նոցա։ Ելից. Ժ. 1։ Այս

խոսքով ապէսք է խմանալք, որ Աստուած կը հասնիցուք այս աշխարհի մէջ այն իրաստութեանն ու թշնամութեանը, որ մարդ կ'առնէ ընդդէմ Աստուծոյ։

Առելով — Մի՛ փոքր ըմբռ՝ ի փոխարէն — չ'եմք խնդրեր, որ փորձանաց մէջ չը ընկնիմք, որովհետեւ ստեղծուած եմք ազատ և ոնձնիշխան և կաշուած եմք բարին չարէն ընտրելու՝ այս փորձութեամբ ի աշխարհի մէջ։ Չ'եմք խնդրեր, որ Աստուած հանէ զմեզ փորձութենէ և յաղթող առնէ զմեզ փորձութեանց՝ առանց մեր գործակցութեան և աշխատութեան, վասն զի Աստուած ինքն կամի, որ մեք գործակից լինիմք իրեն. «Զի Աստուծոյ գործակից եմք», կ'ասէ Պօղոս Առաքեալն. Ա. Կոր. Գ. 9։ Այլ կը խնդրեմք Աստուծմէ, որ յաձախ չը տայ մեզ փորձութիւններ և մեր կարողութենէն ի վեր։ Եւ եթէ կամի տալ այնպիսի փորձանքներ, չը թողու զմեզ մեր ոկարութեան յուսով, այլ տայ ողորմութիւն եւ շնորհք, որ կարողանանք կրել այն փորձանքները եւ այսու փառաւորուի Աստուծոյ անունը և մեք արժանանանք նորա փրկութեանն։ Այս յուսացուած ողո-

ամութիւնը կրստանամք Աստուծմէ, եթէ խնդրեմք բարի եւ հաւատարիմ սրտով. ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն. «Փառաւորութիւն 'ի ձեր վերայ ոչ է եկեալ՝ բաց 'ի մարդկանէ, այլ հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ 'ի փորձութիւն առաւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ փորձութեանն եւ զելքն, զի համբերել կարասջիք»։ Ա. Կորն. Ժ. 13։

Այսպէս ուրեմն՝ մեր փորձութեան մէջ մեր յոյսն Աստուծոյ վերայ դնելով կը յաւելուսք — Այլ երկի՛ղեղ 'ի լրէն — այսինքն այն չար հոգիէն, որ փորձելով կը տանի զմեզ դէպ 'ի չարութիւն։ Կը խնդրեմք Աստուծմէ, որ հանէ զմեզ մեղացց իշխանութենէն, որ Սուրբ Գրոց մէջ կ'անուանի զօրութիւն սատանայի. միշտ աղաւոտէ զմեզ մեր փրկութեան թշնամիէն, երբ մեր ապաքաղաքութեամբ կ'ընկնինք նորա որոգայթի մէջ։ Կը խնդրեմք որ Աստուած ապայ մեզ կեանք և զօրութիւն ազատուիլ մեր մեղքէն և դառնալ նորա հաւատարիմ պաշտօնեայ, ինչպէս պարտական ենք։

Այս խնդրուածքը — Այլ երկի՛ղեղ 'ի լրէն — առաջին խնդրուածոյ հետե-

ւանքն է։ Եթէ չը խնդրեմք ազատութիւն եւ փրկութիւն այս թշնամու ձեռքէն, կը նշանակէ որ ջերմեռանդութեամբ չ'ուզեմք խնդրած մեզոց թողութիւն եւ տակաւին անզգաստ եմք մեր չարութեան մէջ։ Անպատուազ է թողութիւն խնդրելն՝ եթէ չը հեռանամք չարութենէ եւ չը մօտենամք առաքինութեան։

Ուրեմն՝ զգալով մեր տկարութիւնը եւ թերութիւնը, որով կը փորձուինք մեր չար կոչմն պատած թշնամիներէն, աշխարհի որդիներէն, մեք չ'ուզեմք կարող դիմանալ, եթէ Աստուած մեզ հետ չը լինի. բայց եթէ Աստուած մեզ հետ է, ով է մեզ հակառակ։

Աստուած է, որ ներգործութիւն ունի բոլոր բնութեան վերայ։ Նա է, որ կը ներգործէ մեր հոգւոյ եւ սրտի վերայ ապանց խլելու մեր ազատութիւնը։ Երբ կ'աղաթեմք Աստուծոյ՝ պէտք է խոհեմ եւ արթուն լինիմք փորձութիւնը ճանաչելու եւ հեռանալու։ Պէտք է գործ դնեմք Աստուծոյ տուած ամէն օգնութիւններն եւ հնարքները, եւ այնպէս շարժուիմք մեր փրկութեան ճանապարհի վերայ, որ ոչ թէ միայն Աստուած լինի պատճառ մեր

փրկութեան իւր օգնութեամբ, այլ եւ մեք՝ մեր աշխատութեամբ գործակից լինելով Աստուծոյ։ Այսպէս կը պատուիրէ մեզ մեր Փրկիչն ասելով՝ «Արթուն կացէք եւ աղօթս արարէք, զի մի անկանիցիք 'ի փորձութիւն»։ Մաթ. ԻԶ. 41։ Եթէ մեք ջերմեռանդութեամբ կը խնդրեմք Աստուծմէ, որ փրկէ զմեզ եւ մեր ընկերն 'ի չարէն՝ պէտք է ուրեմն աշխատիմք հեռացնել, ինչպէս մեզմէ, նոյնպէս եւ մեր ընկերներէն փորձութեան ամէն պատճառներն, որ ոչ մեք ընկնիմք փորձութեան մէջ եւ ոչ նոցա համար կոխտուեան պատճառ լինիմք, փորձելով եւ գայթակղեցնելով մեր չար ցանկութեամբ։

Տէրունական աղօթքը կը վերջանայ այս խօսքերով — Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեան յաւիտենից, ամէն։ Այս ՎԵՐՋԱԲԱՆԸ մեզ կը յայտնէ՝ թէ ինչո՞ւ համար եւ ի՞նչ պատճառաւ կ'աղօթեմք Աստուծոյ եւ ինչո՞ւ կ'ասեմք այս աղօթքը պապանակ, հեղութեամբ, հաւատարմութեամբ։ Ո՞ւմ կարող է ուղղել մարդ իւր աղօթքն եւ յուսամէ կարող է սպասել փրկութիւն եւ երջանկութիւն, եթէ ոչ այն ամենակարող Էակէն, որ բոլոր տիե-

զերաց թագաւորն է, որ միայն ունի փառք և իշխանութիւն և որոյ թագաւորութիւնը յաւիտենական է։ Միայն նորա աղօթութիւնը պէտք է որոնեմք աշխարհի մէջ յաւիտեան յաւիտենից։

Այս երկու ցաւիտեանները կը նշանակեն Աստուծոյ ամենակալութիւնն աշխարհիս վերայ։ Մի ցաւիտեանը կը նշանակէ աշխարհիս ստեղծուելէն առաջ, իսկ միւսն աշխարհի և ժամանակի ստեղծուելէն յետոյ, այսինքն երկրորդ Գալուստն։ Այս պէս ուրեմն՝ աշխարհի մի ծայրէն մինչև միւս ծայրն Աստուծոյ կը պատկանի Արքայութիւն և Զօրութիւն և Փառք։

Իսկ ամէն կը նշանակէ ճշմարիտ կամ իսկապէս, երբ կը դրուի նախադասութեան մէջ կամ՝ 'ի սկիզբն։ Բայց եթէ վերջն դրուի, ինչպէս է Տէրունական աղօթքից մէջ, կը նշանակէ կատարեալ հաստատութիւն, որ կը լսէ Աստուած մեր խնդրուածքը, կը կատարէ մեր ցանկութիւնը և ամենայն ինչ կը դարձնէ 'ի փառս իւր։

Այս Տէրունական աղօթքը մեծ է և ճշմարիտ աստուածային աղօթք, որուհետև իւր մէջ կը բովանդակէ մի քանի խօսքերով պարզ խնդրուածներ, որք կը

վերաբերին ամենակարեւոր հնարհաց։ Այս խնդրուածոց կարգը և չափը կը տայ մեզ ճշմարիտ ճանաչողութիւն և կ'ուսուցանէ որոնել և խնդրել առաւել այն՝ ինչ որ կը վերաբերի Աստուծոյ փառաց և մեր հոգւոյ փրկութեանն։ Այս Տէրունական աղօթքը կարճ կը յայտնէ մեզ՝ թէ ինչ պէտք է խնդրել Աստուծմէ և ինչ զգայողութիւն պէտք է ունենալ աղօթելու ժամանակ։

Այս աղօթքի զանազան մասերը մեր աչաց առաջ կը ներկայացնեն հաւատոյ մեծ ղատուիրանները և կը հնչեն նորա ներգործութիւնը։ Մեր միտն կը բերեն Քրիստոնէի գլխաւոր պարտաւորութիւնը—Մէր ա՝ Աստուած և ա՝ ընկերն—և կը տան կենաց գեղեցիկ կանոն։

Եթէ մեք ջերմեռանդութեամբ կ'ասեմք այս Տէրունական Աղօթքը՝ պէտք է ուրեմն մեր կեանքն ևս վարել համաձայն մեր խնդրուածոց։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԻ ՎԵՐԱՑ ԱՌՀԱՍԱՐԱԿ

Նշանակութիւն Կրօնի 5
Կարեւորութիւն Կրօնի 6
Հին Կրօնի 8
Հաստատութիւն Կրօնի
» Մտքով 8
» Խղճմտանքով 10
» Ընդհանուր խոստովանութեան մասին
» Նոյն ազգաց 13
» Աստուածաշունչ Գրքով 13
Հին և Նոր Կտակարան 18
Աւանդութիւն 21
Սուրբ Գիրքն Աստուածային է 23
Հարկաւորութիւն ուսման Սուրբ Գրոց 30

ՀԱՒԱՏՈՑ ՎԵՐԱՑ ԱՌՀԱՍԱՐԱԿ

Նշանակութիւն Հաւատոյ 33
Հին Հաւատոյ 34
ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՑ 43
Առաջին մասն Հանգանակի — Հաւատամք Ի Մ Աստուած և այլն 47
Կատարելութիւնք Աստուծոյ 51
Արարչագործութիւնք Աստուծոյ 62
Նախախնամութիւն Աստուծոյ 68
Երկրորդ մասն Հանգանակի — Հաւատամք Եւ Ի Մ Տէր Յիսուս Քրիստոս , և այլն 79

Երրորդ մասն Հանդամանքի — Հաստատմ. և Ի Սուրբ Հոգին, և այլն 105
Չորրորդ մասն Հանդամանքի — Հաստատմ. և Ի մի միոյն ընդհանրական և առաքելական Սուրբ Եկեղեցի, և այլն . 117
ԻՈՐՀՈՒՐԴ ԵԿԵՂԵՑԻՈՅ 123
Խորհուրդ Մկրտութեան 123
» Դրոշմի 129
» Աստուածաբանութեան 132
» Հաղորդութեան 137
» Անմահութեան 144
» Զհոգեւորութեան կամ կարգի 146
» Ծննդեան Հիւանդաց 147

ԱՂՕԹՔԻ ՎԵՐԱՑ ԱՌՀԱՍԱՐԱԿ

Նշանակութիւն աղօթքից 154
ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ 168
Յաւաղչաբան Տէրունական աղօթքից Հայր մեր որ յերկինս է 170
Առաջին խնդրուածք Սուրբ Եկեղի անուն կամ . . . 172
Երկրորդ խնդրուածք Եկեղի արքայութիւն կամ . . . 174
Երրորդ խնդրուածք Եղիցի նախ կամ . որպէս յերկինս . 176
Չորրորդ խնդրուածք Զհաց մեր հանապազորդ . . . 178
Հինգերորդ խնդրուածք Եւ լուր մեզ զպարտիս մեր . 183
Վեցերորդ խնդրուածք Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն 187
Եվերջաբան Տէրունական աղօթքից Զի քոյ է արքայութիւն և 193

ԵՐԵՍ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
20	13	չը մատներ	չը մատներ
32	9	Ա. թագ. գ. 8։	Ա. թագ։ գ. 9։
36	10	Ամբարիշտ	ամբարիշտ
51	1	Յով. ժդ. 6։	Յով. ժդ. 6։
53	3	Սաղ. ԺԸ. 3։	Սաղ. ԻԸ. 3։
60	13	Հով. դ. 2։	Հով. գ. 2։
64	1	որբուԹեան	որբուԹեան
65	7	Մաս. զ. 14։	Մաս. զ. 10։
65	14	Ա. Պետ. բ. 4։	Բ. Պետ. բ. 4։
66	16	ասիրէ	տիրէ
81	18	փառաւորեմք	փառաւորեմք
102	11	կոան	կողմն
102	26	կ'օգնէ	կ'օգնէ
120	15	Գրիատոսի	Գրիատոսի
128	11	կ'արգիլուէին	կ'արգիլէին
159	26	չ'աղօԹէր	չ'աղօԹէր